



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

20916

20917

20918

20919

20920

891.99.00

7-15

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԶԻՕՍԱԼԻ

Տ Ե Տ Ր Ը Կ Ն Ե Ր

ԻՐ.

ԲԱՐՈՅԵԿԱՆ

Թ Ը Տ Ր Ն Ե Ր

Տ Գ Ղ Ո Ց

ԿՐԹՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հ Ա Տ . Բ .



Վ Ի Է Ն Ն Ը

ՊԱՇՏՊԱՆ Ս . ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԱՆՔԸ

1852 . ՌՅԱ .

1002
2557

4704

ገጽ ፩

የገጽ ገጽ

፩ ፩ ፩

ገጽ ገጽ ገጽ ገጽ ገጽ ገጽ ገጽ ገጽ ገጽ ገጽ

Ա Ն Չ Ի Ն Ք

ՊՐ . ՎԱՀԱՆ :

ԱՏՈՄ , ՊՐ . Վահանին մեծ որդին :

ԲԱԲԿԷՆ , ՊՐ . Վահանին պզտիկ որդին , շիխօսիր :

ԳԱՐԵԳԻՆ , ՊՐ . Վահանին քեռորդին , Ատոմին տարեկիցը :

ԳՐԻԳՈՐ , Գարեգինին եղբայրը , Բարկենին ընկերը :

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ , ՊՐ . Վահանին հին կառապանը :

ԾԱՌԱՅ ՄԸ :

Տեսարանը ՊՐ . Վահանին ամառանոցին մեջն է :

Կ Ա Մ

Ի Ա Ր Ե Ս Ր Տ Ո Ի Թ Ի Ի Կ

Տ Ե Ս Ի Լ Ա

ՊՐ. ՎԱՀԱՆ, ՅԻՐԻԿԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ:

Ահաւասիկ, ուրիշին զաւելըները նայիլ ուզելուն պատուղը: . . . Ան Գրիգորը, որչափ կը սիրէի. կարծեմ իմ աղոցմէս աւելի սէր ունէի վրան. եւ թշուառականը հիմակ ասանկ ապուր կ'ուտէ կոր: . . . Բայց զինքն իմ Բաբկենէս աւելի սիրելուս պատիժն է: . . . Սակայն ստոյգ է որ սիրոյ ալ արժանի էր. ինչ աշխուժութիւն, ինչպիսի բարեսրտութիւն, որչափ արիութիւն ունէր: Կարծես թէ մարդ զինքը սիրելու կը ստիպուէր: . . . Արդեօք ինչպէս եղաւ որ ասանկ աւրուեցաւ: . . . Ա՛լ ամենեւին երեսը տեսնել չեմ ուզեր:

Տ Ե Ս Ի Լ Ի

ՊՐ. ՎԱՀԱՆ, ԳԱՐԵԳԻՆ

ԳԱՐԵԳԻՆ

Սիրելի մօրեղբայր, զիս ուզեր էք. ինչ կը հրամայէք:

ՊՐ. ՎԱՀԱՆ

Եկուր, եկուր. քու պատուական եղբօրմէդ աղէկ աղէկ լրեր կան:

ԳԱՐԵԳԻՆ՝ ԿՆԱՅԵԼԷԼ:

Գրիգորէն:

ՊՐ. ՎԱՀԱՆ

Առ, կարդա սա Բաբկենին նամակը. . . կամ լաւագոյն է որ ես կարդամ, դուն մտիկ ըրէ: (Ալ կարդայ:)

«Սիրելի հայրս: Արնաք ձեզմէ երեւակայել թէ որչափ դժուարին է ինձի եւ ինչպէս մեծ ցաւ կը պատ-

Ճառէ՛ որ կը ստիպուիմ անհաճոյ լըեր գըել . բայց ի՛նչ
ընեմ . աւելի աղէկ է որ ինծմէ լսէք , քան թէ ուրիշ
օտարականէ մը : Մեր սիրելի Գրիգորը . . . » : Հա՛ ,
ստուգիւ սիրուելու արժանի : «Մեր սիրելի Գրիգորը խել
մը ժամանակէ վեր սկսած էր խիստ գէշ ընթացք մը
բռնել : Քանի մը օր կայ իրեն աղաչեցի որ ժամացոյցը
նայի : Պատասխան տուաւ որ վրան չէ , եւ երբ որ ուր
ըլլայը հարցուցի , պատասխանեց որ ժամագործին քովն
է : Այլայլութենէն ու չուզելով մը պատասխան տալէն
գուշակելով որ ասոր տակը բան մը պիտ' որ ըլլայ , շուտ
մը նշանակած ժամագործին գացի . ի՛նչ կ'ըսէք , զըու-
ցածը բոլոր սուտ է եղեր : Եւ երբ որ ասոր վրայ զինքն
եղբայրաբար յանդիմանեցի նէ , ի՛նչ պատասխան տայ
աղէկ . ժամացոյցս եղած տեղն՝ իմ քովէս աւելի ապա-
հով է , չըսէ մի : Նոյնպէս քովէն քանի մը գըբեր ալ
պակսած են , եւ ո՛վ գիտէ ուրիշ ի՛նչ բաներ ալ ըրած
է , որ մարդ չիկրնար մէկէն իմանալ , » :

Ասոնց ի՛նչ կ'ըսես , Գարեգին :

ԳԱՐԵԳԻՆ

Ար խոստովանիմ որ ես ալ հրամանոցը չափ կը սրը-
գողիմ եղբօրս . ըրածներն անվայել ու վնասակար բա-
նէր են : . . . Բայց . . . :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Աեցիր , գեռ բոլորը չէ . ամենէն աղուորը վերջէն կու
գայ : (Աը կարգայ :)

«Սակայն վերջին ըրածն ամէնն ալ անցուց : Երէկ
չէ մէկալն օր կէսօրէն ետեւ առանց հրամանի դուրս
կ'ելլէ : Իրիկուն կ'ըլլայ , Գրիգոր չկայ . սեղան կը զար-
նէ , պառկելու զանգակ կը զարնէ , եկող գացող չկայ :
Երկայն չընեմ՝ բոլոր գիշեր վարժարանէն դուրս մնալէն
ետեւ՝ հազիւ երկրորդ առտու կու գայ : Արնաք ձեզմէ
իմանալ որ վարժապետներէն ի՛նչ ընդունելութիւն
գտաւ : Իրեն հարցուցին թէ ուր էր , գիշերն ուր էր
անցուցեր : Այլայլելով շփոթելով երկայն բարակ պատ-

Տուժիւն մի շինեց, որն որ ստուգիւ առասպել է: Բայց
 աս իրիկուն բոլոր վարժապետք վերատեսչին հետ խոր-
 հուրդ պիտ'որ ընեն, եւ թէ որ յանցաւոր գտնուելու
 ըլլայ նէ, ստուգիւ զինքը կը վաւրնտեն: Հիմակ ալ ելեր
 կը սպառնայ կոր որ եթէ ըսածներուն չեն հաւտար նէ
 կը փախչի հրամանոցը կու գայ, :

Հա՛, հա՛, թող գայ՝ որ գլուխը գալէքը տեսնէ: Աս-
 կէ ետեւ մէյ մ'ալ տունս ոտք կոխել չեմ տար. թող
 երթայ հո՛ն բնակի, ուր որ գիշերները կ'անցընէ: Աս-
 երախտ, այսչափ ժամանակ իրեն համար ըրածներս
 բաւական է. ասկէ վերջը ո՛չ երեսը կ'ուզեմ տեսնել,
 ո՛չ անունը լսել: . . . Աս ալ գիտցիր որ ամենեւին
 միջնորդութիւն, աղաչանք չեմ ընդունիր. բերանդ պի-
 տի չբանաս:

ԳԱՐԵԳԻՆ

Սիրելի մօրեղբայրս, չեմ կրնար եւ չեմ ուզեր զին-
 քը ջատագովել, թէ որ Բաբկենին գրածները բոլոր
 ստոյգ են:

ՊՐ. ՎԱՀԱՆ

Ի՛նչ, կը տարակուսիս. ուրեմն որդիս սո՛ւտ պիտի
 գրէ:

ԳԱՐԵԳԻՆ

Ստուգիւ մեծ յանդգնութիւն կ'ըլլար՝ թէ որ իր
 վրայ ասանկ բան մտածէի. բայց ո՛վ գիտէ մէջը ի՛նչ
 պարագայ կայ: Արդէն հրամանքնիդ ալ գիտէք որ մօր-
 եղբորորդիս միշտ ուրիշին գէմ խօսելու եւ փոքր
 պակասութիւնը մեծցընելու սովորութիւն ունի:

ՊՐ. ՎԱՀԱՆ

Գիտեմ. անոր համար ալ էր՝ որ զԳրիգոր այնչափ
 կը սիրէի, կրնամ ըսել որ Բաբկենէն աւելի կը սիրէի,
 վասն զի որչափ որ ստահակութիւն կ'ընէր նէ ալ միշտ
 բարեսիրտ էր, եւ ամէն առթի մէջ ստոյգ կը խօսէր:
 Բայց հիմայ . . . հիմայ կը տեսնեմ որ ամէն բան փո-

խուեր է: Մէյ մը տեսնես վարժարանին վերատեսուչն որդւոյս վրայ ինչ գովութիւններ կը գրէ:

ԳԱՐԵԳԻՆ

Ասոր վրայ այնչափ կ'ուրախանամ, որչափ որ սիրտս կը ցաւի ու կը տրտմիմ եղբօրս ընթացքին վրայ. սակայն . . . :

ՊՐ. ՎԱՀԱՆ

Քեզի մէյ մը զըուցեցի, հիմայ նորէն կը կրկնեմ, ասկէ վերջը վրան խօսք մը չեմ ուզեր լսել: Ա'ուզեն պատժեն, կ'ուզեն բանտարկեն, կ'ուզեն վաճառեն, ամենեւին հողս չէ. ուր որ կ'ուզէ նէ՝ երթայ, միայն իմ տունս սոք չկոխէ: Բաւական զինքը պահեցի, բաւական իրեն հայրութիւն ըրի:

ԳԱՐԵԳԻՆ

Հրամեր էք, այնպէս է. ինչ որ ըսէք՝ իրաւունք ունիք. ստուգիւ մեզի հայր եղաք, ծնողքնիս ողջ ալ ըլլային՝ զմեզ ասկէց աղէկ չէին կրնար հողալ:

ՊՐ. ՎԱՀԱՆ

Այս ամենայն սիրով եւ յօժարութեամբ ըրի, մանաւանդ թէ պարտքս ալ էր որ ընէի. ինչու որ հանգուցեալ քոյրս ալ՝ իմ ճամբորդութիւններուս ատենը՝ զաւերներուս մայրութիւն կ'ընէր: Մինչեւ այսօրս ամենեւին չէի զղջացեր ըրածիս վրայ, բայց . . . :

ԳԱՐԵԳԻՆ

Թէ որ եղբայրս քիչ մը ատեն ընթացքը փոխեց, սխալեցաւ նէ, անշուշտ իր կրակոտութենէն ու վառվռուն բնութենէն յառաջ եկած բան մըն է: Արդէն զինքը կը ճանչնաք. տունն եղած ատենն ալ որչափ անգամ ասանկ բաներ կը պատահէր. բայց երբէք սրտի չարութենէն յառաջ եկած չէին ըլլար, եւ միշտ իր ցաւն ու զեղջը՝ յանցանքէն մեծ կ'ըլլար: Ուստի կը յուսամ որ աս անդամս ալ անանկ բան մըն է. թէ որ մէյ մը զինքն առջեւնիդ հանէիք, թէ որ լսէիք . . . :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Ի՛նչ, լսել մի . եւ ոչ երեսը կ'ուզեմ տեսնել : Հիմայ ծառաներուն հրամանս պիտի տամ որ տանս մերձեանալու յանդգնի նէ, ծեծով վարնտեն :

ԳԱՐԵԳԻՆ՝ ալ-ընիւր լեցուցիլ :

Չէ, սիրելի մօրեղբայրս, չէ . աղէկ դիտեմ որ առանկ բան չէք ըներ . սրտերնուդ բարութիւնը թող չիտար որ այսպէս անդթութեամբ վարուիք :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Չեմ ըներ մի . կը տեսնես որ խօսքս կը բռնեմ թէ չէ :

ԳԱՐԵԳԻՆ

Չեմ կրնար կարծել որ ձեր սիրելի քրոջն, իմ մօրս յիշատակը մտքերնէդ ելած ըլլայ . չեմ կրնար կարծել որ ինծի ունեցած սէրերնիդ մոռնաք :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Քրոջս յիշատակը՝ ինծի միշտ քաղցր է . զքեզ ալ միշտ կը սիրեմ, որովհետեւ սրդողելու առիթ մը տուած չունիս, եղբօրդ յանցանքներուն համար ալ ասկէ ետեւ քեզի տարբեր աչքով չեմ նայիր : Գուն այնպէս մնացիր ինչպէս որ մինչեւ հիմակ էիր, ես ալ զքեզ երջանիկ ընելու եւ ծնողացդ տեղը բռնելու կը ջանամ :

ԳԱՐԵԳԻՆ՝ լուր :

Եղբօրս դժբախտ վիճակի մէջ գտնուիլը դիտնալով՝ ինչպէս կրնամ երջանիկ ըլլալ : (Պր . Վահանին յետ-ը իւր պատգմէ :) Ա՛աղաչեմ, սիրելի մօրեղբայր . . . :

ՊՐ . ՎԱՀԱՆ՝ +իւ իւր լուր :

Այսչափ բաւական է . քու սիրոյդ համար՝ քիչ մ'ալ կը սպասեմ, մինչեւ որ տեսնեմ վարժարանին վերատեսուչն ինչ կը դրէ . անշուշտ նամակով մը եղածը կ'իմացընէ :

ԳԱՐԵԳԻՆ

Թէ որ կ'ուզէք նէ՛ մէյ մը երթամ նայիմ թէ ինչ է :

ՊՐ. ՎԱՀԱՆ

Չէ, հարկաւոր չէ. վերատեսչին նամակին կը սպասեմ:

Տ Ե Ս Ի Լ, Գ.

ՊՐ. ՎԱՀԱՆ, ԳԱՐԵԳԻՆ, ԾԱՌԱՅ ՄԸ

ՊՐ. ՎԱՀԱՆ՝ Ժամանակին:

Ի՞նչ լուր կը բերես:

ԾԱՌԱՆ

Գուրար մարդ մը կայ, հրամանացը հետ խօսիլ կ'ուզէ:

ՊՐ. ՎԱՀԱՆ

Ի՞նչ մարդ է... հա՛, նամակ է բերեր, տուր նայիմ: Ըսածս եղաւ. վարժարանին վերատեսչին է. գիրք կը ճանչնամ:

ԾԱՌԱՆ

Հրաման կու տաք նէ՛ վեր գայ:

ՊՐ. ՎԱՀԱՆ

Չէ, ես վար կ'իջնամ: (Գուրար կ'ելլէ: Գարեգին էրեւին կ'ուզէ ելլել. ժամանակը կ'ընէ որ կենայ:)

Տ Ե Ս Ի Լ, Գ.

ԳԱՐԵԳԻՆ, ԾԱՌԱՆ

ԳԱՐԵԳԻՆ

Ի՞նչ կայ, ի՞նչ կ'ուզես:

ԾԱՌԱՆ

Պարոն, եղբայրնիդ հոս է:

ԳԱՐԵԳԻՆ՝ զարհուրեալ:

Եղբայրս:

ԾԱՌԱՆ

Հրաման էք. թէ որ հասած ալ չէ նէ, հետո չկրնար ըլլալ:

ԳԱՐԵԳԻՆ

Ո՞ւսկից գիտես : Ձինքը տեսա՞ր, հետը խօսեցա՞ր :

ԾԱՌԱՆ

Չէ, չտեսայ, հետը չխօսեցայ, բայց նամակը բերողն ըսաւ որ Պարոնիկը ճամբան տեսեր է եւ մինչեւ տան մօտերը մէկտեղ եկեր են :

ԳԱՐԵԳԻՆ

Նամակը բերողին հետ : Ձինքն ո՞ւր տեսեր է, հետը մինչեւ ո՞ւր եկեր է :

ԾԱՌԱՆ

Բերնէն միայն այսչափ բան առի : Վարժարանին վերատեսուչն ուզեր է զՊարոնիկը պատժել՝ ըրած չեմ գիտեր ինչ յանցանքին համար : Ան ալ ձգեր փախեր է : Ասոր վրայ վերատեսուչը նամակ մըն է գրեր՝ որ եղածը Պարոնին իմացընէ : Նամակը բերողը ճամբան կէսօրուան մօտ Պարոնիկը կը տեսնէ որ ըրած ընթացքէն յոգնած՝ պառկեր կը քնանար : Ձինքը ճանչնալով՝ շուտ մը կ'արթընցընէ : Արնաք երեւակայել որ Պր. Գրիգորը զանիկա տեսնելով՝ սրչափ այլայլած պիտ'որ ըլլայ : Իսկզբան կարծելով որ իր ետեւէն խրկուած է որ զինքը բռնէ ետ տանի, մէկէն վեր կը ցատքէ կը զրուցէ թէ Ասոր կտոր կ'ըլլամ, հետդ չեմ երթար :

ԳԱՐԵԳԻՆ

Եղբայրս կը ճանչնամ. ասանկ խօսքեր մարդ իրմէ կրնայ սպասել : Բայց պատմութիւնդ յառաջ տար :

ԾԱՌԱՆ

Թղթաբերն անմիջապէս զինքը կ'ապահովցընէ որ իր գալն ասանկ նպատակ չունի. եւ որովհետեւ Պարոնիկը՝ ինչպէս հոս տան մէջ նոյնպէս վարժարանն ալ՝ իր բարեսրտութեամբն ու զուարթ բնութեամբ ամենուն սիրելի եղած է, անոր համար միանգամայն աս ալ կը զրուցէ որ թէեւ յանդիմանութիւն առնելիքս, թէեւ վարնտուելիքս ալ գիտնայի, ի վերայ այսր ամենայնի

զքեզ չէի մատներ: Աս զըուցելէն ետեւ՝ իր դալուն վախճանն ու վարժարանին մէջ վրան խօսուածն իրեն կը պատմէ: Թէպէտ եւ Պարոնիկն, ինչպէս ըսի՝ սաստիկ յողնած է եղեր, սակայն եւ այնպէս թղթաբերին հետ մինչեւ անտառին քովն եկեր է, հոն կենալով՝ թղթաբերին յանձներ է որ Պարոնին զինքն ինչպէս ընդունիլն ու ինչ պատասխան տալն ի դարձին իրեն իմացընէ: Ասով իրարմէ բաժնուեր են. ինք անտառին մէջ մտեր է, թղթաբերն ալ հոս է եկեր:

ԳԱՐԵԳԻՆ

Տէր Աստուած, մօրեղբայրս հասարակօրէն աս ատենները նոյն կողմերը պտըտելու կ'երթայ. թէ որ մէկէն զինքը հոն տեսնելու ըլլայ, շատ գէշ կ'ըլլայ:

ԾԱՌԱՆ

Թէ որ կ'ուզէք նէ՝ երթամ զըուցեմ որ ուրիշ տեղ մը պահուրաի:

ԳԱՐԵԳԻՆ

Աղէկ ըսիր, վազէ դնա, զըուցէ որ թող պարտիզպանին տունը դայ, պահուրաի. կը ջանամ որ քիչ մը վերջը երթամ զինքը տեսնեմ:

ԾԱՌԱՆ

Գլխո՛ւս վրայ: (Գո՛րս կ'եւէ:)

Տ Ե Ս Ի Լ Ե .

ԳԱՐԵԳԻՆ — ԻՆ ՏԵ ԵՊԵ ԱՏՈՄ

ԳԱՐԵԳԻՆ

Ո՛հ, սա եղբայրս, ամէն անգամ որչափ վիշտ կը պատճառէ ինձի. բայց միշտ ալ զինքը կը սիրեմ. անանկ մէկ բան մ'ունի՝ որ ամէն զինքը ճանչցողը պէտք է որ սիրէ: Սուոր վերջն ինչպէս պիտ'որ ըլլայ: . . . Հա՛, Աստուած:

ԱՏՈՄ

Հո՞ս ես եղեր, որչափ փնտռեցի զքեզ :

ԳԱՐԵԳԻՆ

Ես ալ քեզի հետ խօսիլ կ'ուզէի. բայց ըսելէքս
անշուշտ զքեզ պիտի չուրախացընէ :

ԱՏՈՄ

Գիտեմ արդէն, գիտեմ. հիմայ հայրս Բաբկենին
թուղթը կարդալ տուաւ. արդէն նոյն նամակէն Գրի-
գորին դէմ ունեցած բարկութիւնը՝ վերատեսչին թըղ-
թովն աւելի սաստկացեր է :

ԳԱՐԵԳԻՆ

Ի՞նչ ընելէքս չեմ գիտեր որ բարկութիւնը զիջե-
ցընեմ. եղբայրս ջատագովելու հնարք մ'ալ չեմ կրնար
գտնել : Մինակ Բաբկենին նամակն ըլլար նէ, գու-
ցէ . . . բայց վերատեսուչն ալ իրեն դէմ ելլելու ի՞նչ
պատճառ ունի :

ԱՏՈՄ

Հանդարտէ, եղբայր, ապահով եմ որ Գրիգորիկն
անմեղ է : Սա կեղծաւոր Բաբկենը չե՞ս ճանչնար. ինք
ամէն բան կ'ընէ կ'ըլլայ ու յանցանքն ուրիշին վրայ կը
ձգէ : Ասիկայ առջի անգամը չէ, որ եղբայրդ հօրս աչքէն
հանելու կ'աշխատի : Թէ որ մենք երկուքնիս չըլլայինք,
մինչեւ հիմայ հայրս զինքը քսան անգամ տնէն վարն-
տած կ'ըլլար. բայց ամէն հեղ ալ կը տեսնուէր որ Գրի-
գորիկը կամ բոլորովին անմեղ եւ կամ միայն թեթեւ
յանցանքի տէր է, եւ դրեթէ միշտ յանցանքն իմ պա-
տուական եղբօրս է : Նոյն իսկ իր նամակէն յայտնի կ'ե-
րեւայ որ ինք կեղծաւոր խաբեբայ է, եւ եղբայրդ առ-
առաւելն իր կրակոտութեամբն անխոհեմութիւն մ'ը-
րեր է :

ԳԱՐԵԳԻՆ

Ո՞րչափ կը մխիթարես զիս եղբօրս վրայ այսպէս խօ-
սելով : Այո՛, Գրիգոր բարեսիրտ, սառուգախօս, մեծանձն,

արի է. բայց միանգամայն խիստ կրակոտ, յանդուզն, անխոհեմ, պինդգլուխ. եւ աս պակասութիւնները զինքը շատ անգամ մեծամեծ սխալմանց մէջ կը ձգեն:

ԱՏՈՄ

Իսկ իմ Բարկէնս՝ նախանձոտ, անճնասէր, կեղծաւոր, շողոքորթ: Մէկ խօսքով ըսելու համար՝ ամենայն սիրով քու եղբայրդ ինձի եղբայր կ'առնեմ իր բոլոր պակասութիւններովը, եւ իմինս՝ իր բոլոր շինծու առաքինութիւններովը քեզի թող կու տամ: Հիմայ բանն ան է՝ որ խեղճ տղան հոս չէ, մտքէս կ'անցնի որ շուտ մը ձի հեծնեմ երթամ հետը խօսիմ:

ԳԱՐԵԳԻՆ

Աստուած պահէ, մինչեւ կերակրոյ ատեն չես կրնար ետ դարձած ըլլալ, եւ մօրեղբայրս զքեզ չտեսնէ եւ ուր դացածդ իմանալու ըլլայ նէ՝ բարկութիւնն աւելի կը սաստկանայ: Երթալդ ալ աւելորդ է, արդէն Գրիգորը հոս մօտ է:

ԱՏՈՄ

Ստոյգ կ'ըսես, ո՛ւր է:

ԳԱՐԵԳԻՆ

Անտառին մէջն էր, ըսել տուի որ երթայ պարտիզպանին տունը պահուրտի:

ԱՏՈՄ

Շուտ մը երթամ հետը խօսիմ, բանը տեղն ի տեղը իմանալէն ետեւ՝ յուսամ որ հօրս բարկութիւնը դիւրաւ կրնամ անցընել...: Բայց լուռ, աս ինչ է, իր ձայնն է...: Ես պէտք է որ հօրս քովը կենամ ու ջանամ կամաց կամաց զինքը մեղմացընելու. դուն գնա եղբօրդ հետ խօսէ, բանն աղէկ մ'իմացիր եւ խեղճը մսիթարէ:

ԳԱՐԵԳԻՆ

Միանգամայն աղէկ մ'ալ յանդիմանեմ. ինչ որ ըլլայ նէ՝ միշտ յանդիմանութեան արժանի է: (Ա'երթայ:)

Տ Ե Ս Ի Լ Ք

ՊՐ . ՎԱՀԱՆՆ . ԱՏՈՄ

ՊՐ . ՎԱՀԱՆՆ

Սա թշուառականին դէմ անանկ բարկացած եմ, որ վերատեսչին թղթոյն պատասխանը չկրցայ գրել . . . : Վաղը առտու կը խրկեմ, քիչ մը հանդէմ, հանդարտիմ. դուցէ ետքը կրնամ գրել :

ԱՏՈՄ

Աղէկ կ'ընէք, սիրելի հայր. դուցէ բարկութիւննիդ կ'անցնի ու քեռորդիներնուդ վրայ գլթաք : Ար յուսամ, մանաւանդ թէ ապահով եմ որ ըրածը մեծ բան մը պիտի չըլլայ :

ՊՐ . ՎԱՀԱՆՆ

Անոր յանցանքը մեծ բանի տեղ չդնելու համար՝ մարդ իրեն չափ ստահակութեան հասած պէտք է ըլլալ : Ասով կը ցուցնես որ դուցէ դուն ալ ատենօք անանկ բաներ ըրեր ես : (Բարկանալով :) Ի՛նչ, ժամացոյցն ու գրքերը ծախել, գիշերը վարժարանէն դուրս մնալ. ասոնք աչքիդ պզտիկ բաներ կ'երեւան : Բայց ամենէն աղէկը՝ վարժարանէն վախճիլն է. ասիկա մէկալ բոլոր յանցանքներն անցուց :

ԱՏՈՄ

Աւելի լաւագոյն էր որ սպասէր թէ զինքը նախատանօք վաճառէին :

ՊՐ . ՎԱՀԱՆՆ

Արժան եւ իրաւ էր, ըրած յանցանքին նայելով՝ նոյն պատիժը դեռ քիչ էր : Ասկից ալ զատ՝ վերատեսուչը կը գրէ որ ըսածնին միայն սպառնալիք էր, որպէս զի խելքը գլուխը ժողովէ : Բայց կ'երեւայ որ բոլորովին ազականեր է :

ԱՏՈՄ

Թողութիւն տուէք համարձակութեանս, սիրելի հայր. բայց կարծեմ թէ աս բաներուս մէջ իմ պա-

տուական եղբորս մատը կայ. ինձի այնպէս կ'երեւայ
որ ինք փոքր մէկ բանն իր չարասրտութեամբը խիստ
մեծցուցած է՝ խեղճ Գրիգորին անունն առջեւնիդ աւ-
րելու համար :

ՊՐ. ՎԱՀԱՆ

Գիտեմ, գիտեմ որ դուն ալ Գարեգինն ալ զինքը
չէք կրնար տանիլ, եւ ձեր խօսքերովն անանկ ըրած էիք
որ իմ սիրտս ալ վրան պղտորած էր : Բայց հիմա վե-
րատեսուչը վրան գոհ է : Արնայ ըլլալ որ զիս քիչ մը
շողոքորթել ուզէ. սակայն ինչ որ ըլլայ նէ՛ Բաբկէնս
Գրիգորին ըրածներուն պէս բան երբեք ըրած չունի :

ԱՏՈՄ

Ստոյգ է, Գրիգոր շատ անգամ յանցանք գործած
է. բայց երբեք անանկ գործք մը գործած չէ՛ որմէ ու-
րիշի վնաս հասնի կամ չարիք մը հետեւի, ըրածին
վնասը մինակ ինք կը կրէր :

ՊՐ. ՎԱՀԱՆ

Ա՛լ զիս ինձմէ կը հանես : Ի՛նչ, միայն իրեն վնաս
ըրաւ՝ երբ որ դեղեցիկ կառքս՝ որն որ 5000 դահե-
կան արժած էր, դնելէս շաբաթ մը վերջը կտոր կտոր
ըրաւ :

ԱՏՈՄ

Ստոյգ է հրամանոցը դրամական վնաս եղաւ, բայց
ինք աւելի մեծ վնաս կրեց, եւ ան ալ մինակ իր չարիէ
դուրս կրակոտութենէն յառաջ եկած բան մըն է : Համ-
բարձում նոր կառքը պիտի փորձէր. Գրիգոր այնչափ
ետեւէն ինկաւ, այնչափ աղաչեց, որ վերջապէս խեղճ
կառապանը զինքն ալ քովն առաւ : Հաղիւ թէ քիչ մը
յառաջ գացած էին, մէյ մ'ալ կառապանին խարա-
զանը վար իյնալով՝ մարդը սանձերը տղուն ձեռքը կու-
տայ, վար կ'իջնայ որ առնէ. Գրիգոր իր բնական տաք-
արիւնութեամբն եւ ընելու գործքին հետեւութիւն-
ները չմտածելով, կ'ուզէ կատակ մ'ընել եւ կառքն

յառաջ քշել՝ որ Համբարձում չկարենայ իրեն հասնիլ :
Մէյ մ'ալ ձիանքն են կը կատողին , Գրիգորին զօրու-
թիւնը զիրենք չիկրնար զսպել , քիչ մը վերջը ինք վար
կ'իյնայ եւ կառքը ասողին անդին քարերուն ու ծառե-
րուն զարնուելով՝ կտոր կտոր կ'ըլլայ :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Ասիկա միայն բաւական չէ՞ քու սիրելի հօրաքեռ-
որդւոյդ ինչ տեսակ տղայ ըլլալը ցուցընելու :

ԱՏՈՄ

Բայց , սիրելի հայր , սրչափ ցաւ ցուցուց , ինչչափ
կու լար կ'ողբար գլխաւորաբար անոր վրայ որ իր պատ-
ճառաւը խեղճ Համբարձումը հացը կորսընցուց , սրչափ
եսեւէ ինկաւ որ ան ողորմելոյն օգնութիւն ընէ : Ա-
սիկա մեծ բարեսրտութեան նշան չէ՞ մի :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Ափսոս որ բժշկութիւն սորվելու տեղ՝ իրաւագի-
տութիւն չես սորվիր , չէ նէ ժամանակաւ բոլոր ստա-
հակներն ու անպիտան մարդիկ՝ ի քեզ զօրաւոր ու
ճարտարախօս փաստաբան մը կ'ունենային : . . . Բայց
քիչ մը դուրս ելլեմ . դուցէ բաց օդին մէջ սրտնեղու-
թիւնս անցնի : (Վ'երջնայ :)

Տ Ե Ս Ի Լ Է .

ԱՏՈՄ -- ԷՊԻԸ ԳԱՐԵԳԻՆ

Հայրս սրչափ նեղացած է . բայց կը յուսամ որ
կամաց կամաց բոլորովին կը հանդարտի , եւ ան ատեն
աւելի դիւրութեամբ կրնամ սիրտը կակղեցընել : Հի-
մակ երթամ մէյ մը նայիմ սա չարածճին ուր է . ար-
դեօք Գարեգին հետը խօսեցաւ : (Գեպ ի դուրս երթա-
լու կը սկսի :)

ԳԱՐԵԳԻՆ՝ դունեն խամայուսի մը նայելով :

Մօրեղբայրս հոս չէ , գնաց :

ԱՏՈՄ

Հիմա դուքս ելաւ, պարտելու գնաց: . . . Գրիգորիկն
մը է:

ԳԱՐԵԳԻՆ

Աողմնակի սանդղին վրայ կը սպասէ:

ԱՏՈՄ

Խցերնիս տանինք, հոն հանդարտութեամբ կրնանք
խօսիլ:

ԳԱՐԵԳԻՆ

Չէ, քիչ մը վերջը երաժշտութեան վարպետը կու
գայ: Աւելի լաւագոյն է որ հոս գայ: Մօրեղբայրս դուքսն
եղած ատեն՝ հոստեղը մարդ չի հանդիպիր: Հիմա կը
կանչեմ: (Գուրս է' ելլէ:)

ԱՏՈՄ

Նայինք սա պատմութիւնն ինչ է. ո՛հ, երանի թէ
եղբորս չարասրտութեան վրայ աւելի եւս համոզուելու
առիթ չունենայի: . . . Չեմ դիտեր ինչէն է, միշտ
ինձի անանկ կ'երեւայ որ Գրիգոր սա բանիս մէջ բոլո-
րովին անմեղ է, եւ բոլոր յանցանքին տէրը՝ Բաբելէնն
է: . . . Հա՛, կու գան կոր: (Մինչեւ գուրսը դիմացնին
է' ելլայ:)

Տ Ե Ս Ի Լ Ը:

ԱՏՈՄ, ԳԱՐԵԳԻՆ, ԳՐԻԳՈՐ

ԱՏՈՄ

Բարո՛վ եկար, Գրիգորիկ, թէպէտ եւ դալուդ
պատճառն այնչափ ուրախական չէ. բայց ես զքեզ
տեսնելուս կ'ուրախանամ:

ԳԱՐԵԳԻՆ

Մեզի պատճառած սրտնեղութեան համար այնչափ
սիրոյ արժանի է, հա՛: Ստուգիւ կ'ըսեմ, Գրիգոր, բը-
նած ընթացքդ մեզի մեծ արտմութեան պատճառ է:

ԳՐԻԳՈՐ

Գիտեմ, գիտեմ, եղբայր, թէպէտ դուն ալ զիս կը սիրես, բայց միշտ Պր. Աստմէն աւելի խիստ ես, միշտ գործքերս իրմէ աւելի գէշ կը մեկնես:

ԳԱՐԵԳԻՆ

Գնա աղօթք ըրէ որ մօրեղբօրդ չափ խիստ չեմ, եւ գործքերդ իրեն չափ գէշ չեմ մեկներ:

ԳՐԻԳՈՐ

Բայց ամէն բանէն յառաջ՝ մօրեղբայրս ի՞նչ կը զրուցէ. ստոյգ է որ ինծի դէմ սաստիկ բարկացեր է եղեր:

ԱՏՈՄ

Թէ որ գիտնալու ըլլար որ զքեզ հոս ընդունեցանք, պէտք էր որ ամէնքս մէկտեղ տունը ձգէինք փախչէինք:

ԳԱՐԵԳԻՆ

Պէտք չէ որ աչքին երեւաս, ապա թէ ոչ ստուգիւ ծեծի տակ կը մեռցընէ. կեանքիս մէջ զինքն առնանկ բարկացեալ տեսած չէի:

ԳՐԻԳՈՐ

Ես ալ ձեզի կը զրուցեմ որ կեանքիս մէջ խիղճս այնչափ հանդարտ եղած չունէր՝ ինչպէս հիմայ: Բայց վերատեսուչն ի՞նչ կրնայ գրած ըլլալ:

ԳԱՐԵԳԻՆ

Անանկ մէկ սքանչելի ներբողեան մը, որ ստուգիւ աւելի գեղեցիկ ու զօրաւոր չէր կրնար ըլլալ:

ԱՏՈՄ

Արդէն եղբայրս ալ յառաջագոյն աճապարած քիչ մը բան գրած էր:

ԳՐԻԳՈՐ

Բարկէ՞նն ալ նամակ գրեց. ուրեմն ինք զինքս շատագոյնեւ հարկաւորութիւն չունիմ. ամէն բան տեղն ի տեղը իրեն պատմած էի, եւ եթէ ինչպէս որ պէտք է

1002
2552

գրած է նէ՛ չեմ կրնար իմանալ թէ ի՞նչ պատճառաւ
մօրեղբայրս ինձի այնչափ սրգողեր է :

ԱՏՈՄ

Մարդ քու վրայ իր նամակէն դատատան ընելու
ըլլայ, պէտք է որ զքեզ դատապարտէ :

ԳՐԻԳՈՐ

Չարմանք . բայց ի՞նչ է եղեր յանցանքս : Առանց
կարծեաց ամենէն մեծն ու առաջինը՝ ժամացոյցս ծա-
խելն պիտ'որ եղած ըլլայ :

ԳԱՐԵԳԻՆ

Ի՞նչ, ասիկա քու աչքիդ փոքր բան է . անկէց զատ՝
գրքերդ ալ ծախեր ես, եւ ո՛վ դիտէ ուրիշ ինչէր ալ :

ԳՐԻԳՈՐ

Ստոյգ է որ եթէ աւելի ստըլի կարօտութիւն ու
նենայի, ուրիշ շատ բան ալ կը ծախէի :

ԳԱՐԵԳԻՆ

Շիտակը ինք զինքդ շատ աղէկ կ'արդարացընես .
ուրեմն մօրեղբայրնիս իրաւունք ունի եղեր : Բայց ասի-
կա մէկդի ձգենք . գիշերները վարժարանէն դուրս ան-
ցընելդ ի՞նչ ընենք :

ԳՐԻԳՈՐ

Գիշերներ, գիշերներ, իբրեւ թէ հինգ վեց անգամ
գիշերը դուրսն անցուցած ըլլամ : Մինակ մէկ գիշեր
դուրս մնացի, ան ալ ակամայ եւ բռնադատեալ :

ԱՏՈՄ

Գրիգորիկ, Գրիգորիկ, կամաց կամաց ես ալ պրդ-
տորելու կը սկսիմ . դիտէ՛ս շատ անգամ չարագործ մը
մէկ գիշերուան մէջ աւելի չարութիւն կ'ընէ, քան թէ
շատ բարեգործ մարդիկ մէկ տարւան մէջ բարիք կրնան
ընել :

ԳԱՐԵԳԻՆ

Անկից վերջը՝ ո՛ւր գացած ըլլալը չզրուցել, ստակն

ինչ բանի գործածած ըլլալը չյայտնել . եւ երբ որ վերատեսուչը կը յանդիմանէ, դէմ դառնալ եւ ձգել փախչիլ :

ԳՐԻԳՈՐ

Չգել փախչիլ մ'ըսեր, հապանախատալից պատժէ մը տեղի տալ, որուն որ արժանի ըլլալու յանցանք մը չէի գործած : Մանաւանդ որ եթէ յանձն առնէի նէ՝ մօրեղբայրս զիս միշտ յանցաւորի տեղ պիտի դնէր . եւ եթէ վաճառուելու ըլլայի, նոյնպէս ոչ հոս կրնայի գալ եւ ո՛չ ալ վարժարան դառնալ :

ԱՏՈՄ

Բայց, բարեկամ, ինք զինքդ ջատագովելու, յանցանքէն բոլորովին սրբելու համար՝ ինչ կը զրուցես . պէտք է որ ամէն բան դիտնանք, որպէս զի հօրս առջեւ զքեզ կարենանք արդարացրնել :

ԳՐԻԳՈՐ

Ահաւասիկ ամէն բան տեղն ի տեղը կը պատմեմ : Ասկից դրեթէ 15 օր յառաջ վարժարանին մօտաւոր մէկ գեղին մէջ տօնավաճառ կար : Աերատեսուչը մեզի հրաման տուաւ որ երթանք քիչ մը զբօսնունք եւ տեսնելու արժանի բաները տեսնենք :

ԳԱՐԵԳԻՆ

Ուրեմն ժամացոյցդ՝ շաքարեղէն ու պտղեղէն գնելու եւ կամ կապիկ ու պաճուճապատանք խաղալ տեսնելու գործածեցիր :

ԳՐԻԳՈՐ

Չէի կարծեր որ եղբայրս վրաս այսպէս դէշ համարում ունենայ : Ան աստիճանի տղայ չեմ, որ ասանկ բաներու ծախք ընեմ : . . . Սաստիկ ծարաւ ունենալով՝ զինետուն մը մտայ, ուր որ գարեջուր կը ծախէին, եւ դաւաթ մը խմել ուզեցի :

ԳԱՐԵԳԻՆ

Շինեմ ըսելու ատեն՝ աւելի կ'աւրես կոր :

ԱՏՈՄ

Թող սուր որ խօսքն յառաջ տանի :

ԳՐԻԳՈՐ

Հոն նստած ատենս . . . :

ԱՏՈՄ՝ երեւին գոյնը ներելով :

Աս ի՛նչ է, հօրս ձայնը կը լսեմ. բռնուեցանք :

ԳԱՐԵԳԻՆ

Փախիր, Գրիգոր, փախիր :

ԳՐԻԳՈՐ

Ինչո՞ւ պիտի փախչիմ. լաւագոյն է որ կենամ ու ոտքն իյնամ :

ԱՏՈՄ

Չ'ըլլար, չ'ըլլար, հիմա զինքն աւելի կը բարկացընես. թող որ կամաց կամաց պատրաստենք : (Չեւտե՛ն կը բռնէ, ետեւի դռնէն դուրս կը հանէ եւ ինչ ներս գալով՝ դուրսը կը կշտէ :))

Տ Ե Ս Ի Լ Թ .

ՊՐ . ՎԱՀԱՆ, ԱՏՈՄ, ԳԱՐԵԳԻՆ

ԱՏՈՄ

Ի՛նչ, սիրելի հայր, պարտելէն այսպէս շուտով ետ դարձար :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Հաղիւ թէ քանի մը քայլ առած էի, մէյ մ'ալ նայեցայ որ ծխախոտի քսակս վրաս չէ, հարկ եղաւ ետ դառնալ, արդեօք հո՞ս եմ ձգեր :

ԳԱՐԵԳԻՆ ըրա՛ւ իողնը նայելով :

Ահաւասիկ աթոռին վրան է : (Ալ բերէ, կու գայ :))

ՊՐ . ՎԱՀԱՆ

Երկուքներնէդ մէկը չէ՞ր կրնար տեսնել ու ետեւէս բերել :

ԳԱՐԵԳԻՆ

Պէտք է որ կոյրցած ըլլանք, որ չտեսանք:

ԱՏՈՄ

Ո՛վ կրնայ ամէն բանի միտ դնել:

ՊՐ . ՎԱՀԱՆ

Ստուգիւ, որչափ մտածելու բան ունիս:

ԱՏՈՄ

Շիտակը զրուցելով՝ խեղճ Գրիգորը մտքէս չ'ելլեր . միշտ խելքս միտքս անոր վրան է . հիմակ արդեօք ի՞նչ կ'ընէ կոր, գուցէ ուտելու հաց չունի:

ՊՐ . ՎԱՀԱՆ՝ նստելով:

Սա թշուառականին խօսքըմ՝ ըներ . քանի որ անու-
նը կը լսեմ նէ՛ աւելի կ'այլայլեմ:

ԱՏՈՄ

Լաւ ուրեմն՝ չեմ խօսիր . . . : Բայց, սիրելի հայր, եթէ պարտելու պիտ'որ երթաք նէ՛ հիմակ երթալու էք . իրիկուան դէմ օդը կը զովնայ:

ՊՐ . ՎԱՀԱՆ

Չէ, ա՛յլ չեմ ուզեր դուրս ելլել: (Աստ՛ ու Գարեգինն իրարու երես կը նային ու գլուխօնին կը շարժեն:) Ժամանակն անցած է . անկից ալ զատ՝ ըսին որ համբար-
ձումն եկեր է, ինծի հետ խօսիլ կ'ուզէ եղեր: Թէպէտ եւ ինծի մեծ վնաս ընել տուաւ . բայց միշտ հաւատա-
րիմ մարդ է . նայիմ ի՞նչ կ'ուզէ:

ԱՏՈՄ

Արնայ քիչ մը սպասել . ետ դառնալէն ետեւ կրնաք հետը խօսիլ:

ՊՐ . ՎԱՀԱՆ

Չէ, կ'ուզեմ շուտ մը խօսիլ ըմբոսընել: (Երկու երե-
րասարդ + Ռեզերնին ծածուկ կը խօսին:) Վարժեմ հայրեր-
նիդ, մօրեղբայրնիդ խօսած ատեն՝ պէտք է որ միտ դնէք:
(Գարեգինն երեւալ կ'ուզէ:) Ո՛ւր կ'երթաս, Գարեգին:

ԳԱՐԵԳԻՆ՝ շխառն :

Երթամ նայիմ, կարելի է երաժշտութեան վար-
պետնիս եկած է: Հիմա կու գամ:

ՊՐ . ՎԱՀԱՆ

Թէ որ վար կ'երթաս նէ՛ Համբարձումին ըսէ որ
շուտ մը գայ:

ԳԱՐԵԳԻՆ

Գլխո՛ւս վրայ: (Գոչնէն էն էն է):

—

Տ Ե Ս Ի Լ Ժ .

ՊՐ . ՎԱՀԱՆ, ԱՏՈՄ

ՊՐ . ՎԱՀԱՆ

Ստոյգ ըսելով՝ խեղճ մարդուն վրայ կը ցաւիմ. դեռ
իրեն պէս կառապան մ' ունեցած չեմ:

ԱՏՈՄ

Ո՛հ, հայր, թէ որ զինքը քովերնէդ հանած չըլ-
լայիք, խեղճ Գրիգորիկն այնչափ տրամութիւն ու ցաւ
կրած չէր ըլլար:

ՊՐ . ՎԱՀԱՆ

Աս ալ իր ստահակութեան պտուղը չէր մի. ինք
չըլլար նէ՛ Համբարձում միշտ քովս կը մնար:

ԱՏՈՄ

Մինչեւ հիմակ ո՛ւր էր արդեօք. քովերնէս ելլելէն
ետեւ՝ զինքը ո՛չ տեսայ, ո՛չ անունը լսեցի:

ՊՐ . ՎԱՀԱՆ

Ո՛վ գիտէ՛ որուն քով մտած է, ո՛ւր քաշուած է:

—

Տ Ե Ս Ի Լ, ԺԱ.

ԱՌՋԻՆՆԵՐԸ, ԳԱՐԵԳԻՆ ՈՒ ՀԱՄԲԱՐՉՈՒՄ
ԳԱՐԵԳԻՆ

Ահա առիկ Համբարձումը, սիրելի մօրեղբայր :

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ

Թողութիւն տուէք, Պարօն, չեմ կարծեր որ մինչեւ հիմակ ինձի սրդողած ըլլաք, եւ կամ սրտերնիդ նեղանայ՝ որ հոսկից անցնելու ատենս համարձակեցայ դալու աղաչելու որ ինձի վկայական մը տաք :

ՊՐ. ՎԱՀԱՆ

Ի՛նչ, քովէս ելած ատենդ վկայականդ չտուի՞ :

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ

Չէ, Պարօն. նոյն ժամանակը հազիւ աս խօսքերն ըսիք. Ստակդ առ՝ շուտ մը տնէս դ՛ուրս ել, մէյ մ'ալ աչքիս մ'երեւար : Ըստ կարգի վկայական մ'ուզելու եւ առնելու ատեն չեղաւ :

ՊՐ. ՎԱՀԱՆ

Բայց եղածն ալ քիչ բան չէր, անկից աւելի աղէկ հրաժեշտի արժանի չէիր. սքանչելի կառքս կտոր կտոր եղաւ եւ Գրիգորն ալ քիչ մնաց կը մեռնէր :

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ

Իրաւունք ունիք, Պարօն. բայց ի՛նչ ընենք, կառապանի մը խելքը հասարակօրէն իր մտրակին ծայրն է. . . . : Ասկէ ետեւ յուսամ որ աւելի խոհեմութեամբ եւ զգուշութեամբ կը վարուիմ :

ՊՐ. ՎԱՀԱՆ

Ի՛նչ եւ իցէ, ամէն բան արդէն մոռցուած դացած է : Մինչեւ հիմակ ո՛ւր, որո՞ւն քովն էիր :

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ

Ո՛հ, Պարօն, քանի որ հրամանոցը քովէն ելած եմ, տեղ մը հանգիստ չունեցայ : Քանի մը օր վերջը օտարականի մը քով մտայ. բայց ի՛նչ մարդ, տէր Աստուած,

Ի՞նչ մարդ . առանց յիշոցելու խօսք մը չէր կրնար ըսել ,
առանց կռուոյ օր մը չէր անցնէր . մարդ զինքը դո՛՛հ չէր
կրնար ընել : Ասոր վրայ ան ալ աւելցուր՝ որ վերջին աս-
տիճանի աղահ էր . հաղիւ թէ ծառաներն անօթու-
թենէ չմեռնելու չափ կերակուր կ'ունենային :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Ինչո՞ւ անանկ մարդու քով մնացիր :

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ի՞նչ ընէի , ո՞ւր երթայի . դո՛նէ քովը քանի մը բո-
լոր կրնայի վաստրկիլ , կինս ալ լաթ կը լուար ու կար
կը կարէր եւ ասով կրնայինք մենք ու զաւկրներնիս
ապրիլ : Բայց աս վիճակնիս՝ որչափ որ ալ ողորմելի էր
նէ՛ անկից աւելի գէշին մէջ ալ պիտի իյնանք եղեր :
Տէրս՝ թէպէտ զամէնքը կը վախոյրնէր , բայց զմահը
չկրցաւ վախոյրնել . մահն եկաւ , զինքն առաւ տարաւ .
եւ ես դարձեալ առանց հացի մնացի : Եւ որովհետեւ
հրամանոցը քով մէկդի դրած քանի մը ստակս ալ
սպառած էր , անոր համար վերջին աստիճանի ողորմե-
լութեան մէջ ինկայ :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Չէիր գիտեր որ ես մէկը անօթութենէ մեռնիլ
չեմ տար , եւս առաւել հին ծառայ մը :

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Շատ անգամ միտքս կու գար որ դամ ոտուրնիդ
իյնամ . բայց միշտ ան՝ Մէյ մ'ալ աչքիս մ'երեւար ,
խօսքը՝ ականջներուս կը գոռար , եւ չէի կրնար համար-
ձակիլ :

ԱՏՈՄ

Անկէ ետեւ քովը մտնելու մէկը չկրցար գտնել :

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ատեղաց եւ մերձակայ տեղերուն բնակչաց մէջ
շատ քիչ մարդ կը գտնուի , որ սեպհական կառքի տէր

ըլլալով՝ կառապանի պէտք ունենայ: Արդ ուրիշ կերպով հացս չկրնալով վաստրկիլ, սկսայ մէկուն մէկալին քով աւուրչէքով բանիլ, կինս ալ դորձք դասած ատեն կը բանէր. իսկ զաւկրներս վերջին հարկէն ստիպուելով՝ կը մուրային: Բայց աս ամենայն հաղիւ մեր օրրասօրեայ հացին կը բաւէր. անանկ որ բնակած հիւղերնուս վարձքը չկրնալով վճարել, գրեթէ ամէն շաբաթ կը ստիպուէինք մէկ տեղէ մէկալ տեղ երթալ, ամէն տեղ մէյ մէկ բան թող տալով՝ իբրեւ բնակարանի վարձ: Աս կերպով վերջապէս ան աստիճանի հասանք՝ որ վրայի զգեստներնէս զատ ձեռուրնիս ամենեւին բան չմնաց: Քանի որ կինս կ'ապրէր նէ՛ ինձի մեծ մխիթարութիւն ու օգնութիւն էր. բայց խեղճն այսչափ վշտաց ու նեղութեանց չկրնալով դիմանալ, մեռաւ: (Առաջ):

ՊՐ. ՎԱՀԱՆ՝ սիրոն ելած:

Ստուգիւ պարապ գտնուեր ես, որ ինձի չես եկեր:

ԱՏՈՄ՝ խամայ Գարեգինին:

Ահաւասիկ հայրս, նայէ ինչպէս սիրտը կակղացաւ:
Գրիգորիկին համար աղէկ նշան:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Աս վերջին դժբախտութիւնը գլուխս գալէն վերջը, ասկից գրեթէ ամիս մը յառաջ էր, մէկ քանի օր ալ աս կողմերս բնակելէն ետեւ՝ նայելով որ հոս ապրուստ գտնելն անկարելի է, զաւկրներս առած՝ սկսայ գեղէ գեղ պտրտիլ, երբեմն ողորմութեամբ, երբեմն աշխատանքով ապրելով: Մէյ մ'ալ օր մը մեծկակ գեղ մը հասանք, ուր որ նոյն օրը տօնավաճառ կար: Հոն բեռ տանելով բերելով՝ քիչ մը ստակ վաստրկեցայ: Բայց մէկ հրեշտակ մը, ստուգիւ հրեշտակ մը, ձեր Պր. Գրիգորիկը . . . :

ՊՐ. ՎԱՀԱՆ

Գրիգորը, հրեշտակ մի . . . թշուառական ստահակը:

ԱՏՈՄ ու ԳԱՐԵԳԻՆ ՏԵՆԵՆԱԼԸ:

Գրիգորը, Գրիգորը:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Հրամեր էք, Պարոն, զիս նախատեցէք, ինձի սրդո-
ղեցէք, թէ որ կ'ուզէք՝ ոտուքներնուդ տակ առէք.
միայն ան հրեշտակին դէմ խօսք մ'ըսէք:

ԳԱՐԵԳԻՆ

Համբարձում, պատմութիւնդ շարունակէ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Որդիս գինետան մը դուռը մօտենալով՝ ողորմու-
թիւն կ'ուզէ: Պր. Գրիգոր ու Պր. Բաբկէն հոն սեղա-
նի մը առջեւ կը նստէին:

Պր. ՎԱՀԱՆ

Հա՛, հա՛, աղէկ սկզբնաւորութիւն. գինետան մէջ:
Հիմակ ո՛ւր գացած ըլլալը կը յայտնուի կոր:

ԳԱՐԵԳԻՆ

Անշուշտ ծարուած, եւ քիչ մը զովանալու համար
ներս մտած պիտ'որ ըլլայ:

Պր. ՎԱՀԱՆ

Նոյն գեղն ի՞նչ գործք ունէր:

ԱՏՈՄ

Տօնավաճառը տեսնելու համար գացած պիտ'որ
ըլլայ, եւ անշուշտ հրաման ալ առած պիտ'որ ըլլայ:
(Համբարձո՞ւմն է): Պատմութիւնը յառաջ տար:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Որդիս ճանչնալով՝ Պր. Գրիգոր տեղէն կը ցատքէ,
ստակը կը վճարէ, եւ ընկերին խօսքը մտիկ չընելով՝
որդույս ձեռքէն կը բռնէ դուրս կը հանէ, կը սկսի վի-
ճակնիս հարցընել: Քիչ մը բան լսելով՝ սիրտը կ'ել-
լէ ու տղուն կը հրամայէ որ զիս դանէ: Զիս քովի
փողոցին մէջ գտան, ուր որ սաստիկ տաքութենէն
ծարուած՝ ջուր կը քաշէի որ խմեմ: Աւրախութենէն

խելքս քիչ մնաց կը թռցրնէի՝ երբ որ զինքը տեսայ :
 Թէպէտ եւ վրաս գլուխս աղտոտ էր , ի վերայ այսր
 ամենայնի բանի մը չնայեցայ , մէկէն վազեցի վրան ,
 ամենուն առջեւը սկսայ գրկել . անանկ սաստիկ՝ որ
 տեսնողները կը վախնային որ չըլլայ թէ խղղեմ : Ինծի
 ըսաւ որ զինքն առանձին տեղ մը տանիմ , ուր որ հետս
 կարենայ խօսիլ : Չինքն առի ան խուզը տարի , որն որ
 նոյն առտու բռնած էի : Հոն իրեն ալ այն ամենայն
 պատմեցի՝ զորն որ քիչ մը յառաջ հրամանոցը զրու-
 ցեցի : Բարեսիրտ Պարոնիկն ասոնք լսելով՝ սկսաւ լալ .
 Այն ինձ , ըսաւ , քու տեղդ ես պէտք էի մուրալ ,
 որովհետեւ մօրեղբօրս անէն մերժուելուդ՝ ուստի եւ
 դժբախտութեանդ բուն պատճառն ես եմ . անոր հա-
 մար չեմ հանդէի՝ մինչեւ որ քեզի չօգնեմ : Աս ըսաւ
 ու հանեց քսակն ինծի տալ կ'ուզէր : Բոլոր զօրու-
 թեամբ դէմ դրի , չուզեցի առնել , ըսելով որ Անշուշտ
 իրեն զբօսանաց համար տրուած ստակն է , ես չքաւո-
 ռութիւն կրելու վարժած եմ : Բայց անօգնւտ . բար-
 կացաւ , ոտուրները սկսաւ գետինը զարնել եւ կարծեմ
 կը ծեծէր ալ՝ թէ որ չառնէի :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Մէջը սրչափ ստակ կար :

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Յիսուն դահեկանի չափ : Բայց ասիկայ ամէնը չէ :
 Ինք իրեն քիչ մը մտածելէն ետեւ՝ Չէ , ըսաւ , չեմ
 կրնար թողուլ որ իմ մօրեղբօրս մէկ ծառան՝ որն որ
 ոչ գողութիւն եւ ոչ ուրիշ յանցանք մ'ըրած է , իր
 ծերութեան օրերը զաւկրներուն հետ մուրալով ան-
 ցրնէ : Նայէ որ առած ստրկովս մէկ երկու օր ապրիս եւ
 ինծի սպասէ . քանի մ'օրէն՝ քեզի աւելի օգնութիւն
 կը բերեմ , մինչուկ որ մօրեղբօրս գրեմ : Ստոյգ է եր-
 կուքնիս ալ զինքը բարկացուցինք . բայց ինք մեծանձն
 ու գորովասիրտ մարդ է , զքեզ այսպիսի թշուառու-
 թեան մէջ չիթողուր :

ՊՐ. ՎԱՀԱՆ

Ստոյգ կը խօսիս. Գրիգոր աս խօսքս ըսա՞ւ :

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Կ'ուզէ՞ք նէ՛ երդում ընեմ :

ԱՏՈՄ

Չէ, չէ, կը հաւտանք. պատմութիւնդ յառաջ տար :

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ինծի ըրած բարիքին համար շնորհակալ ըլլալու թող չտարով՝ Չաւկրներդ ի՛նչպէս են, ի՛նչ կ'ընեն, հարցուց սքանչելի Պարոնիկը : — Ի՛նչ պիտ'որ ընեն, ըսի, ճամբաները ծաղիկ կը ծախեն, եւ կամ մէկուն մէկալին համար ասդին անդին կ'երթան. իսկ երբ որ գործ մը չեն գտներ, կը մուրան : — Չ'ըլլար, չ'ըլլար, պատասխանեց. ասանկով կ'ապականին, կը ստահակնան. որդիդ պէտք է որ արուեստ սորվելու մը դնես, իսկ աղջիկդ պատուաւոր ընտանեաց մը յանձնես, ուր որ իր տարիքին համեմատ ծառայութիւն ընէ եւ միանգամայն քիչ մը բան սորվի : — Իրաւունք ունիս, ըսի, բայց առանց սարկի՛ մէկը որդիս քովը չ'առներ. եւ ասանկ աղտոտ ու հնոտի զգեստներով՝ աղջիկս որուն առնը կրնամ դնել : Թէ որ 6—700 դահեկան ունենայի, որդիս ատաղձագործի մը քով եւ աղջիկս բարեկամ մէկ պարտիզպանի մը տուն կը դնէի : Ես ալ ան ատեն գուցէ տեղ մը կրնայի մանել, եւ հիմակուան թափառական կեանքէս կ'ազատէի :

ՊՐ. ՎԱՀԱՆ

Գրիգոր ասոր ի՛նչ պատասխան տուաւ :

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ատուած ողորմած է, յոյսդ մի կարեր, աղօթք ըրէ, ըսելով՝ ինծմէ բաժնուեցաւ : Մէյ մ'ալ քանի մը օրէն եկաւ՝ Ուր է ատաղձագործն, ըսաւ, որուն քով որդիդ կ'ուզէիր դնել. զիս իրեն տար : Մէկտեղ ելանք գացի՛նք : Մարդուն հետ առանձին խօսելէն ետեւ՝ հի-

մա բարեկամ պարտիզպանիդ տունն երթանք, ըսաւ :
 Հոն ալ նոյնպէս խօսելէն ընդհանրեցէն վերջը՝ Գնա,
 ըսաւ, զաւերներդ բեր քովերնին դիր : — Ստակը, Պա-
 ռոնիկ : — Արդէն հողացուած է : — Աս ըսելով ձեռքս
 խել մը ստակ տուաւ, որ ինծի նոր զգեստ գնեմ :

ԱՏՈՄ

Ո՛հ, ազնուասիրտ Գրիգորիկս :

ՊՐ. ՎԱՀԱՆ՝ «Լ՛-Ը՛ԻՐԸ ՊԻՔԵԼԸ» :

Հիմա կը տեսնուի որ ժամացուցին ստակն ինչ քանի
 գործածեր է : Ե՞տքը :

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ամենեւին չէի ուզեր աս ստակն առնել : Բայց ան
 աստիճանի այլայլեցաւ, սրդողեցաւ, բարկացաւ, որ
 աւելի եւս չսրդողցրնելու համար՝ ստիպուեցայ ընդու-
 նիլ, միտքս գնելով որ ատենին հրամանոցը իմացրնեմ
 եւ հաւանութիւննիդ առնեմ :

ՊՐ. ՎԱՀԱՆ

Ո՛վ իմ Գրիգորս, իմ սիրելի Գրիգորս. հիմա կ'ի-
 մանամ որ միշտ մի եւնոյն բարեսիրտ ու մեծանձն տղան
 է : ... Բայց ըսիր որ վկայական մը կ'ուզես, որո՞նք քով
 պիտի մտնես, մարդ գտա՞ր :

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Կարծես թէ ազնուասիրտ Պարոնիկն ինծի երջան-
 կութիւն բերաւ. հազիւ թէ զինքը վերջին անգամ
 տեսնելու վրայ քանի մը որ անցած էր, մէյ մ'ալ
 լսեցի որ Երկայնաբազուկ իշխանը կառապան մը կ'ուզէ
 եղեր. անմիջապէս գացի ինք զինքս առաջարկեցի :
 Ինծի քանի մը հարցում ընելէն ետեւ՝ խօսք տուաւ որ
 կ'առնէ, թէ որ յառաջուան տիրոջմէս աղէկ վկայական
 ունենամ : Անոր համար վերջին հարկէն ստիպուած՝
 համարձակեցայ հրամանոցը գալու : Գուցէ չէք ուզեր
 տալ. բայց ես միշտ ինք զինքս երջանիկ կը սեպեմ որ

Պր. Գրիգորիկին ինձի ըրած բարիքներուն համար կըր-
նամ շնորհակալ ըլլալ եւ հաւանութիւննիդ ուզել:

ՊՐ. ՎԱՀԱՆ

Գրիգորիս քեզի ըրած բարիքներուն համար՝ միայն
իրեն շնորհակալ ըլլալու ես, որովհետեւ ինք իր ստը-
կովը քեզի օգներ է: Բայց ինքն ալ քեզի մեծ շնոր-
հակալութիւն մատուցանելու պարտական է. վասն զի
զինքը մեծ դժբախտութենէ ազատեցիր: Ստուգիւ թէ
որ դուն եկած աչքս բացած չըլլայիր, այնպէս բարկա-
ցած էի, որ մէյ մ'ալ չէի ուզեր երեսը տեսնել:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ի՛նչ կ'ըսէք, Պարոն. ուրեմն ես աշխարհքիս ա-
մենէն երջանիկ մարդն եմ, որովհետեւ իմ ամենամեծ
բարերարիս ծառայութիւն մ'ըրած եմ:

ՊՐ. ՎԱՀԱՆ

Ան թշուառական Բաբկէնը՝ զխեղճ տղան սրտէս
բոլորովին մերժել տուած էր: Ես ալ՝ այնչափ անգամ
անկէ խաբուելէս, անոր չարասրտութեան գործքերը
տեսնելէս ետեւ՝ ի՛նչպէս կրցայ նորէն իրեն հաւտալ: ...
Բայց վերատեսուչը, վերատեսուչը:

ԱՏՈՄ

Արնայ ըլլալ որ եղբայրս վերատեսուչն ալ խաբած
ըլլայ:

ՊՐ. ՎԱՀԱՆ

Բայց գրեր է որ փախած է. վայ ինձի, թէ որ
յուսահատութենէն զլուխը բան մը դայ, թէ որ վնասի
մը հանդիպի նէ:

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Շուտով ինձի ձի մը տուէք. աշխարհքիս ծայրն
ալ ըլլայ նէ՝ կը գտնեմ կը բերեմ: (Ա՛ռ-զէ վազել
դուրս ելլել:)

ԳԱՐԵԳԻՆ՝ ՂԵՒԸ ԲԻՆԵԼԸ:

Ստուգիւ, սիրելի մօրեղբայր, իրեն թողութիւն
կու տայք:

ՊՐ . ՎԱՀԱՆ

Թեպէտ եւ բոլոր վրայի զգեստներն ալ ծախած
 քլար, ամենեւին բանի տեղ չէի դներ, մանաւանդ
 զինքն աւելի կը սիրէի: (Գարեգին Արո՞թն ահանջն է վար
 խօսք մը հ'ըսէ եւ ետեւի դանկն դուրս հ'ելլէ:)

ԱՏՈՄ

Իսկ թէ որ հոս քլար նէ, սիրելի հայր:

ՊՐ . ՎԱՀԱՆ

Հոս . ինչ, զինքը տեսնող եղեր է . ուր է, ուր է:

ԱՏՈՄ դուրսը եւ քանայ:

Ահաւասիկ, սիրելի հայր, փնտռածնիդ:

Տ Ե Ս Ի Լ Դ Ի Ռ .

ՊՐ . ՎԱՀԱՆ, ԱՏՈՄ, ԳԱՐԵԳԻՆ, ԳՐԻԳՈՐ,
 ՀԱՄԲԱՐՉՈՒՄ

ԳՐԻԳՈՐ ներս վաղելով՝ մօրեղբօրն սրտաւորէր ինչայ, ան ալ
 շնորհ եւ քրի: Հասեալնս՝ ուղի ծանր իլա՞ծ՝ մէջ մը Պր . Վա-
 հանին, մէջ մը Գրեգորին յերանդանն սրտաւորէր եւ պօքնէ:

Սիրելի մօրեղբայրս, ուրեմն կը ներկէք, թողու թիւն
 կու տայք:

ՊՐ . ՎԱՀԱՆ՝ ԼՈՒՎ:

Թողու թիւն մի տալ . . . քրած բարեգործութեամբդ
 արժանի ես որ զքեզ յառաջուրնէ տասնապատիկ աւել-
 լի սիրեմ:

ԳՐԻԳՈՐ

Շնորհակալ եմ, շնորհակալ եմ, իմ ամենասիրելի
 մօրեղբայրս, իմ հայրս . . . : Ա՛հ, թէ որ աս մարդուն,
 թէ որ իր զաւկրներուն խեղճութիւնը տեսած քլայիք .
 թէ որ խղճերնիդ միշտ ըսեր որ իրենց դժբախտու-
 թեան պատճառը դուք էք . . . :

ՀԱՄԲԱՐՉՈՒՄ

Չէ, չէ . պատճառը՝ միայն ես եմ . ինչո՞ւ զձեզ
 քովս առի, ինչո՞ւ ձերը ձեռքերնիդ թող տալով՝ վար

իջայ . . . : Բայց ինչպէս ալ կրնայի ձեզի բան մը զլա-
նալ . եթէ գիտնայի որ կառքը մարմնոյս վրայէն պիտ' որ
անցնի, չէի կրնար չէ ըսել :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Բայց ինչո՞ւ ինձի չգրեցիր . լաւագոյն չէր որ ժամա-
ցոյցդ ու գրքերդ ծախելու տեղ՝ ինձմէ ստակ ուզէիր :
Ըրածդ միշտ անխոհեմութիւն է, որովհետեւ տղայ մը
ունեցածներուն գինը չիգիտեր, եւ առանց ծնողացը
գիտութեան՝ պէտք չէ որ զանոնք ծախէ :

ԳՐԻԳՈՐ

Այնպէս է, իրաւունք ունիք . բայց որովհետեւ Համ-
բարձու մը վաճառած էիք, անոր համար կը վախնայի որ
հրաման չէք տար իրեն օգնելու եւ խեղճ մարդն իր ու-
ղորմելութեան մէջ կը մնայ, որն որ ստուգիլ ինձի մա-
հուան հաւասար էր :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Բայց ուրիշ բան մ'ալ ունիմ : Գիշեր մը վարժա-
րանէն դուրս ես մնացեր . ան գիշերն ո՞ւր անցուցիր :

ԳՐԻԳՈՐ

Ան իրիկունն էր որ Համբարձումին ստակ տարի :
Գիտէի որ դուռը ժամը տասնին կը գոցուի եւ անոր
համար կ'աճապարէի որ ատենին հասնիմ . մէյ մ'ալ
մթէն ճամբաս շփոթեր եմ, անանկ որ հազիւ տասն-
ուամէկին կրցայ վարժարանին քովը դանուիլ :

ԳԱՐԵԳԻՆ

Ուրեմն գիշերն ո՞ւր մնացիր

ԳՐԻԳՈՐ

Ասդին անդին քիչ մը պարտելէն ետեւ՝ պարսպ
խուղ մը գտայ, մէջը մտայ, քարի մը վրայ պառկեցայ :
Աեանքիս մէջ անանկ հանգիստ ու անոյշ քնացած չու-
նէի . այնչափ ուրախ էի Համբարձումին օգնութիւն
ընելուս համար :

ԱՏՈՄ

Ա՛հ, չարասիրտ Բաբելէն, ասոնց վրայ բառ մ'ալ
չիղրեր, որոնք անշուշտ դիտէր :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Հիմակուրնէ ետեւ՝ ալ իմ որդիս չէ, դուն ես անոր
տեղ իմ սիրելի զաւակս, զքեզ . . . :

ԳՐԻԳՈՐ

Չէ, սիրելի մօրեղբայրս, չեմ ուզեր ուրիշին մնա-
սոյն երջանիկ ըլլալ, մանաւանդ ձեր որդւոյն մնասովը .
ստուգիւ չարութեամբ ըրած պիտ'որ չըլլայ : Ա'աղաչեմ
սէրերնիդ իրմէ մի վերցընէք :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Լաւ է, ուրեմն թող մնայ վարժարանը, չեմ ուզեր
որ եւ ոչ պարապոյ ժամանակը հոս դայ, մինչեւ որ բո-
լորովին չուղղուի :

ԳՐԻԳՈՐ յեւեւ էլ պատիւ :

Սիրելի մօրեղբայր, ուրիշ աղաչանք մ'ալ ունիմ,
թէ որ կը կատարէք նէ՛ զիս ամենէն երջանիկ մարդը
կ'ընէք :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Ըսէ տեսնեմ ինչ է :

ԳՐԻԳՈՐ

Համբարձումը նորէն քովերնիդ առնէիք : Ստու-
գիւ . . . :

ՊՐ . ՎԱՀԱՆ

Ո՛վ կրնայ այսպիսի աղաչանք մը մերժել . այսօրուր-
նէ իմ ծառայութեանս մէջն է :

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Ո՛հ, իմ սիրելի տէրս, ստոյգ է . . . երազ չէ՞ ար-
դեօք . . . : Ո՛վ իմ բարեսիրտ Պարոնիկս, շնորհակալ
եմ, հազար անգամ շնորհակալ եմ :

4, C U C U

4 U U

U' S T O T E L, C' S E U T R

Ա Ն Ձ Ի Ն Ք

ՍՈՒՐԷՆ, Սիւնեաց սեպուհի:

ՎԱՍԱԿ, իր որդին ու յաջորդը:

ԽՈՍՐՈՎ, Վասակայ որդին, 24 տարւան երիտասարդ:

ՏԻՐԻԹ, Վասակայ տան հազարապետը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ, Խոսրովին դայեկորդին:

ԲԱԶՈՒԿ, զինուոր, Խոսրովին ծառայութեան մէջ:

ԿԻՐԱԿՈՍ, դեղացի:

ՈՒՐԻՇ ԳԵՂԱՅԻՆԵՐ:

Առաջին արարուածը՝ Սիւնեաց սեպուհին գղեկին առ-
ջեւը, բայց դաշտի վրայ է. երկրորդ արարուածը՝ գղե-
կին ներքին հրապարակին մէջ. երրորդ արարուածը՝
նոյն գղեկին մէկ սրահին մէջ:

Վ Ա Ս Ա Վ

Կ Ա Մ

ԱՆՏՈՒԵԱԼ, ԲՆՏԱՆՏՈՒՄ

ԱՐԱՐՈՒՄՆԵՐ

ՏԵՍԻՍ, Ա.

ԿԻՐԱԿՈՍ արանցին, զի յերեւել աստուծոյ յիշատակսն, զի յիշատակսն յիշատակսն յիշատակսն:

Փառք Աստուծոյ, վերջապէս հասայ. երեք ժամ է՝ որ անտառին մէջ առանձին կը թափառէի. գիշեր ատեն ասանկ զարհուրելի տեղ մը առանձին պտրտիլը մարդը կը սարսափեցընէ, որչափ որ քաջասիրտ ալ ըլլայ: Աղէկ որ հետս լապտեր մ'առեր եմ: . . . Ար յուսամ որ ժամանակէն յառաջ հասայ: Արդեօք սեպուհն ինծի ինչ պիտի զրուցէ . . . : Ասոր արեւն ելլելէն ժամ մ'առաջ՝ գղեկին առջեւը գտնուէ, ըսաւ երէկ իրիկուն Տիրիթ. բայց՝ հասկըցա՞ր, արեւն ելլելէն ժամ մ'առաջ: Կարծես թէ խուլ եմ կամ խօսք չհասկըցող մարդիկներէն: . . . Գեռ ժամանակ կայ, քիչ մը հանդիմ, (Գեպնին լրաց կը նստի:) մինչեւ որ Ասանկ սեպուհն իր պատուէրները տայ: (Ար խօսէ:) Անօթի փորանց երեք ժամ քալել՝ քիչ բան չէ: (Ար սկսի սփռել:) . . . Բայց այս ինչ է . . . : Երգելու ձայն մը կայ . . . : (Ար վախճայ:) Արդեօք ուսկից է: . . . Կարծես թէ գեանին տակէն կու գայ: . . . Առանց կարծեաց ոգիներ պիտ'որ ըլլան: (Միտ կը դնէ:)

ՁԱՅՆ ՄԸ՝ գեպնին ասանկն երգելով:

Հրպարտ որդին, հայրանարգուն, խեռն ու վէս
Ատելի է ու գարշ երկնից եւ մարդու:

ԿԻՐԱԿՈՍ

Անշուշտ ոգիներ են . . . : Փախչիմ, փախչիմ : (Որո՞հ էլէսէ :)

ՁԱՅՆԸ

Ամէնը զինք կ'ատեն անգուժ իժի պէս,
Որ բարերարն իր նեաով խոց կը թողու :

ԿԻՐԱԿՈՍ

Աս ի՛նչ փորձանք է գլուխս եկած փորձանքը . չեմ
ալ կրնար քայլ մ'առնել, կարծես թէ ոտուրներս գե-
տինը գամուած են :

ՁԱՅՆԸ

Գետնատարած արտասուալից ջերմ բողոք
Մինակ միջոց է բերելու Տէրն յողոք .
Բայց Բարձրեալ Տէրն իր բողոքին չիլսեր :

ԿԻՐԱԿՈՍ

Հիմա վախէս կը մեռնիմ : . . . կարծես թէ քիչ մը
ժամանակէ վեր ոգիներն ետեւէս են ինկեր . . . : Աեր-
ջապէս գլուխս բան մը պիտի բերեն : . . . Հա՛, արդեօք
տեսածս ստոյգ է . Տիրի՛թը կու գայ : . . . (Արդ ո՞րո՞ւն :)
Տիրի՛թ, Տիրի՛թ . . . եկն՛ւր . . . շուտ օգնու՛թեան հասիր :

Տ Ե Ս Ի Լ Բ .

Տ Ի Ր Ի Թ , Կ Ի Ր Ա Կ Ո Ս

Տ Ի Ր Ի Թ

Աս ի՛նչ վայնասուն է , աս ի՛նչ դռոււմ գոչում
է . . . : Գո՛ւն ես եղեր , անմիտ , անպուշ :

ԿԻՐԱԿՈՍ

Հա , հա , դուն միշտ անմիտ , անպուշ ըսէ . տեղս
դուն ըլլայիր՝ նայինք արդեօք աւելի չէիր պուար : Ա-
պուշ ըսելու տեղ մտիկ ըրէ :

Տ Ի Ր Ի Թ

Ի՛նչ բան մտիկ պիտ'որ ընեմ . բան մը չիլսուիր :

ԿԻՐԱԿՈՍ

Ի՛նչ , գետնին տակէն հաստ ձայն մը չե՞ս լսեր :

ՏԻՐԻԹ

Չայն մը:

ԿԻՐԱԿՈՍ

Հա, ձայն մը:

ՏԻՐԻԹ

Խենթեցեր ես դուն, Կիրակոս, ոչ ձայն կայ ոչ ձիւն:

ԿԻՐԱԿՈՍ

Ա՛լ ասոր չեմ կրնար դիմանալ. զիս խենթի տեղ
դնել: Գիտցիր որ ես ոչ խենթ եմ ոչ ալ զինով.
սատեղը մեր սեպուհին սպասած ատենս՝ դետնին տա-
կէն հաստ ձայն մը լսեցի, որ տրամութեամբ կ'երգէր:
Այնպէս որ աս խօսքերն ալ բացայայտ ըուեցան. Բայց
Բարձրեալ Տէրն իր բողոքին չիլսեր:

ՏԻՐԻԹ

Դուն երազ տեսեր ես, կամ երեւակայութիւնդ
տաքցեր է:

ԿԻՐԱԿՈՍ

Հա՛ նայինք հա՛, հիմա կրնան մի զիս համոզել որ
լաածս՝ լաած չըլլամ. անանկ ստոյգ զիտեմ՝ ինչպէս
ստոյգ զիտեմ որ հոս կեցեր հետդ կը խօսիմ: . . . Բայց
աս ինչ է, զքեզ ալ մտածմունքն առաւ. կարծեմ
կամաց կամաց ըսածիս կը հաւտաս կոր. անանկ չէ՞ մի:

ՏԻՐԻԹ՝ Ինչ իրեն:

Արդեօք ծածուկ դետնափորին դուռը կղպելու մոռ-
ցեր եմ: . . .

ՁԱՅՆԸ

Փուճ տեղ կու լայ իր մեղքն, որն որ արդ կ'ատէ,

Կ'ուզէ որ զինքն երկնից շանթէն ազատէ.

Բայց Բարձրեալ Տէրն անոր ձայնին չիլսեր:

(Տերին լաղելով կ'երեւայ:)

Տ Ե Ս Ի Լ Գ.

ԿԻՐԱԿՈՍ

Սուրբ նայէ մէյ մը . իմ վրաս կը ծիծաղէր . . . ինք
 ձայնը լսելուն պէս՝ կ'ընկր դրաւ . . . : Հիմա չըսէ որ ե-
 րազ եմ տեսեր, . . . չէ՛ խենթ եմ . . . , չէ՛ անմիտ
 եմ . . . : Բայց ի՞նչ պիտ'որ ընեա . մարդիկ ասանկ են
 մեծ մեծ կը ջարդեն , վտանգը հեռու եղած ա-
 տեն՝ ուրիշներուն վրայ կը ծիծաղին . . . բայց քիչ մը
 վտանգ մ'ելլէ դիմացնին՝ ամենէն առաջ փախչողն՝ ա-
 մենէն աւելի քաջասիրտ ձեւացողը կ'ըլլայ : . . . Այս-
 պէս փախչիլ , զիս ասանկ առանձին ձգել , հա՛ . . . ես
 ալ փախչիմ՝ կ'ըսեմ , չեմ կրնար , ծնկուրներուս դո-
 րութիւնը կարեր է : . . . Բայց ա՛լ լարնցած է , ա՛լ ողի-
 ներէն ճիւղներէն վախնալու բան մը չկայ . . . անշուշտ
 ան լսածս իր վերջին երգն էր . . . : (Մտիկ կ'ընէ :) Ա՛լ
 հիմա ձայն չիլսուիր : Նստիմ քիչ մ'ալ ուտեմ :
 (Կը սիտի ուտել :) Աս մեր սեպուհն երբ պիտի դայ : Թէ
 որ այնչափ ուշ պիտի դար նէ՛ ինչո՞ւ զիս դիշերանց
 ճամբայ հանել տուա :

Տ Ե Ս Ի Լ Գ.

ԿԻՐԱԿՈՍ, ՏԻՐԻԹ

ՏԻՐԻԹ՝ Ինչ էրօք :

Խեղճ ծերունին երգելով ցաւոցը սփոփանք մը
 կ'ուզէր գտնել . . . քիչ մնաց ամենայն ինչ կը յայտ-
 նուէր : . . . Սա անմիտը քիչ մը փորձենք , նայինք
 բան մ'իմացեր է մի :

ԿԻՐԱԿՈՍ

Քթիդ տակէն ի՞նչ կը մըմնաս . լսածդ բարձր ըսէ ,
 որ ես ալ լսեմ :

ՏԻՐԻԹ

Սա քու լսած ձայնիդ վրայ կը մտածեմ :

ԿԻՐԱԿՈՍ

Ի՞նչ , գուն չլսեցիր , որ :

ՏԻՐԻԹ

Ո՞վ, ե՞ս :

ԿԻՐԱԿՈՍ

Հա՛, դուն :

ՏԻՐԻԹ

Ամենեւին բան մը չլսեցի : Բայց դուն ստուգիւ ձայն լսեցիր :

ԿԻՐԱԿՈՍ

Հիմա խելքս կը թռցրնեմ : Աղէկ մը զրուցէ, քիչ մը յառաջ դետնին տակէն երգելու ձայն մը չլսեցիր, եւ զիս առանձին թող տալով՝ չվազեցիր չգացիր :

ՏԻՐԻԹ

Ստուգիւ, Աիրակոս, երազ կը տեսնես. ո՛չ ձայն լսեցի եւ ո՛չ ալ տեղէս շարժեցայ :

ԿԻՐԱԿՈՍ

Ան ատեն պէտք է որ երազ ըլլայ : Բայց չէ (Ինչ + զինչը կը շօշափէ :) ահաւասիկ ես եմ. դուն ալ Պր. Տիրիթ ես, առջեւի դղեակնիս՝ Վասակ սեպհին բնակարանն է. հիմակ առտու է, արեւը նոր ելաւ : Քիչ մը յառաջ՝ սատեղը նստեր կերակուր կ'ուտէի, աւասիկ կերակրոյս մնացորդները : Աերած ժամանակս հաստ ձայն մը լսեցի, մէկ, երկու, երեք անգամ : Ասոր վրայ դուն եկար. մէկտեղ խօսած ատեննիս՝ ձայնը նորէն կրկնուեցաւ. դուն վազելով ելար դացիր. հիմա նորէն եկար : Թէ որ ասիկայ երազ է նէ, ստուգիւ այլանդակ երազ մըն է : . . . Բայց հա՛, հիմա միտքս եկաւ :

ՏԻՐԻԹ

Ի՞նչ :

ԿԻՐԱԿՈՍ

Բոլոր աս եղածները դերբնական բաներ են. դղեկին քաջերն են՝ աս բաներս ընողները :

ՏԻՐԻԹ

Ի՞նչպէս, ի՞նչ լսել կ'ուզես : (Ինչ + իրի :) Իր մոլորութեան մէջ թող տալու է :

ԿԻՐԱԿՈՍ

Հա , այնպէս է , դղեկին քաջերն ու ճիւղներն են .
արդէն ամէն մարդ դիտէ որ աս դղեակը ճիւղներով
լեցուն է :

ՏԻՐԻԹ

Ի՛նչ , ասոր վրայ խօսող կայ :

ԿԻՐԱԿՈՍ

Ուրիշներուն խօսքին ի՛նչ հարկ կայ , դուն անձամբ
փորձն առած չե՞ս :

ՏԻՐԻԹ

Ստոյգ է որ դղեկին մէջ երբեմն երբեմն շղթայի
ձայներ , հառաչանքներ կը լսուին . բայց ասոր վրայ շըր-
ջակայ տեղերն ի՛նչ կ'ըսեն :

ԿԻՐԱԿՈՍ

Չե՞ս դիտեր . եկուր քեզի պատմեմ : Սատեղը նրա-
տինք եւ նախ մէյմէկ դինի նետենք . ուստի նախ եւ
յառաջ դիտցիր որ ես շատ խօսիլ ու լսածս ասդին
անդին տարածել չեմ ուզեր , որովհետեւ իմ հանդու-
ցեալ մեծ մայրս , Աստուած ողորմի հոգւոյն , ինձի
միշտ կ'ըսէր . Ահրակոս , որդիս , կ'ըսէր , մարդս շատ
անգամ խօսելուն համար կը զղջայ , կ'ըսէր , բայց լռե-
լուն համար՝ երբեք չիզղջար , կ'ըսէր : Եւ ինք զինքս դո-
վելու համար չէ , ստուգիւ կ'ըսեմ որ իր խրատները
շատ աղէկ կը բռնեմ : Իսկ արդ ուրեմն՝ հիմա մեր իշ-
խանին վրայ խօսուածին դալով . . . : Բայց ուրիշին բան
պիտի չզրուցես , հա՛ :

ՏԻՐԻԹ

Վրաս ապահով կրնաս ըլլալ :

ԿԻՐԱԿՈՍ

Աղէկ . ուստի եւ ըսելիքներուն ուրիշ վկայ չեմ առ-
ներ՝ բայց եթէ իմ հանդուցեալ մեծ մայրս , Աստուած
ողորմի հոգւոյն , որն որ իննսուենուիրէք տարւան մեռաւ ,
եւ ստուգիւ կ'ըսեմ մեռած ասեն՝ թէպէտ հիւան-
դոտ , բայց բաւական զօրաւոր էր : Իսկ արդ ուրեմն՝

մէկ անգամ մը աս իմ մեծ մայրս, իրիկունը գթան
մանած ատեն՝ զիս անունովս կանչելով ըսաւ. Ահրա-
կոս: — Ի՛նչ կայ, սիրելի մայրս, ըսի: — Մեր Աա-
սակ իշխանը կը ճանչնաս՝ անանկ չէ, ըսաւ: — Ար
ճանչնամ, ինչո՞ւ պիտի չճանչնամ, ըսի: — Ստուգիւ
կ'ըսեմ, ըսաւ, աւելի կ'ուզեմ աղքատ, հիւանդոտ,
պառաւ, տղեղ ըլլալ՝ ինչպէս որ եմ, ըսաւ: Խեղճ
կնոջ բերանն աղբայ մ'ալ չէր մնացեր:

ՏԻՐԻԹ

Պատմութիւնդ պատմէ, առանց պնդէս մանրա-
մանն տեղեկութիւններու իջնալու:

ԿԻՐԱԿՈՍ

Ինչպէս որ կ'ուզէք. իսկ արդ ուրեմն՝ մեծ մայրս
ինծի ըսաւ. Աւելի կ'ուզեմ աղքատ, հիւանդոտ, պա-
ռաւ ու տղեղ ըլլալ՝ ինչպէս որ եմ, ըսաւ, քան թէ
հարուստ, առողջ, երիտասարդ ու գեղեցիկ ըլլալ՝ եւ
Ասասկ անուանուիլ, ըսաւ: — Ինչո՞ւ, ըսի: — Ասան
զի Աստուած արդար է, ըսաւ, եւ մեղքն երբեք ան-
պատիժ չիթողուր, ըսաւ: — Աս ի՛նչ ըսել է, ըսի.
ուրեմն իշխաննիս չարագործ մարդ է, ըսի: — Մտիկ
ըրէ, սրդիս, ըսաւ. տասը տարի է որ հանգուցեալ
Սուրէն իշխանը՝ հիմակուանին հայրը մեռաւ, ըսաւ . . . :
Հա՛, հա՛, Տիրիթ, ի՛նչպէս մտիկ կ'ընես:

ՏԻՐԻԹ

Պատմութիւնդ յառաջ տար:

ԿԻՐԱԿՈՍ

Իսկ արդ ուրեմն՝ մեծ մայրս ըսաւ. Իշխանին մեռ-
նելուն առջի իրիկունն իր ծեր ծառան Թադէոս լած
էր որ մեռնող իշխանն իր քովն եղողներուն ըսաւ որ
Աստուած արդար է, պէտք է որ մեռնիմ, ըսաւ. եւ
ետքը շնկոց մ'ելաւ, ու ետքը իշխանն ըսաւ. Աստուած
յանցանացդ թողութիւն տայ, սրդեակ, ըսաւ, ու
ետքը ալ բան մը չլուեցաւ, ու ետքը երկրորդ օրը
տարին թաղեցին, ըսաւ:

ՏԻՐԻԹ

Առանց կարծեաց մեծ մայրդ աս պատմութիւնը
քեզմէ ուրիշ շատերուն ալ պատմած պիտ'որ ըլլայ :

ԿԻՐԱԿՈՍ

Չէ, կրնաս ապահով ըլլալ, որ ուրիշ մարդու զրու-
ցած չէ :

ՏԻՐԻԹ

Անտարակոյս դուն ալ ուրիշին պատմած պիտ'որ
չըլլաս :

ԿԻՐԱԿՈՍ

Ե՞ս . ի՞նչ, զիս բացբերանի տեղ կը դնես : Ա'երդ-
նում որ Վարդանոյշ խաթունէն, Ատոմ Երկրագոր-
ծէն, Սանդուխտէն, եւ ուրիշ մէկ քանի հոգիէ զատ'
մարդու մը չեմ պատմած :

ՏԻՐԻԹ՝ Ի՞նչ Իրօք :

Շատխօսութիւնդ քեզի ծանր պիտի նստի :

ԿԻՐԱԿՈՍ

Ի՞նչ ըսիր, ի՞նչ ըսիր . կարծեմ ըսածներս այնչափ
չես ակտրտեր : Բայց ստոյգ խօսքեր են, վասն զի իմ ու-
ղարմած հոգի մեծ մայրս, Աստուած ողորմի հոգւոյն,
իր իննսունուիրէք տարւան կեանքին մէջ երբէք սուտ
խօսած չունէր : Եւ ինձի ալ միշտ կը զրուցէր . Արա-
կոս, կ'ըսէր, չըլլայ որ սուտ խօսիս ու մէկու մ'անի-
րաւութիւն ընես, կ'ըսէր . ստութիւնն ու անիրաւու-
թիւնն՝ որչափ որ ալ ծածուկ գործուին՝ միշտ կը յայտ-
նուին, կ'ըսէր : . . . Բայց սա գինիէն մէյ մ'ալ խմենք :

ՏԻՐԻԹ

Ես ծարաւ չունիմ :

ԿԻՐԱԿՈՍ

Անանկ է նէ՛ ես կը խմեմ : (Խօժընտ աստե՛ն Վասակ
սեպտեմբեր ըրաց կը հասանի :) Ո՛հ, սեպտեմբեր կու գայ :

Տ Ե Ս Ի Լ Ե .

Վ Ա Ս Ա Կ , Տ Ի Ր Ի Թ , Կ Ի Ր Ա Կ Ո Ս

Վ Ա Ս Ա Կ

Տ Ի Ր Ի Թ , ա ս ի կ ա յ է ը ս ա ծ մ ա ը դ դ :

Տ Ի Ր Ի Թ

Հ ը ր ա մ եր է ը , Տ է ը : (Կ ի ր ա կ ո ս կ ը շ թ ո լ ի է - ա ն շ ո ը ր հ + կ ե ր ա ղ ճ ը + ա ն ի ճ ը ա ն զ ա ծ Բ ա ր է - կ ո - ս ա յ :)

Վ Ա Ս Ա Կ ' Կ ի ր ա կ ո ս ի ն :

Մ օ ա ե կ ու ը ր ն ա յ ի մ : Ա ն ու ը ն դ ի ն չ է :

Կ Ի Ր Ա Կ Ո Ս

Ա ն ու ը ն ա , ա ն ու ը ն ա ' Կ ի ր ա կ ո ս է . ո ղ ը ր մ ա ծ հ ո ղ ի . . . :

Վ Ա Ս Ա Կ ' Տ ր ա ծ է լ ո Վ :

Ա ղ է կ է :

Կ Ի Ր Ա Կ Ո Ս ' Ի ն + Ի ր ի ն :

Ն ա յ ի ն ը ս ու ը ր վ ե ը ջ ն ու ը ր պ ի ա ' ո ը ե ը թ ա յ :

Վ Ա Ս Ա Կ

Ք ու մ ա մ դ ի մ հ օ ը ս Ս ու ը ի ն ի շ խ ա ն ի ն ծ ա ու ա յ ու թ ե ա ն մ է ջ չ է ը մ ի :

Կ Ի Ր Ա Կ Ո Ս

Ե ս ժ ա մ մ ա մ չ ու ն ի մ . չ ե մ հ ա ս կ ը ն ա ր ի ն չ ը ս ե լ կ ' ու ղ է ը . . . : Հ ա՛ , հ ա՛ , ի մ ա ղ ա յ , մ ե ծ մ ա յ ը ս կ ը հ ա ը ը ը ն է ը : Հ ը ր ա մ եր է ը , ի մ ո ղ ը ր մ ա ծ հ ո ղ ի մ ե ծ մ ա յ ը ս , Ա ս ա ու ա՛ ծ ո ղ ը ր մ ի հ ո ղ լ ո յ ն . . . :

Վ Ա Ս Ա Կ

Ա ն շ ա տ ա խ օ ս պ ա ու ա ը ր ա ս դ ղ ե կ ի ն բ ն ա կ չ ա ղ վ ը ա յ զ ա ն ա զ ա ն ա ը տ ա ը ը յ կ ա ը դ ի դ է պ ը ե ը չ ա պ ա տ մ ե յ մ ի :

Կ Ի Ր Ա Կ Ո Ս

Ի մ ո ղ ը ր մ ա ծ հ ո ղ ի մ ե ծ մ ա յ ը ս շ ա տ ա խ օ ս ու թ ի ը ն ր կ ' ա տ է ը . դ ղ ե կ ի ն բ ն ա կ չ ա ղ վ ը ա յ բ ա ն մ ը խ օ տ ա ծ չ ու ն է ը :

Վ Ա Ս Ա Կ

Բ ա յ ղ ի ն ծ ի պ ա տ մ ե ղ ի ն ո ը դ ու ն դ ի ն ե տ ա ն մ ը մ է ջ ա ն ո ն ղ վ ը ա յ զ ա ն ա զ ա ն խ օ ս ը ե ը ր ը ը ե ը ր ե ս , ա ն ա ն կ ը ս ե ը ը վ ո ը մ ե ծ մ ծ ը մ է դ ը ս ա ծ ե ս :

ԿԻՐԱԿՈՍ

Ի՛նչ, հա՛, իմացայ, ան զարմանալի բանին վրայ է
խօսքերնիդ, որն որ ես երկրագործ Ատովին պատմեցի :
Անիկա բան մը չէ, Տէր, արդէն ամէնքն աղէկ դիտեն
որ դղեկին ճիւղներուն գործքն է անիկա . կամ թէ
բսեմ, ուրիշ բան չէ, բայց եթէ . . . :

ՎԱՍԱԿ

Տիրիթ, ինձի նայէ, սա մարդս բանտ տար, ամբողջ
խոթէ, եւ ութ օր հացով ու ջրով միայն անցընէ թող :

ԿԻՐԱԿՈՍ

Կ'աղաչեմ շնորհք ըրէք, Տէր :

ՎԱՍԱԿ

Գնա՛ :

ԿԻՐԱԿՈՍ

Ա՛հ, Տէր, գթացէք վրաս, դոնէ ողորմելի հօրս
գթացէք, զիս մի մեռցընէք . դժբախտ հայրս ինձմէ
ուրիշ մարդ չունի : Արդեօք գլուխն ինչ կու գայ, մի-
նակ ինչ կ'ըլլայ . ինք ամենեւին յանցանք չունի : Թու-
ղութիւն տուէք, Տէր, թողութիւն : (Ին՜ իրօք :) Շի-
տակը աղէկ բան, կարծես թէ այսօր կանուխ ելայ ե-
կայ՝ որպէս զի բանտ մտնեմ :

ՎԱՍԱԿ՝ Կիրակոսին :

Հայրդ դո՛ւն կը հողաւ :

ԿԻՐԱԿՈՍ

Հապա՛ . ասիկայ յայտնի բան է . ինք ծեր է, իսկ
ես՝ երիտասարդ . երբ որ ես տղայ էի, զիս ինքը հո-
գաց, հիմակ ես զինքը կը հողամ, վասն զի ծերունի ու
հիւանդ է :

ՎԱՍԱԿ՝ Ին՜ իրին :

Ո՛հ, սա միամիտ գեղացին զիս որչափ կ'ամբըցընէ .
իր ընթացքն իմինէս որչափ աւելի ազնուական է :

ԿԻՐԱԿՈՍ

Տէր, բանտ պիտ'որ երթամ :

ՎԱՍԱԿ

Չէ, հարկ չկայ. բայց վախցիր, բարկութենէս դու
դայ, թէ որ վրաս բարի կամ չար խօսելու ըլլաս :

ԿԻՐԱԿՈՍ

Ա՛հ, Տէր . . . :

ՎԱՍԱԿ

Գնա, կորսուէ առջեւէս :

ԿԻՐԱԿՈՍ՝ Ի՜նչ ի՛րեն :

Ասկէ աւելի աղէկ բան չեմ ուզեր :

Տ Ե Ս Ի Լ ՝ Օ .

ՎԱՍԱԿ, ՏԻՐԻԹ

ՏԻՐԻԹ

Եւստ կը զարմանամ որ աս որոշ ձեռքերնէդ փա-
խուցիք :

ՎԱՍԱԿ

Ի՛նչ ընեմ. հօրը վրայ ունեցած սաստիկ դուժն ու
սէրը զիս արդահատութեան շարժեց :

ՏԻՐԻԹ

Այսպէս բան մտքէս ալ չէի կրնար անցընել. բայց
արդէն քիչ մը ժամանակէ վեր բոլորովին փոխուած էք :

ՎԱՍԱԿ

Ո՛հ, Տի՛րի՛թ. դիտնայի՛ր ի՛նչ վշտերու, որչափ ա-
ղէտից մէջ կը դանուիմ :

ՏԻՐԻԹ

Ի՛նչ, կը կարծէք որ ես ալ ուզածիս պէս հան-
դարտ եմ :

ՎԱՍԱԿ

Մէջերնիս ի՛նչ համեմատութիւն կայ :

ՏԻՐԻԹ

Ի՛նչ համեմատութիւն . . . ան զանազանութիւնն
է՛ որն որ անպիտան ողորմելի անողո՛ւմի մը մէջ եւ . . .

ՎԱՍԱԿ

Տիրիթ, յանդգնութիւնը մէկդի թող:

ՏԻՐԻԹ

Տէր, կարծեմ կը բարկանաք:

ՎԱՍԱԿ

Այ վատ թշուառական զքեզ. ինչ խափան կայ,
սլ կ'արդելէ զիս այսպիսի հրէշ մը երկրէս ջնջելու:

ՏԻՐԻԹ՝ Ընդամենութեամբ մը յետոյ Վասակին ոտը ին դնէ,
եւ հրապարակութեամբ անոր ին նայի:

Կարծեմ չէիք յանդգներ . . . թշուառական Տիրի-
թը, վատանուն մարդը, բոլոր ձեր բարկութեան . . .
սլ ազնուական, առաքինի Վասակ, Տէր, սեպուհ . . . :

ՎԱՍԱԿ

Սա թուրը, աննշան, սա թուրը սիրտդ կը խոթեմ:

ՏԻՐԻԹ

Ինչ, ըսելիքս մտիկ ըրէք. կը կարծէք որ քառա-
սուն տարւան կենացս մէջ զգուշութիւն ընելու չեմ
տորված: Վասակ, ձեզի պէս մարդիկներու դեմ՝ մէկը
որչափ զգուշութիւն ընէ՝ քիչ է: Ձիս մեռցրնել կ'ու-
զէք: Մեռցուցէք, բայց դողացէք որ ես ձեզմէ յառաջ
չմեռնիմ: Գիտէք արդէն ան գրուած թուղթը, որն
որ զգուշութեամբ կնքուած եւ նօտարի մը յանձնուած
է. անիկա՝ իմ օգնելովս գործած յանցանքներնուդ
պատմութիւնը կը բովանդակէ. եւ մահունէս անմիջա-
պէս ետքը պիտի բացուի . . . Ուրեմն ինչ կ'ըսէք. չէք
խօսիր. ինչու մունջ շփոթած կեցած էք: Հա՛, սուրը
պատեանը դարձաւ. չղարնէք: Չարկէք, վիրաւորե-
ցէք, մեռցուցէք . . . աւասիկ կուրծքս, պատրաստ՝
դիմացնիդ անշարժ կեցեր եմ: . . . Բայց չէ, չէ, ազնիւ
Սեպուհ, հանդարտեցէք եւ թշնամանելն ու յանդիմա-
նելը մէկդի թող տուէք: Մտածեցէք որ յանցանքի
գործակցութիւնը՝ նոյն իսկ ան անձինքները հաւասար
կ'ընէ, որոնց մէջ ծննդեան նկատմամբ մեծ հեռաւորու-
թիւն կայ: Չեզի թողութիւն կու տամ . . . եւ արտա-

քուստ ալ ձեր պատիւը միշտ կ'ուզեմ պահել. բայց
առանձին եղած ատեննիս՝ Վասակ սեպուհն ու Տիրիթ
գերին հաւասար են: Ուրեմն ձեռուրնիդ տուէք, Սե-
պուհ . . . ինչ, կը տարակուսիք, կ'երկբայիք . . . տղայու-
թիւնը թողուցէք . . . : Մնաք բարով, ես ներս, խուցս
կ'երթամ, չըլլայ որ առաւօտեան զովութիւնն ինձի
մնասէ, զիս անհանգիստ ընէ: Ողջ մնալս ձեզի շատ
հարկաւոր է: Մնաք բարով:

Տ Ե Ս Ի Լ Է:

ՎԱՍԱԿ արանքին գլուխը խեղձ, թէ՛ զ Լուսինն ինձն իրի-
Ո՛հ, բարկութիւն, կատաղութիւն, անէծք: Ծա-
ռայ մը, չարագործ մը, բռնաւորներէ աղատուած գերի
մը, Վասակին, Սիւնեաց սեպուհին հաւասար ըլլայ:
Ձեռքս դպաւ դարչելին, իր պիղծ ձեռուրներով՝ իմին-
ներս շօշափեց: Ո՛հ, ամօթ, ամծթ, երկնքի վրէժխրն-
դրութիւն, պատժէ զիս, բոլոր բարկութեանդ բեռը
զլուխս թափէ: Փառասիրութիւն, անյագութիւն,
տես զիս, նկատէ քու զոհդ:

Տ Ե Ս Ի Լ Ը:

ՎԱՍԱԿ, ԲԱԶՈՒԿ, ԳԵՂԱՑԻ ՄԸ

ԲԱԶՈՒԿ՝ Ինչ գինով:

Ղղեակն երբ պիտի հասնինք:

ԳԵՂԱՑԻ

Ահաւասիկ, հասանք:

ԲԱԶՈՒԿ

Սուիկա դղեկին պահակներուն տնակն է:

ԳԵՂԱՑԻ

Հա՛, ան է, . . . աւասիկ Վասակ սեպուհը սա տեղս
կեցած է:

ԲԱԶՈՒԿ

Ուրեմն Վասակ սեպուհն ան է:

ԳԵՂԱՑԻ

Հա՛, ա՛ն է :

ԲԱԶՈՒԿ

Ուրեմն ուզած մարդս աս է. շնորհակալ եմ, բարի գեղջուկ :

ԳԵՂԱՑԻ

Պատուական Պարոն, ինձի բան մը չե՞ս տար :

ԲԱԶՈՒԿ

Ստո՛յգ, աղէկ ըսիր, ինձի պէս պատիւ ու ընչացք ունեցող մարդ մը կուտ պէտք է որ ունենայ . . . : Առ ունեցածս չունեցածս՝ քեզի կու տամ, բարեկամ, քսակս տունը մուցեր եմ . . . : Ուրիշ անգամ գեղէն անցնիմ նէ, առատութեամբ տեղը կը լեցընեմ :

ԳԵՂԱՑԻ

Շնորհակալ եմ :

Տ Ե Ս Ի Լ Թ .

Վ Ա Ս Ա Կ , Բ Ա Զ Ո Ւ Կ

ԲԱԶՈՒԿ

Տէր, կրնամ մի ականջներնուդ թմբուկը կարճ խօսք մը հասցընել :

Վ Ա Ս Ա Կ

Ի՞նչ կ'ուզես :

ԲԱԶՈՒԿ՝ Ի՞նչ Իրե՞ն :

Աս ի՞նչպէս բան է, ի՞նչ խիստ ու դաժան կերպարանք ունի սա մարդը . . . : (Զայնիւն :) Տէր, հրամանոցը կ'ուզէի ըսել թէ նամակ մ'ունիմ, երեւելի մարդու, մեծ զօրապետի մը կողմանէ :

Վ Ա Ս Ա Կ

Երեւելի մարդն ո՞վ է . . . անունն ի՞նչ է :

ԲԱԶՈՒԿ

Անունն ի՞նչ է. հասարակօրէն իրեն տրուած անունը՝ Սկայորդի է. բայց ես գիտեմ որ իր բուն անունը Խոսրով սեպուհ է :

ՎԱՍԱԿ

Որդիէս նամակ կայ : (Նամակը կ'առնէ :)

ԲԱԶՈՒԿ

Ի՛նչ, իմ բարեկամս, իմ մտերիմս ձեր որդի՞ն է եղեր : Ո՛հ, ստուգիւ քաջ եւ բարի որդի մ'ունիք . ես ալ զինուոր եմ . որչափ արիութիւն որ վրաս կայ նէ, անոր վրան ալ կը գտնուի : Ես եւ Խոսրով սեպուհը մի եւ նոյն անձին կամ թագաւորին երկու բազուկներն ենք :

ՎԱՍԱԿ

Գիտեմ, ապահով եմ որ որդիս իր երակներուն մէջ վազած արիւնը չ'անարդեր, հասարակ մարդու մը հետ այնպէս սերտիւ չ'ընտանենար :

ԲԱԶՈՒԿ

Հասարակ մարդ . . . ի վերայ այսր ամենայնի ըսածներս ստոյգ են : Ես ալ քաջութեամբս ու սրտոտութեամբս երեւելի եմ . եւ թէ որ ուզեմ, բարձր աստիճանի եւ ազնուականութեան կրնամ հասնիլ . . . : Ասկէ զատ խօսքերնուդ մէջ ուրիշ պզտիկ անպատեհութիւն մ'ալ կայ : Այս ինքն՝ որ ես անարդ մարդ մ'ըլլամ . . . : Չէ, այնպէս չէ . թագաւորին երեւելի սպասաւորներէն մէկն եմ, ձեր որդւոյն մտերիմը, անոր սիրելի ծառան եմ :

ՎԱՍԱԿ

Հասկըցայ, իմացայ . դղեակ դնա, կը հրամայեմ որ քեզի բան մը չպակսի :

ԲԱԶՈՒԿ՝ Երբեք արեւն՝ ինչ էրեւն :

Ա՛յ դաժան, ի՛նչ խստութիւն էր անիկայ . աղէկ որ խօսքին վերջը սկզբնաւորութեան շինմանիր . վասն զի այնպէս ծարաւ մ'ունիմ՝ որ նմանը չիկրնար ըլլալ :

Տ Ե Ս Ի Լ Ժ .

Վ Ա Ս Ա Կ՝ արանջին, նամակը կարդալով :

Աս ի՛նչ է, որդիս կու գայ, մօտ է եղեր... ուրեմն քանի մը վայրկենէն՝ որդիս պիտի տեսնեմ... խոնարհելով եւ իր հպատակութիւնը ցուցնելով՝ գայ օրհնութիւնս պիտի խնդրէ... ձեռուրներս իր արցունքներովը պիտի թրջէ... : Ո՛հ, կրնամ արդեօք, արժանի՞ եմ երջանիկ ըլլալու... : Ի՛նչ կ'ըսես, Վասակ, քեզի ուրախութիւն... երջանակութիւն... ի՛նչ կ'երազես, սղորմելի, բարեբախտութիւն կ'ուզես. որմէ՞, որդիէ՞դ : Բայց մտածէ մէյ մը՝ դուն հօրդ երջանակութեան պատճառ, անոր ուրախութեան առիթ եղա՞ր... : Քու հայրդ ալ կը սիրէր զքեզ, քու դարձիդ կը բաղձար, սաստիկ սիրով կը սիրէր զքեզ. բայց դուն զինքը... : Ա՛յ դժբախտ, այ անգութ Վասակ, հօրդ ի՛նչ ըրիր... : Ո՛հ, զարհուրելի փառասիրութիւն, դուն զեղեցիկ օրերս թունաւորեցիր : Երկինքն, Աստուած՝ բոլոր դժոխքը սիրտս իջեցուց... : Խոսքով ճամբան է եղեր. ինչո՞ւ, հոս ի՛նչ պիտ'որ ընէ, զինքն սով կանչեց. դարուն պատճառն ի՛նչ է, միտքն ի՛նչ կրնայ ըլլալ : արդեօք սիրտս խոթելու սուր մը հետը չի բերեր... Տիրի՛թ, եկուր, մտիկ ըրէ :

Տ Ե Ս Ի Լ Ժ Ա .

Վ Ա Ս Ա Կ , Տ Ի Ր Ի Թ .

Վ Ա Ս Ա Կ

Տիրի՛թ, վազէ, աճապարէ, որդւոյս դիմացն ելիր. իրեն դրամ տար, քսակը շատ ոսկւով լեցուր. եւ ըսէ որ աս տեղերէն երթայ հեռանայ : Չբուցէ որ իր գգուանքն ինձի ատելի պիտ'որ ըլլան, ըսէ թէ իր գրկախառնութիւնները պէտք է որ սիրտս վերաւորեն :

Տ Ի Ր Ի Թ

Տէր, բաճնիդ չեմ հասկընար :

ՎԱՍԱԿ

Որդիս եկեր հասեր է, դուցէ դղեկին դրան ճօտ
ըլլայ:

ՏԻՐԻԹ

Ա՛ն ուրիշ բան:

ՎԱՍԱԿ

Որդւոյս երեսը չեմ կրնար տեսնել. թէ կը սիրեմ
թէ իրմէ կը վախնամ:

ՏԻՐԻԹ

Հասկըցայ, պատճառն իմացայ: Թէ որ ձեր որդին՝
հօրը դեմ այնպէս վարուի, ինչպէս դուք հօրերնուդ
դեմ... պատճառն աս չէ՞ մի: (Վասակ հասանալեան
նշան հոս արայ:) Ասիկա դժուարին եւ դառն բան է,
բայց ամէն բանին դարման կրնայ դանուիլ: Ես չեմ դի-
տեր, չեմ կրնար ըմբռնել որ որդինիդ ինչպէս կրնաք
ձեզմէ հեռացընել: Իրեն տալու պատճառ մը չունիք.
ուրեմն թող ատէք որ դայ: Թէ որ բարի տղայ մըն է
նէ, ամէն բան աղէկ կ'երթայ. իսկ թէ որ երբեմն եր-
բեմն թշնամութեան նշաններ ցուցընելու ըլլայ, ան
ատեն մենք ալ կը հողանք. բերդը դաղանի ու անձա-
նօթ բանտեր շատ ունի, բանտապետն ալ ի կարգի է:

ՎԱՍԱԿ

Տիրիթ, ի՛նչ կ'ըսես, առաջարկածդ ի՛նչ է:

ՏԻՐԻԹ

Գիտեմ, ըսածս խիստ է, բայց կը յուսամ որ բանն
անոր չիհասնիր: Այսու ամենայնիւ դուք միշտ վրաս
ապահով եղէք, եւ ամէն բան իմ կանխատեսութեանս
թողուցէք:

ՎԱՍԱԿ

Նորանոր յանցանքներու դուռ պիտի բացուի ինձի,
Տիրիթ:

ՏԻՐԻԹ

Տէր, ես չէ՛ չեմ ըսեր, բայց յոյս ունիմ որ...:
Թէպէտ եւ ձեզի բան մ'ըսեմ, մարդը՝ մէյ մը յանցա-

նաց ճամբուն մէջ մանեղէն ետեւ՝ ստուգիւ անկէ ել-
 լելը շատ դժուարին բան է. առաջինը՝ երկրորդին, եր-
 կրորդը՝ երրորդին ճամբայ կը բանայ: Ես ալ պատուաւոր
 մարդ մը կրնայի ըլլալ կամ ըլլալը ձեռքս էր: Բայց
 սատանան զիս փորձեց: Ինչո՞ւ, ըսաւ ինձի, կտոր մը
 սեւ հացի համար այնչափ կը նեղուիս կը չարչարուիս.
 նայէ սա մարդս դրամով լեցուն քսակ մ'ունի, առ-
 յափշտակէ զանիկա: Գիտցիր որ այնուհետեւ բանդ
 աղէկ կ'երթայ: Ես դողդողալով՝ նախ չէի համարձա-
 կեր, բայց ետքը հրացանով մը զինուած՝ մարդուն վրայ
 քալեցի, եւ ճարպկութեամբ մը անոր բեռը ձեռքէն
 յափշտակեցի: Աս արուեստն ինձի գէշ չերեւցաւ.
 անոր համար նոյնը շարունակեցի՝ մինչեւ որ քանի մը
 չարամիտ ու անգութ մարդիկ զիս դատաւորին առջեւը
 հանեցին եւ այսպէսով, ինչպէս զիտէք, զերի եղայ...:
 Ասոր ի՞նչ կ'ըսէք:... Մտիկ չէք ըներ...: Մի հողաք,
 սեպուհ, մի հողաք. վրաս վստահ եղէք, ես աղէկ մարդ
 եմ, սրտիս մէջ գտնուած բարեոյն արմատը բոլորովին
 վատթարացած չէ. միայն թէ հպարտութիւնը մէկ-
 դի, ինձի հետ քաղցրութիւն, յարմարութիւն, ...
 եւ ձեռքս դրամ...:

ՎԵՐՋ Ա. ԱՐԱՐՈՒԱԾՈՅՆ

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Ն Ի Ր .

Տ Ե Ս Ի Լ Ա .

ՅՈՎՀԱՆՆԵՍ, ԽՈՍՐՈՎ

ԽՈՍՐՈՎ

Ա՛Տ, սիրելի Յովհաննէս, ի՛նչ հաճութիւն, որչափ մեծ ուրախութիւն է ինձի նորէն աս երկիրները տեսնել եւ այնչափ ժամանակէն ետեւ՝ նորէն այցելութեան ելլել այսպիսի սքանչելի տեղերու: . . . Երեկ հոս գարու ատեն քանի մը տեղեր աղէտալի յիշատակով մը միտքս խռովեցին: Ա՛Տ, ան մեր անտառներն որչափ թանձրացեր, ծառախիտ եղեր են: . . . : Շագանակենիներն ի՛նչպէս դեղեցկացեր են: Բայց ա՛Տ, մայրս անոնց շքին տակ նստած՝ քաշելու վշտերս, մտնելու վտանգներս առջեւս կը դնէր: Քաջ եղիր, կ'ըսէր, հայրենեացդ հաւատարիմ մնացիր, թագաւորիդ հաւատարմութիւն ցուցուր, եւ թէ որ վտանգի մը մէջ սիրտդ դողալու, երեսիդ գոյնը նետելու ըլլայ, քու նախնիներդ յիշէ եւ անունդ միտքդ բեր: Առաքինութիւններով հայրենեացդ պատիւ ըրէ, քաջասրտութեամբդ պաշտպանէ, տկարին օգնէ, նեղութիւն կրողին ձեռք տուր, թշնամւոյն դէմ կռուէ: Աւասիկ ատոնք են, կ'ըսէր, ազնուական քաղաքացւոյ մը պարտքերը: ՉԱտուած երբէք մի մտնար. Անիկա զքեզ օրհնէ, պաշտպանէ քեզի, եւ զքեզ մօրդ դողը դարձնէ: . . . : Աերջապէս վերջին համբոյրը տալով՝ Բարի եղիր, որդեակ, ըսաւ, երթանս բարով: Ա՛Տ, ա՛Տ, ստուգիւ մնանս բարով, մայր . . . ի՛նչ կ'ըսեմ մնանս բարով. երթանս բարով, պէտք եմ ըսել, վասն զի դուն գացիր եւ աս աշխարհքիս մէջ մէյ մ'ալ պիտի չտեսն . . . :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Բաւական է, Սեպուհ, աս տխուր յիշատակները

մարերնէդ մէկդի ըրէք : Ամէնքս դիտենք թէ որչափ
բարի էր ձեր ատկին մայրը : Ի՛նչ դժբախտութիւն ե-
ղաւ մեզի անոր կորուստը : Բայց հիմակ անոր վրայ խօ-
սելու ատեն չէ : Գիտէ՞ք՝ զձեզ նորէն տեսնելու որ-
չափ ուրախ եմ :

ԽՈՍՐՈՎ

Ես ալ, Յովհաննէս, շատ բախտաւոր կը համարիմ
զիս քու ուրախութեանդ համար. միշտ մեծ ուրախու-
թեամբ մեր տղայութեան տարիները կը յիշեմ : Ո՛հ,
ի՛նչ գեղեցիկ զօդ էր ան, ի՛նչպէս մէկզմէկ կը սիրէինք,
կարծես թէ երկու եղբարք էինք : Մայրդ՝ իմ սիրելի
սնուցիչս, երկուքնիս ալ հաւասարապէս կը սիրէր. Յով-
հաննէս գիտցած ըլլաս որ ես փոխուած չեմ :

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ես ալ նոյնպէս, սիրելի Խոս... Տէր, ... թողու-
թիւն տուէք... ինծի այնպէս կ'երեւայ որ դեռ հրա-
մանոցը հետ ողորմած հողի մօրս ծնկան վրայ ըլլանք : ...
Ո՛հ, ստուգիւ գեղեցիկ օրեր էին անոնք :

ԽՈՍՐՈՎ

Խօսքը փոխենք : Ինծի կ'երեւայ որ հայրս խոր
տրամութեան մէջ է : Երէկ հոս հասնելու ատենս՝ զիս
շատ պաղութեամբ ընդունեցաւ. գրեթէ սառած կ'ե-
րեւար, երեսն ուրախութեան նշան մը չտեսայ : Պա-
րապ տեղ իր բազուկները նետուեցայ. ինք զիս սիրով
չդրկեց, մանաւանդ թէ կարծեցի որ զիս մերժել
կ'ուզէ : Յուսամ որ իրեն անհաճոյ բան մ'ըրած կամ
զինքը վշտացուցած չեմ :

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Չէ, չէ. հիմայ միշտ այնպէս է, միշտ առանձին կը
կենայ. թէ որ մէկն իրմէ բան մ'ուզէ, կամ իրեն բան
մը հարցրնէ, պատասխանը՝ միայն հա՛ կամ չէ՛, եկնուր
կամ գնա՛ է : Իրեն հետ՝ միմակ Տիրիթը կրնայ խօսիլ :

ԽՈՍՐՈՎ

Տիրիթն ինչպէս մարդ է :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Վրան բան մը լաած չեմ, չեմ գիտեր. միայն աս
գիտեմ որ մեր սեպուհն իր հօրը մահուընէն ետեւ քովն
առած է: Գուցէ չէք հաւատար, բայց ստոյգ է՝ ան
Տիրիթը՝ կարծես թէ բուն գղեկին տէրն ինքն է. իրեն
դէմ խօսք մը ամենեւին չիկրնար ըսուիլ: Շատ բա-
րի մարդիկ՝ որոնք երկայն ատենէ վեր հօրերնուդ ծա-
ռայութեան մէջն էին, վարնտեց: Այնպէս ալ խիստ
ու դաժան է՝ որ մարդ երեսը չիկրնար նայիլ:

ԽՈՍՐՈՎ

Երկայն ատեն կայ՝ որ հայրս վշտաց մէջ ու անհան-
դարտ է:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ողորմած հոգի մօրերնուդ մահուընէն վեր տրամու-
թիւնը զինքը կը նեղէ ու շարաշար կը լլկէ: . . . Տէր,
ճառանիդ կու դայ:

Տ Ե Ս Ի Լ Ի .

ԲԱԶՈՒԿ, ՅՈՎՀԱՆՆԵՍ, ԽՈՍՐՈՎ

ԲԱԶՈՒԿ՝ գինւ, երգելւ եւ հօրեհայ:

Ո՛րչափ ուրախ զուարթ կ'ըլլաս,

Այնչափ անմեղ սիրտ մ'ալ . . .

Բարո՛վ եկեր էք, Տէր:

ԽՈՍՐՈՎ

Բա՛ղուկ, դուն միշտ գինով, միշտ նայն ես:

ԲԱԶՈՒԿ

Ի՛նչ պիտ'որ ընես. հրամանոցը՝ հայրենիքնիդ դառ-
նալուն վրայ ես ալ կը զուարթանամ: Գիտէք, օրը
ճաղածին պէս՝ իմ հին բարեկամներէս մէկուն գացի
եւ անոր հետ մէկտեղ աղէկ ուրախութիւն մ'ըրի:

ԽՈՍՐՈՎ

Շա՛տ աղէկ. բայց քիչ մը պակաս կրնայիր խմել:

ԲԱԶՈՒԿ

Այսպէս աղէկ զուարճութիւն երբեք չէի բրած, որովհետեւ քիչ մը զինի խմուի նէ, . . . բանն այլազգ կը դառնայ:

ԽՈՍՐՈՎ

Ուրեմն գեղեցիկ օր մ'անցուցիր:

ԲԱԶՈՒԿ

Աքանչելի. տասուերկու հոգի էինք. ոչ աւելի ոչ պակաս. ամէնքն ալ զուարթ մարդիկ . . . ինծի պէս, . . . ծիծաղ դէմքով. ձեր հօրը պէս վրանին դաժան կերպարանք մը չէր նկարուած:

ԽՈՍՐՈՎ

Բա՛զուկ, հայրս յարգէ, հասկըցա՛ր:

ԲԱԶՈՒԿ

Թողութիւն տուէք, ներեցէք, Տէր, նաեւ բոլոր ձեր ընտանեաց կողմանէ ալ թողութիւն տուէք: Բայց հրամանոցը ստոյգ ըսեմ, ձեր տունը Տիրիթ անուամբ մէկը կայ՝ որ տեսնելով միայն կը նեղանամ. եւ մտածմունքս միշտ ան է՝ որ ինչպէս կրնամ զինքն աղէկ մը ծեծել:

ԽՈՍՐՈՎ

Բա՛զուկ, ան մարդուն բան մը պիտի չընես:

ԲԱԶՈՒԿ

Վրանիդ ունեցած յարգութիւնս զիս լռելու կը ստիպէ. եւ . . .

ԽՈՍՐՈՎ

Ելի, քիչ մը պառկելու դնա. բայց զիտնաս որ երկու ժամէն հոս պիտի գտնուիս:

ԲԱԶՈՒԿ

Չէ, չէ, դեռ պատէ պատ զարնուելու չհասայ. կ'ուզէք նէ միտ դրէք:

Տ Ե Ս Ի Լ Գ .

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ՏԻՐԻԹ

ՏԻՐԻԹ

Տէր, հայրդ զքեզ կ'ուզէ. իրեն գնա :

ԽՈՍՐՈՎ

Պարոն, քիչ մ'աւելի քաղաքավարութեամբ կըր-
նայիր խօսիլ :

ՏԻՐԻԹ

Սովորութիւնս ու բնութիւնս աս է :

ԽՈՍՐՈՎ

Լաւ է. բայց աս բնութիւնն ինծի հաճելի չէ, քե-
զի ալ չիվայլեր :

ՏԻՐԻԹ արհամարհելով մը :

Շատ կը ցաւիմ :

ԽՈՍՐՈՎ

Պատժուելու արժանի ես :

ՏԻՐԻԹ

Ձիս պատժել. կրնամ յանդգնիլ :

ԽՈՍՐՈՎ

Հրամարեա կրնամ, կը համարձակիմ :

ԲԱԶՈՒԿ

Ինծի նայէ, Տիրիթ, քու չափդ քեզի ես կը հաս-
կըցընեմ :

ՏԻՐԻԹ

Գիտե՞ս որ ես իշխանութիւն ունիմ . . . :

ԽՈՍՐՈՎ

Ո՞վ, դ՞նն, քեզի պէս ծառայ մը :

ՏԻՐԻԹ

Հա՛, ես :

ԲԱԶՈՒԿ

Այ թշուառական : (Խոսարովին :) Տէր, սուր հետ
գործք տեսնելն աւելի ինծի կը վայլէ. հրամանոցը հետ
խօսելու արժանի չէ. թող տուէք իրեն ցուցընեմ թէ
որո՞նն հետ կը խօսի, եւ աստեղս իր գլուխը ճզմեմ :

ՏԻՒԹ՝ Բազու-իւ յեր-տե՛ն իւ Բ-նէ եւ գոյրի յը պե՛ս իւր-տը-
կեւ-՛ Տե-րի իւ նե-րի :

Այսօր չէ՛, վաղը : (Հե՛գնեւ-՛ ի՛նքն-նայ :)

Տ Ե Ս Ի Լ Գ .

ԽՈՍՐՈՎ, ՅՈՎՀԱՆՆԷՍ, ԲԱԶՈՒԿ

ԲԱԶՈՒԿ

... Թշուառական . . այ . . այ . . այ . . . : Ըսէ նայիմ
անդգամ, անպիտան, զիս կը ճանչնան, անունս լամձ
եւ : Աստանուն զքեզ, հրեայ, զեղացի զքեզ . եկուր
Թէ որ կը համարձակիս նէ, եկուր, զետնի վրայ, ձիու
վրայ, հրացանով, սրով, բռնցի, ինչպէս որ կ'ուզես նէ,
կը հասկընան : Պատասխան տուր, դարձիր, վատ, Թու-
լամորթ, վատասիրտ, տկար, անզօր . . . ան . . . ան . . . :

ԽՈՍՐՈՎ

Թող, Բազուկ, խաղաղցիր . եւ զինքը կը խոնար-
հեցընեմ :

ԲԱԶՈՒԿ

Ձիս զետի՛նը զարնել :

ԽՈՍՐՈՎ

Բան չկայ :

ԲԱԶՈՒԿ

Ի՛նչ, բան չկայ . վրաս ձեռք վերցընել . . . :

ԽՈՍՐՈՎ

Բարեկամներ, հայրս կու գայ, մէկդի քաշուեցէք .
իրեն հետ մինակ կ'ուզեմ բլլալ :

ԲԱԶՈՒԿ

Հիմայ կ'երթամ եւ իրեն կը ցուցընեմ . Թէ որ առ-
ջեւս խոնարհիլ չուզելու բլլայ, շատ ընկերներով ընե-
լիքս գիտեմ Թշուառականին . . . :

Տ Ե Ս Ի Լ Ե

Վ Ա Ս Ա Կ Խ Ո Ս Ր Ո Վ

ԽՈՍՐՈՎ՝ Ի՞նչ Իրե՞ն :

Ո՛հ, սրչափ վիշտ ու աղէտք կը կրեմ հայրս ցաւերու մէջ տեսնելով . դէմքը տրամուծեամբ դեղընցած ու այլագունած է :

ՎԱՍԱԿ՝ Ի՞նչ Իրե՞ն :

Սա տղուն խորհուրդներն իմանայի : (Չայնի- :)
Խնորով :

ԽՈՍՐՈՎ

Հրամայեցէք, հայր :

ՎԱՍԱԿ

Որովհետեւ դուն ինձի չեկար, ես քեզի կու գամ :

ԽՈՍՐՈՎ

Հայր, Տիրիթ հետս այնպէս անամօթութեամբ ու անքաղաքավարութեամբ խօսեցաւ՝ որ իր հրամաններուն հնազանդիլ չուզեցի :

ՎԱՍԱԿ

Տիրիթ քեզի իր կողմանէ հրաման չիկրնար բերել, ըսածն իմ հրամանս էր . անոր համար պէտք էիր հնազանդիլ : Ես ալ դիտեմ որ ան մարդը դաժան ու բիրտ մէկն է . բայց ինձի մեծամեծ ծառայութիւններ ըրած ըլլալով՝ կ'ուզեմ որ իրեն տհաճութեան խօսք մը չըսուի :

ԽՈՍՐՈՎ

Բայց թէ որ ինձի թշնամանք մ'ընէ՞ նէ :

ՎԱՍԱԿ

Արեւու է :

ԽՈՍՐՈՎ

Ո՛չ երբեք :

ՎԱՍԱԿ

Մտիկ ըրէ, սրդեակ . հօրդ հաճելի ըլլալ կ'ուզե՞ս, զինքը կը սիրե՞ս :

ԽՈՍՐՈՎ

Ի՛նչ, կը սիրեմ մի, կեանքիս չափ: Չեզի հաճոյ
ըլլալ մի: Ուզածնիդ հրամայեցէք. ուր երթամ, ի՛նչ
ընեմ, ո՞ր վտանդի մէջ մտնեմ կամ յանդգնիմ, խօսե-
ցէք, հայր:

ՎԱՍԱԿ

Գլխաւոր ընելու բանդ աս է, ինձի հնազանդելու
ես, Տիրիթին խօսքերն ու անոր այլանդակ բնութիւնը
կրելու ես. այսպէս կ'ուզեմ:

ԽՈՍՐՈՎ

Ար հնազանդիմ, հայր:

ՎԱՍԱԿ

Աղէկ կ'ընես, Խոսրով: Հօրդ խօսքերը մտիկ ըրէ.
սիրտդ բաց եւ առանց կեղծաւորութեան խօսէ: Գուն
երիտասարդ ես. քու հասակդ՝ զբօսանքն ու հաճու-
թիւնը կը սիրէ, ուրիշ այլեւայլ բաներու ալ կը բաղ-
ձայ: Ուստի ըսէ ինձի, որդեակ, արդեօք այնպիսի վի-
ճակի մը աչք չտնկեցիր, անանկ երիտասարդաց չնա-
խանձեցար, որոնք իրենց անձին տէր ըլլալով եւ երջա-
նիկ օրերու շարք մը աչքերնուն առջեւ տեսնելով՝ ու-
րախութեամբ կ'ապրին, եւ զանազան փառքերով, պա-
տիւներով ու երջանկութեամբ զարդարած են: Ստոյգ
ըսէ. զիս այսպէս հարուստ ու փառաւորութեան մէջ
նշմարելով, եւ թագաւորէն այլեւայլ շնորհքներ ու
պատիւներ առածս տեսնելով՝ ահաճութիւն մը չունե-
ցար, մտքէդ չըսիր. Ա՛հ, հօրս տեղն ըլլայի:

ԽՈՍՐՈՎ

Հայր, աս հարցումներն ի՛նչ պիտ'որ ըլլան: Արդեօք
վարմանցս մէջ փառասիրութեան ու հպարտութեան
նշան մը տեսած էք: Ստոյգ է որ ես ալ ուրիշ շատե-
րուն պէս երջանկութիւն երազեցի. եւ աւասիկ տեսած
երազներէս մէկը: Ես արտաքոյ կարգի հարուստ էի.
դուք եւ սիրելի մայրս քովս էիք. եւ երկուքներնուդ ալ
սիրոյ նշաններ կը ցուցընէի: Մեզմէ քիչ մը հեռու պար-

տեղին մէջ՝ մեր գեղացիներն ուրախ զուարթ՝ օրուան
աշխատանքը մոռնալով, անմեղ զուարճութիւններով
կը զուարթանային, իրենց ծիծաղը՝ պարզ, երգերնին
իրենց բարեբախտութեան մէյակ նշաններ էին: Հայր,
ի՞նչ կ'ըսէք, այսպիսի երազներու համար յանցաւոր եմ:

ՎԱՍՍԿ

Չէ: Երանի՛ քեզի, Խոսրով:

ԽՈՍՐՈՎ

Հայր, մտիկ ըրէք. փառք ալ երազեցի, եւ աս ե-
րազը՝ մեր հայրենեաց վրայ էր: Անգամ մը արիւնա-
թաթախ խառնրդի մը մէջ՝ թշնամեաց դրօշն առի-
ես անձամբ վտանգի մէջ գտնուող սպարապետիս պաշտ-
պան եղայ. անգէն թշնամի մը մահուընէ ազատեցի, եւ
այսպէսով մեծ փառքով լեցուած ու սպարապետիս
գովեստներուն համար ինք զինքս երջանիկ սեպելով՝
դարձայ ձեր քովն եկայ: Իմ քաջութիւններուս փոխա-
րէնն էր՝ անչափ ծափահարութիւն մը: Դուք ալ ապ-
շելով մը ձեռքս թօթուեցիք. Ազնիւ որդիս, ըսիք ին-
ծի... վրադ գոհ եմ: Հայր, ասոնք էին եւ են իմ խոր-
հուրդներս ու քաղցր երազներս, որոնցմով ինք զինքս
կը խաբեմ: ... Բայց հրամանոցը տրտմութեան պատ-
ճառն ի՞նչ է. դէմքերնիդ տժգոյն ու ահագին կ'երեւայ.
տրտում տխուր էք:

ՎԱՍՍԿ

Բան մը չունիմ: Ամէն բանս յաջող է. դուն զիս կը
սիրես, բախտն ինձի նպաստաւոր է, խիղճս... մաքուր
... է, ու բոլորովին հանգիստ եւ երջանիկ եմ:

ԽՈՍՐՈՎ

Չէ, այնպէս չէ. հանգիստ չէք. պարապ տեղ աչ-
քիս առջեւ թաղծութիւննիդ ծածկել կ'ուզէք. ձեր
տրտմութեան պատճառը թափանցեցի... գիտեմ...:

ՎԱՍՍԿ

Ի՞նչ գիտես:

ԽՈՍՐՈՎ

Գիտեմ որ մօրս մահուան վրայ սաստիկ տրտմած էք, եւ այս դժբախտ դէպքը պատահելէն վեր՝ երթալ լով աւելի անհանգիստ կ'ըլլաք:

ՎԱՍԱԿ

Միայն ան դիտես: (Ինչ էրէն:) Կը վախնամ որ . . . :

ԽՈՍՐՈՎ

Մօրս վրայ շատ ցաւեր էք. ես ալ ցաւեցայ: Ա՛խ . . . բայց մահը ղինքը յափշտակելէն ետեւ՝ այնչափ տրտմութիւնն ինչ օգուտ ունի, ինչո՞ւ այնչափ ողբ. արգեօք անիկա մեր ցաւերը չ'իմանար: Անոր անմահ հագին մեր քով չէ՞. մեր անտառներուն, մեր պարտեղին մէջ չէ՞. վրանիս չի՞հսկեր, ինչպէս յառաջագոյն ես տղայ եղած ատեն զիս կը հոգար: Ա՛հ, հայր, ցաւէ մօրս վրայ, ցաւէ, բայց մի տրանջար. իր առաքինութիւնները ստուգիւ Բարձրելոյն քով իրեն շքեղ անդ պատրաստած էին:

ՎԱՍԱԿ

Արդեակ, ալ ասոր վրայ չ'ըստինք . . . : (Ինչ էրէն:) Ա՛հ, ո՛հ, նեղուած եւ հազարամէկ աղէտից մէջ եմ: Խոսրովին սէրն ինձի ցաւ կը պատճառէ, ներկայութիւնը զիս կը մեռցընէ: Ա՛հ, վրէժխնդրութեան Աստուած, հասուցա՞ծս դեռ բաւական չէ՞:

ԽՈՍՐՈՎ

Հայր, ինչ ունիք. ինչո՞ւ այնպիսի խռովութեան մէջ էք. այնչափ դժբախտ եմ եղեր որ ձեզի անհաճոյ կ'երեւամ:

ՎԱՍԱԿ՝ Ինչ էրէն:

Այնչափ բարեբախտութեան կրնայի՞ հասնիլ, այնպիսի որդւոյ մը արժանի էի. չէ, չեմ կրնար տանիլ: (Չայնիս:) Ինձի նայէ, Խոսրով, վաղը ճամբայ ելիր: Տիրիթ քեզի ստակ կու տայ, լմննալու ըլլայ նէ՛ նորէն կը խրկեմ: Ա՛ ուզեմ որ հանդիտապատիւներուդ մէջ դուն առաջինն ըլլաս, եւ մեծամեծներուն առջեւ ղքեղ

այնպէս ցուցրնես՝ ինչպէս քու աստիճանդ կը պահանջէ. բայց կը բաղձայի որ ոտքդ դրանս սեամբ մէյ մ'ալ չկոխէ: Ասողը կանուխ ճամբայ ելիր:

Տ Ե Ս Ի Լ, Օ.

ԽՈՍՐՈՎ, արանջին:

Ահանջս դռնչեց, ինչ լսեցի: Հայրս մէկ կողմանէ զիս կը գրկէ, մէկալ կողմանէ կը մերժէ. ինձի հետ մէկտեղ կու լայ կ'ողբայ, աչուրները կրակ կը դառնան, դէմքը կը տժգունի, երեսը կը խորշումի. ձեռքը զիս կ'օրհնէ եւ բերնէն կարծես թէ անէծքի խօսքեր կ'ելլեն. ամէն բան դաղտնիք ու խորհրդաւոր բան է ինձի: Ա՛հ, Ա՛ստուած, թէ որ գլուխս դժբախտութիւն մը պիտի գայ նէ, զօրութիւն տուր: Գուն սիրտս կը ճանչնաս:

Տ Ե Ս Ի Լ, Է.

ԽՈՍՐՈՎ, ՅՈՎՀԱՆՆԷՍ

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Տէր, տեսնելով որ սեպուհնիս կ'երթար, շուտ մը ձեզի վաղեցի: . . . Բայց դուք շատ տրտում կ'երեւայք. հայրերնիդ անհաճոյ խօսք մ'ըսաւ ձեզի:

ԽՈՍՐՈՎ

Ասողը հոսկից պիտ'որ երթամ, բարեկամ. հայրս կ'ուզէ որ վաղը ճամբայ ելլեմ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Ի՛նչ, այսչափ շուտ: Շատ կը վախնայի որ այսպիսի բան մը չպատահի: Ա՛հ, չեմ գիտեր որ ասոր վերջն ուր պիտ'որ երթայ: Աս դղեակն անիծեալ կ'երեւայ. ցորեկը՝ հայրերնիդ ու Տիրիթ զմեզ կը շարշարեն. գիշերը՝ . . . այլանդակ բան մը, այս ինքն՝ . . . քաջերն ու ճիւղաղները կը նեղեն զմեզ:

ԽՈՍՐՈՎ

Յովհաննէս, ինչ, դո՛ւն ալ ճիւղաղներու կը հաւտաս. չէ նէ՛ կատակ կ'ընես:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Չէ, ստուգիւ կատակ չէ. պապերնիդ ճիւղաղի կերպարանք առած՝ գիշերները կ'երեւայ:

ԽՈՍՐՈՎ

Երեւակայութիւնդ կը խաբէ զքեզ, բարեկամ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Չէ, Տէր: Գեռ ութ օր չկայ՝ որ աներեւոյթ զօրութենէ մը դրդուած՝ գղեկին աջակողմեան բնակարանը գացի: Արդէն գիտէք որ հանդուցեալ Սուրէն սեպուհը նոյն կողմը կը բնակէր, եւ մենք ալ հոն կ'երթայինք կու գայինք, բայց իր մահուրնէն ետեւ նոյն կողմը միշտ գոց կը պահուի: Ես իր խուցը տանող գաղտնի սանդղի մը բանալին քովս պահած էի: Նոյն կողման մեծ սրահին մէջ մտնելուս պէս՝ յանկարծ ասդին անդին գացող եկող մարդու մը ոտնաձայն լսեցի: Գիտէք արդէն որ քաջասիրտ չեմ. ուստի վախնալով՝ հոն գտնուած բազմոցի մը ետեւ պահուրտեցայ: Մէյմ' ալ խիստ ծնգած ծիւրած ծեր մը ներս մտաւ. ձեռուրները շղթայով կապուած էին, մարմինն ալ ցնցոտի զգեստով ծածկած էր, եւ յամր քայլելով ու ձեռուրները խաչաձեւ բռնած՝ դէպ ի բազմոցը կու գար. կերպարանքն ու ընթացքը՝ պապերնուդ նման էր. երբեմն զիս ահ ու դողի մէջ խոթող երեսն ու դէմքն ունէր: Ա՛հ, ինչ տեսիլ էր անիկա. վախէս՝ աւելի մեռած էի քան թէ կենդանի. պոռալ կ'ուղէի, բայց խօսքերը շրթունքներուս վրայ սպառելով՝ անմռունչ կը մնայի: Քիչ մը ետքը աս երեւոյթն առանց խօսք մ'ըսելու՝ հեռացաւ գնաց. բայց անոր ըրած ահագին հառաչանքները սրտիս խորքը թափանցեցին: Աերջապէս խելքս գլուխս գալով՝ քիչ մը հողի առի, եւ շուտ մը գաղտնի սանդուղը վազեցի, չհամարձակելով ամենեւին ետեւս

նայիլ . բայց երեւակայութիւնս այնչափ սաստիկ աղմը-
կած էր , որ կը կարծէի թէ ետեւէս ձայն մը կը գոչէ ,
լսելով . Ո՛հ . . . ինծի նայէ , ո՛վ որ ես նէ՛ գթա վրաս :
Նոյն ժամանակէն սկսեալ՝ անհանդարտ եմ ու հան-
դիստ չունիմ . ձեր պապուն պատկերն ամէն տեղ ետեւէս
կու գայ . սրտիս մէջ թափանցող ձայնը միշտ կը լսեմ ,
ան մարդուն հառաչանքներն ալ ականջս թնդացրնե-
լով՝ զիս կը սոսկացրնեն :

ԽՈՍՐՈՎ

Հանդարտէ , բարեկամ , բոլոր տեսածդ ցնորք ու ե-
րազ է . պապուս բնակարանը գտնուելով՝ երեւակայու-
թիւնդ հին յիշատակներէ տաքցեր է , եւ այսպէսով
ցնորքն ու ստուերը՝ իր կարծեր ես :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Չէ , Սեպուհ , այնպէս չէ . ես առասպելները միշտ
արհամարհած եմ . բայց աս հիմակուան երեւոյթը ցնորք
կամ երազ չէր , հապա Սուրէն սեպուհն էր :

ԽՈՍՐՈՎ՝ Ինչ էրէն :

Աս մարդուն հաստատութիւնը , իր պատմած զար-
մանալի բաները , ան հօրս գործքերուն մէջ նշմարուած
գաղտնութիւնը՝ միտքս բիւրաւոր խորհուրդներ կը յա-
րուցանեն ու զիս կը վախցրնեն : Հայրս յանցաւոր չիկրը-
նար ըլլալ . . . պէտք է որ ամէն բան իմանամ : (Չայնի- :)
Յովհաննէս , ինծի նայէ , գաղտնի սանդղին բանալին ին-
ծի տուր . աս գիշեր պապուս բնակարանին մէջ պիտ'որ
անցրնեմ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Տէր , զձեզ վտանգի մէջ կ'ուղէք . . . :

ԽՈՍՐՈՎ

Ի՛նչ վտանգ է աս : Թէ որ քու տեսնել կարծածդ՝
զուտ ցնորք մըն էր , վախնալու բան չկայ . իսկ եթէ
խաբուած չես նէ , ես ալ կ'ուղեմ իմանալ թէ ան
ճիւղին ո՞վ է , զքեզ սոսկացրնող քաջերն ուստի են :

ՅՈՎՀԱՆՆԻՍ

Տէր, ըսածիս դէմ մի դնէք. անշուշտ խաբուած պիտ'որ ըլլամ: Հաւանական է որ ես աղէկ տեսած չըլլամ. գուցէ երազ մըն էր: Մ'երթաք... բանալին ալ չեմ գիտեր ինչ եղաւ, ուր ըլլալը չեմ յիշեր:

ԽՈՍՐՈՎ

Զիս կ'ուզես խաբել, բարեկամ. բայց դիտցիր որ միտքս դրածս չես կրնար փոխել: Շուտով, բանալին տուր:

ՅՈՎՀԱՆՆԻՍ

Բայց... զձեզ կ'ապահովեցրնեմ որ...:

ԽՈՍՐՈՎ

Բանալին տուր, ըսի...:

Տ Ե Ս Ի Լ Ը

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ԲԱԶՈՒԿ

ԲԱԶՈՒԿ

Տէր, ինչ կ'ըսէք, ունեցած ընկերներս ինչպէս են:

ԽՈՍՐՈՎ

Հոս ինչ գործք ունին. կարծեմ դուն խենթեցեր ես, Բագուկ. սա մարդիկները խաւրէ ասկից: Ինչ, Տիրիթին մըայ ո՞նի պահեր ես. [Թող, տղայութիւնը մէկ-դի [Թող, սուտք խրկէ երթան. դուն ալ պատրաստուէ, վաղը ճամբայ պիտ'որ ելլենք: Ես հիմա ներսը գործք ունիմ:

Տ Ե Ս Ի Լ Թ

ԲԱԶՈՒԿ, ԿԻՐԱԿՈՍ, ԳԵՂԱՑԻՔ

ԲԱԶՈՒԿ

Այէք, ընկերներ, եկէք, ցուցրնենք սա [Թշուառականին որ ես ո՞վ եմ. ամենուն հասկըցրնենք որ մեզի հետ չիսաղացուիր, մեզի պէս արիութիւն ունեցող մարդիկներուն դէմ չ'ելլըցուիր. [Թող դիմացս ելլէ երկ-

չորս . Արիութեանս , Աներկիւղութեանս , Բազուկիս
 Կերկայանայ թող . ո՛ւր ես , վա՛տ . . . : Ը՛նկերներ , եկէք
 ինձի օգնեցէք եւ վարձքերնիդ կ'ընդունիք . ստիս ծե-
 ծելէն ետեւ՝ ձեզի աղէկ կերակուր մը կը կերցընեմ ,
 երեքական դաճեկանս ալ կու տամ :

ԿԻՐԱԿՈՍ

Բայց զո՞վ պիտի ծեծենք , եւ թէ որ աս քաջու-
 թիւնն ընենք՝ երեքական դաճեկաննիս պիտի տամ :

ԲԱԶՈՒԿ

Ի՞նչ կ'ըսես անպուշ , ի՞նչ , զիս խաբերայ կարծեցիր :

ԿԻՐԱԿՈՍ

Ա՛ , ի՞նչ կ'ըսես , չէ . . . բայց . . . որովհետեւ իմ ո-
 զորմած հոգի մեծ մայրս ինձի կ'ըսէր . Ահրակոս , մտիկ
 ըրէ , սրդեակ , կ'ըսէր , ամէն գեղեցիկ խոստմունքնե-
 րուն պէտք չէ հաւատալ , իմացա՛ր : — Այնպէս ան-
 միտ մի կարծեր զիս , ըսի ես իրեն : — Ա՛հ , ըսաւ ինձի
 ողորմած հոգի մեծ մայրս , երկբայելու է , չհաւատալու
 է այնպիսիներուն , ըսաւ : — Մի վախնար , ըսի ես ա-
 նոր , հանդիստ եղիր :

ԲԱԶՈՒԿ

Է՛յ , լմնցուր , ըսելիքդ շուտ ըսէ : Աս ի՞նչ է . Ըսաւ
 ինձի , կ'ըսէր ինձի , ըսի ես իրեն , անոր . . . : Որոշ խօսք
 մ'ունիս . կ'օգնես ինձի , այո՛ կամ ոչ :

ԿԻՐԱԿՈՍ

Ա՛օգնեմ . . . , ըստ որում : Բայց նախ կ'ուզէի դիտ-
 նալ , որո՞ւն դէմ . եւ մարդը ծեծելով՝ ի՞նչ կը շահիս :

ԲԱԶՈՒԿ

Ի՞նչ կը շահիմ . պատիւս , փառքս եւ ասով՝ անե-
 րեոհն ինձի ըրած անարգանքը կը ջնջեմ :

ԿԻՐԱԿՈՍ

Այս ինքն . . . :

ԲԱԶՈՒԿ

Ի՞նչ այս ինքն : Ըսէ որ այնպիսի բանի մը մէջ մտնե-
 լու կը վախնաս :

ԿԻՐԱԿՈՍ

Վահի, ինչ, ես վախնամ. ոչ երբեք, չէ, չէ, չէ :
 Հայրենեացս մէջ իմ չվախնալէս աւելի ճշմարիտ ու
 ստոյգ բան մը չկայ. վրաս դող ու սոսկում բերող բան
 չկայ : Ասոր վկայ իմ ողորմած հոգի մեծ մայրս՝ որն որ
 կ'ըսէր. Աիրակոս, կ'ըսէր, դուն շատ յանդուզն ես,
 գլուխդ բան մը պիտի դայ, կ'ըսէր : Չէ, ըսի ես իրեն,
 մի վախնար . . . :

ԲԱԶՈՒԿ

Ո՛հ, ձանձրացուցիչ մարդ, հոգիս կը հանեա. կ'ուզե՞ս
 օգնել ինձի, չէ՞նէ՛ չեա ուզեր . . . :

ԳԵՂԱՑԻ ՄԸ

Ես կ'օգնեմ քեզի, Պարոն զինուոր :

ԲԱԶՈՒԿ

Դո՛ւն, ազնիւ, ազնիւ :

ԳԵՂԱՑԻՆ

Բայց աս պայմանաւ որ ծեծողներուն գլուխը ես պիտի
 ըլլամ, եւ մարդը ձեռք բերելու կերպը ես միայն
 պիտի սորվեցընեմ . . . : Բայց ծեծ կերողն ո՞վ է . . . :
 Բանը շուտ լմնցընենք, ստակս առնեմ երթամ : Ես
 գործք ունիմ . . . :

ԲԱԶՈՒԿ

Հիմա քիչ մը համբերէ, կամաց կամաց կը յարմար-
 ցընենք :

ԳԵՂԱՑԻՆ

Շուտ ընենք (կը սիսի պոստալ :) ես գործք ունիմ :

ԲԱԶՈՒԿ

Ա՛յ սատանայ. ինչ ապուշ մարդիկ են ասոնք. ա-
 սոնցմէ ինչ խեր կրնանք տեսնել . . . : Ամէնքդ ալ մտիկ
 ըրէք. զիս անարգողը գիտէք ո՞վ է :

Տ Ե Ս Ի Լ Ժ

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ԵՒ ՏԻՐԻԹ

ԲԱԶՈՒԿ

Աղէկ, ժամանակին եկար, թշուառական Տիրիթ:

ՏԻՐԻԹ

Ի՛նչ կայ, առ ի՛նչ բազմութիւն է հոս:

ԲԱԶՈՒԿ

Որովհետեւ դուն այնպէս վարուեցար, եկուր, եկուր,
եւ ալ զքեզ խղզեմ. . . :

ՏԻՐԻԹ

Ի՛նչ. . . . :

ԲԱԶՈՒԿ

Հայերէն չե՞ս հասկընար: Դուն իմ տէրս անարգե-
ցիր: . . . Տէրս անարգողը՝ զիս ալ կ'անարգէ . . . զիս
գեախնը . . . վրէժխնդրութիւն, ո՞ւր ես:

ՏԻՐԻԹ

Հապա ետքը:

ԲԱԶՈՒԿ՝ արտասով:

Ետքը, ի՛նչ ետքը. մէկ խօսքով՝ դիմացս ելիր:

ՏԻՐԻԹ

Ի՛նչ ծեծկուիլ կ'ուզես:

ԲԱԶՈՒԿ

Հապա:

ՏԻՐԻԹ

Բանիդ ձեռք կու տայ:

ԲԱԶՈՒԿ

Հրամարեսս կու տայ, շնորհ ըրէ, դիմացս ելիր:

ՏԻՐԻԹ

Քեզի խօսք մ'ուշիմ, Բազուկ:

ԲԱԶՈՒԿ

Ի՛նչ:

ՏԻՐԻԹ

Թէ որ դուն ծեծկուիլ կ'ուզես նէ, ես չեմ ուզեր:

ԲԱԶՈՒԿ

Բայց, աներես, . . . :

ՏԻՐԻԹ

Այնպէս է . . . : Սա գեղացիները թող կորսուին
ասկից . հոս գործք չունին, մէկդի տար :

ԲԱԶՈՒԿ

Տի՛րի՛թ խօսքը չփոխենք : Առջեւս խոնարհէ, ապա
թէ ոչ :

ՏԻՐԻԹ

Մնաս բարով : (Կ'երեւայ :)

Տ Ե Ս Ի Լ Դ Ե Ն

ՆԱԽԸՆԹԱՅՆԵՐԸ Բայ է ՏԻՐԻԹԷՆ

ԲԱԶՈՒԿ

Այնպիսի, աշխարհքիս մէջ քեզմէ վատ մարդ
չկայ եղեր :

ԿԻՐԱԿՈՍ

Այնչափ մի նեղանար, Բանուկ :

ԲԱԶՈՒԿ

Ինչո՞ւ, ի՞նչ կայ եղեր :

ԿԻՐԱԿՈՍ

Որովհետեւ . . . աւելի չեմ ըսեր :

ԳԵՂԱՅԻ ՄԸ

Բայց ի՞նչ կայ, ըսէ, մենք ալ իմանանք :

ԿԻՐԱԿՈՍ

Ո՛հ, եթէ դիտնայիք . . . չեմ ըսեր, բաւական է . . . :
Միայն առ զրուցեմ որ իմ ողորմած հոգի մեծ մայրս
ինձի կ'ըսէր . Միտ դիր, Աիրակոս, կ'ըսէր . խօսելէդ
յառաջ ըսածիդ միտ դիր, կ'ըսէր . խօսքը բերնէն չե-
լած՝ լեզուն եօթն անգամ բերնին մէջ շարժելու է,
կ'ըսէր . վասն զի շատախօսութիւնը կը ձանձրացընէ,
անհամ խօսքը՝ մարդն ատելի կ'ընէ, անյարմարը՝ շատ
անգամ կռուոյ պատճառ կ'ըլլայ, կ'ըսէր : Լաւ է, ըսի
իրեն . . . :

ԲԱԶՈՒԿ

Է՛ խելացնոր դուն ալ, մեծ մայրդ ալ, իր առակ-
ներն ալ գլուխդ փարատին :

ԿԻՐԱԿՈՍ

Ի՛նչ, օգտակար խօսք չե՞ս ուզեր . լա՛ւ, ինձի նոյն
բան է : Բայց առ ալ գիտցած ըլլաս որ, ինչպէս ողոր-
մած հոգի մեծ մայրս կ'ըսէր . . . :

ԲԱԶՈՒԿ

Շատախօսներո՛ւն գլուխը, ձայնդ քաշէ :

ԿԻՐԱԿՈՍ

Ա՛լ համբերութիւնդ հատա՛ւ, հէ՛ : Բայց գիտնաս
որ (Յած յայնի՛ս) Տիրիթ . . . :

ԱՄԷՆՔԸ ՄԷԿՏԵՂ

Ի՛նչ :

ԿԻՐԱԿՈՍ

Կախարդ մըն է . . . սատանային հետ հաղորդու
թիւն ունի . այսօր տեսայ որ եղջերաւոր մէկուն հետ կը
խօսէր ու սոսկացայ : Ուստի կարծեմ . . . : Ո՛հ, ո՛հ, կու
գայ կոր : (Աճե՛նք ալ կը փախչին :))

Տ Ե Ս Ի Լ Ժ Ի .

ԲԱԶՈՒԿ՝ արտասիւն :

Հէ՛յ, ինձի՛ նայեցէք, ո՛ւր կ'երթաք, ո՛ւր կը փախ-
չէք . . . նապաստակի պէս կը փախչին թշուառական-
ները : Հէ՛ ընկերներ, օգնականներ, ետ դարձէք, ե-
կէք . . . : Աւելի ուժով կը վազեն կոր . . . : Պէտք է որ
ետեւներնէն հասնիմ ու ետ դարձրնեմ . . . : Հէ՛, հէ՛ . . . :
(Պարտաւրջ կը վազէ կ'երթայ :))

ՎԵՐՁ Բ . ԱՐԱՐՈՒԱԾՈՅՆ

ԱՐԱՐՈՒՆԻ Ք.

ՏԵՍԻՍ Ե.

ՍՈՒՐԷՆ՝ նստած է ճակատի, ՏԻՐԻԹ՝

ՏԻՐԻԹ՝ յերեւել լապտերի ղ բռնած :

Օճերունի, զքեզ կը փնտռէի. դուն միտին մէջ
առանց լուսոյ աւելի ապահովութեամբ կը պտրտիս,
քան թէ ես լապտերովս :

ՍՈՒՐԷՆ

Ի՞նչ կ'ուզես :

ՏԻՐԻԹ

Քեզի նոր լրեր պիտի տամ :

ՍՈՒՐԷՆ

Ի՞նչ, որդիս մեռա՞ւ :

ՏԻՐԻԹ

Չէ, դեռ հոն չհասաւ :

ՍՈՒՐԷՆ

Ուրեմն ի՞նչ կայ :

ՏԻՐԻԹ

Ան կայ՝ որ քիչ մը ետքը որդիդ պիտի տեսնես :

ՍՈՒՐԷՆ

Զիս կը խաբէս, Տիրիթ . . . :

ՏԻՐԻԹ

Ինչո՞ւ պիտի խաբեմ. զքեզ խաբելով՝ բան մը կը
չահիմ : Գուն եւ ոչ դանդ մ'ունիս. վրադ զթացայ
եւ վերջապէս պաղատանացդ զիջանելով՝ Ասասկին
ըսի որ մէյ մը քեզի գայ : Անիկա խկզբան չուզեց,
բայց ես իրեն գէմ դնելով՝ համոզուցի եւ քիչ մը
ետքը զինքը կը տեսնես :

ՍՈՒՐԷՆ

Ո՛հ, կրկնէ ըսածդ կ'աղաչեմ, կրկնէ, ի՞նչ ըսիր :

ՏԻՐԻԹ

Աս ի՛նչ բան է, ծեր, խեղճ ես. ի՛նչ, ինձի հաւտալու կը դժուարիս, այնպէս չէ՞. կ'երեւայ որ վրաս զարմացած ըլլաս, բարի դորձք մ'ընելու զիս անկարող համարելով: Բայց չէ, այնպէս չէ: Ար տեսնես որ ես արդահատելով կը ցաւիմ վրադ: Ար կարծէի որ քու հասակիդ մէջ՝ մարդ երեսէն չիդատեր:

ՍՈՒՐԷՆ

Բայց աս շղթաներն որդւոյս առջեւն ալ պիտի կրեմ... ծանրացեալ ձեռուքներս պիտի չթեթեւցրնեն...: Չես վախնար որ շղթաներով կապուած կաշկանդուած հօր մը տեսքը՝ կրնայ որդի մը, կրնայ վասակը զարհուրեցուցանել եւ քովէս հեռացրնել: Ա՛հ, ի՛նչ անագորոյն չարչարանք են ասոնք:

ՏԻՐԻԹ

Շատ կը զարմանամ որ որդիդ ամենեւին չես ճանչնար: Այնպիսի անդգամ որդի մ'ունենալդ՝ քեզի մեծ գոթախտութիւն է. եւ եթէ կը կարծես որ վրադ պիտի գթայ, կը խաբուիս. սա պատէն աւելի կակուղ չէ, ժայռի խստութիւն ունի...: Իր ոտնաձայնը կը լսեմ, կարծեմ թէ կու գայ կոր. ի՛նչ որ կ'ուզէք նէ ըրէք:

Տ Ե Ս Ի Լ Ի

ՍՈՒՐԷՆ, ՏԻՐԻԹ, ՎԱՍԱԿ

ՎԱՍԱԿ՝ +եւ ՚ն Լ— Ինչպէն ետեւ:

Ինձմէ ի՛նչ կ'ուզես:

ՍՈՒՐԷՆ

Ի՛նչ կ'ուզեմ... որդեակ...:

ՎԱՍԱԿ

Որդւոյ անուն մի տար. ալ դուն իմ հայրս չես, ես ալ քու որդիդ չեմ: Ի՛նչ կ'ուզես, ըսէ, խօսէ... հաղիւ քանի մը վայրկեան ունինք:

ՍՈՒՐԷՆ

Ինձի նայէ, Աւսակ, դժբախտի մը վրայէն քու
աչքդ մի դարձրներ, բայց դուցէ կը վախնաս որ իմ ա-
չուրներս քու կիներուդ հանդիպին :

ՎԱՍԱԿ

Տրտունջը մէկդի, յանդիմանութիւն չեմ ուզեր :
Խօսէ աս վերջին անդամն է, ի՞նչ կ'ուզես :

ՍՈՒՐԷՆ

Աւսակ, մտիկ բրէ : Աւասիկ տասը տարի է՝ որ ես
աշխարհքիս համար մեռած եմ, աս մութ տեղէն՝ ու-
րուն մէջ փակուած կը կենամ, իմ յուզարկաւորու-
թեանս ողբական երգերը լսեցի, այլեւայլ ցաւադին
ձայներ ականջս հնչեցին, կարծեմ թէ ան լաւ ձայ-
ներուս մէջ՝ նոյն իսկ քու կեղծաւորական ողբերդ ալ
կային : Ան ժամանակէն վեր՝ արեգական լուսէն զըր-
կուած, աս դառն ու խոնար բանտին մէջ տարադիր
եղած եմ, գլուխս դնելու համար հոս գտնուած քիչ
մը յարդն ալ վերցրնել տուիր : Աւասի միտ դիր, Աւ-
սակ, կ'աղաչեմ, կը խնդրեմ . . . :

ՎԱՍԱԿ

Կարճ կապէ :

ՍՈՒՐԷՆ

Այնպիսի յանցանք մը գործելուդ պատճառը թա-
փանցել չեմ ուզեր, ամէն կրած բաներուս, վշտացս,
բանտին համար թողութիւն կու տամ, տասը տարւան
ցաւերու թողութիւն տալը քիչ բան չէ, Աւսակ : Հա-
զար անդամ մահ խնդրեցի, դռնեցի : Աստուած ձայնիս
չլսեց, բայց իր անհասանելի խորհուրդները կը յար-
գեմ, դուցէ իր արդար դատաստանաւն ուզէ որ քու
ձեռքէդ մեռնիմ : Աւրեմն մահուան կը բաղձամ, Աւ-
սակ, զանիկա քեզմէ կը խնդրեմ, քեզմէ եկած մահը՝
քաղցր կու դայ ինձի . . . : Ձքեզ ո՞վ կ'արդելէ, աշ-
խարհք՝ կենդանի ըլլալս չիդիտեր . . . քու յանցանացդ
անտեղեակ է, թէպէտ աս ալ ուրիշ նոր յանցանք մը

կ'ըլլայ, բայց քեզի համար սովորական բան մըն է: Մի վախճանար, յանցանքդ երկրիս տակ, մութին մէջ թաղուած կը մնայ...: Ար խոստանամ քեզի որ ստուերս՝ Աստուծոյ դատաստանին առջեւ քեզի դէմ չ'ելլեր...: Սոսկալի վկայէ մ'ալ կ'ազատիս, թէ որ կերպով մը իմ բանտիս տեղը յայտնուելու ըլլայ...: Ինչո՞ւ չես խօսիր, Ասասկ, ինչո՞ւ բերանդ չես բանար: Գիտե՞մ, դիտե՞մ, ոտքդ պէտք եմ խոնարհիլ... աւասիկ, տես քու հայրդ ոտքդ ինկած՝ փոշւոյ մէջ կը թաւալի, քեզմէ մահ կը խնդրէ, մահը՝ պարզեւի մը պէս ձեռքէդ ընդունիլ կ'ուզէ...:

ՎԱՍԱԿ

Ելիր, ծեր, ոտք ելիր. ի՞նչ կ'ուզես, ինձմէ ի՞նչ կը խնդրես:

ՍՈՒՐԷՆ

Մահ, մահ...: Ինչո՞ւ մունչ կեցեր ես...: Թէ որ զիս չես մեռցրներ, ուրեմն ազատէ զիս, անպերախտ, ազատէ զիս, անգո՞ւթ որդի:

ՎԱՍԱԿ

Անկարելի է:

ՍՈՒՐԷՆ

Քեզմէ՝ պատիւդ վտանգի մէջ դնող ազատութիւն մը չեմ ուզեր... հազար կամ բիւր մղոն հեռու տեղ մը խրկէ զիս... ամայի ծովու եզերք մը նետել տուր... բայց ազատ ըլլամ... դուն երջանիկ եղիր, երանելի ապրէ, եւ ուզածիդ պէս վայելէ:

ՎԱՍԱԿ

Ի՞նչ, Ասասկին ուրախութիւն, ինձի երանութիւն: Քեզի կը հարցընեմ, կարելի՞ է որ ես երջանիկ ըլլամ,

ՍՈՒՐԷՆ

Չէ, չէ, չես կրնար ըլլալ: Աստուած կ'ուզէ որ մարդս իր հայրն ու մայրը պատուէ, եւ միայն պատուողներուն՝ շատ տարիներ ու բարեբախտութիւն խոստա-

ցաւ...: Ուրեմն ի՞նչ կ'ըսես, ի՞նչ պիտ'որ որոշես.
Քեզմէ ի՞նչ կրնամ յուսալ:

ՎԱՍԱԿ

Ոչինչ:

ՍՈՒՐԷՆ

Ի՞նչ կ'ըսես, հօր մը պաղատանքը, եղուկ հօր մը
ողբը՝ զքեզ անզգայ կրնան թողուլ. սիրտդ մարմնը ու
անդամանդ է. վրադ մարդկային կարեկցութիւն եւ
արգահատութիւն չմնաց: Վասակ, խօսքիս միտ դիր.
դուն որդի մ'ունէիր, ի՞նչ եղաւ, ո՞ւր է:

ՎԱՍԱԿ

Քեզի ի՞նչ:

ՍՈՒՐԷՆ

Դեռ կենդանի՞ է:

ՎԱՍԱԿ

Հա՛, դեռ կ'ապրի:

ՍՈՒՐԷՆ

Զինքը կը սիրես:

ՎԱՍԱԿ

Աս ալ հարցընելու բա՞ն է:

ՍՈՒՐԷՆ

Չե՛ս վախնար որ ինչպէս դուն զիս վշտերու մէջ
մաշեցուցիր նէ, որ մը ինքն ալ զքեզ ոտքի տակ առ-
նէ: Գողա, դժբախտ որդի, զարհուրէ, թշուառական
զաւակ. դուն ալ որդի ունիս. եւ ես քու հայրդ եմ, ու
քեզի կը հրամայեմ որ վերջին խօսքերս մտիկ ընես:
Բերնէս հրամայել բառը լսելով՝ կը սոսկաս, կրակ կը
կտրիս, կատաղութիւնդ աւելի կը զրգուի, այնպէս չէ՞:
Մտիկ ըրէ. ահագին ցաւերուս մէջ՝ դուխտ անէծք
կրնայի թափել, բայց չէ, չուզեցի. ուզեցի որ երկնից
բարկութիւնը վրադ չմաղթած՝ մէյ մը զքեզ տեսնեմ:
Հայր ըլլալս դեռ մտքէս ելած չէ. զքեզ անմեղադիր
կ'ընեմ: Այո՛, ես, քու զոհդ, յանցանքդ ջատագովել
ուզեցի. Աստուծոյ ինծի տուած զէնքերը մինչեւ հիմա

դործածել չուզեցի: Գնա, գնա առ ջեւէս, բնելիքդ ազ-
ղէկ մտածէ, որոշելէն առաջ՝ ճիշդ քննէ ու Աստուծոյ
տուած վճիռները յիշէ: Ով որ իր հայրը կը նեղէ եւ
մայրը կը մերժէ, վատանուն ու ողորմելի է: Հայրն ու
մայրն անհիծողը կը կորսուի, կեանքը խաւարի մէջ կը
մարի: Հօրը վրայ ծիծաղող ու մայրն արհամարհող մար-
դուն աչքն արժանի է որ ազուաւր հանէ ու արծիւն
ուտէ: Հայրը թողուցողը՝ մարդիկներուն առջեւ պա-
տիւր կորսընցուցած է. եւ ով որ մայրը տրամաթեան
մէջ կը խոթէ, Աստուծմէ անհիծուած է: (Աստուծոյ կ'եր-
թայ:) Հնազանդեցաւ . . . կարծեմ թէ Աստուած որ-
դեակս զեղջի պիտի բերէ:

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՍՈՒՐԷՆ՝ աստուծոյ:

Աս ի՞նչ բան է. կարծես թէ զօրաւոր ազդեցու-
թիւն մը ինձի իմաց կու տայ որ այսօր ամէն չարիքնե-
րէս պիտ'որ ազատիմ . . . Ի՞նչ, ես ազատութիւն գրտ-
նեմ . . . պիտի կարենան արդեօք աչուրներս՝ աշ-
խարհքիս լուսատու շողուն աստղը տեսնել . . . աս
ճանր, անտանելի շղթաները ձեռուրներէս պիտ'որ իյ-
նան, պիտի խորտակի՞ն. ծերութենէ խորշոմած ձե-
ռուրներս՝ բարեկամի մը ձեռք պիտի կարենան թօ-
թուել . . . մէյ մ'ալ պիտի կարող ըլլամ հանդէիլ ու
քնանալ ծաղկաւէտ անտառներուն մէջ՝ ուր որ ջրերը
կը մրմնջեն, սոխակները քաղցր ձայնիւ կ'երգեն . . . :
Ո՛հ, ազատութիւն, ազատութիւն, ո՛ւր ես, եկուր.
Վասն զի դուն ես միայն բաղձանքս, ցանկութիւնս,
սէրս. եկուր արցունքներս սրբէ, դունաս երեսս ջնջէ.
Ո՛հ, եկուր սրտիս անագորոյն վերքերը բժշկէ . . . : Ո՛ւր
եմ, ո՛ւր տեղ ազատութիւն կը փնտռեմ. չարագոր-
ծութեանցս վկայ եղող տեղւոյ մը մէջ կրնամ այսպի-
տի բան մը մտածել. փախչիմ, փախչիմ, աւելի խո-
րունկ անդունդ մ'երթամ: Ո՛հ, Սուրէն, Սուրէն,

ծածկէ գոցէ քու դէմքդ, յանցաւոր, հրէշ ես. կրնան
 յանդգնիլ ազատութիւն խնդրել, իրաւունք ունին
 տրանջելու. ինչպէս կը համարձակիս որդւոյդ սպառ-
 նալ, որն որ քեզմէ շատ քիչ յանցաւոր է. անխ, Աս-
 տուծոյ անէծքն ինչպէս գլուխդ չինկաւ...: Աս ինչ
 սոսկում է... անվկանդ զօրութիւն մը զիս կ'արդելէ.
 փախչիլ կ'ուզեմ, բայց չեմ կրնար... հոս բռնուած,
 աներեւոյթ կապանքներէ կապուած եմ...: Աստուած,
 Աստուած, գթա վրաս, թողութիւն տուր ինձի...
 պատժէ զիս, սիրաս կտոր կտոր ըրէ. գլուխս պատռէ,
 պատինս զարկ, ջախջախէ. սակայն թողութիւն տալն
 ալ մի մտնար...: Բայց ինչ նոր ու անլուր ձայն է
 ասիկա, գաղտնի սանդղին կողմանէ ոտնաձայն մը կը
 լսեմ... կ'երեւայ թէ մէկը կու գայ... գուցէ դահիճ
 մը կամ Աստակին կողմանէ խրկուած մարդասպան չա-
 րագործներ ըլլան...: Ամէն տեղ յանցանք ու արիւն
 կը նշմարուի...: Երթամ պահուրտիմ, սա խուցը
 մտնեմ...: Մէյ մը մտիկ ընեմ... աւասիկ դուռը հոս
 է... աչուրներս մթութեան վարժած ըլլալով՝ մթին
 ստուերներուն մէջն ալ չեն սխալիր:

Տ Ե Ս Ի Լ, Գ.

ԽՈՍՐՈՎ, ՅՈՎՀԱՆՆԵՍ

ՅՈՎՀԱՆՆԵՍ՝ յերոսէ վարդապետ լահ ղ:

Մեպուհ, աս կողմանէ. աւասիկ ձեր պապուն ինձի
 երեւցած տեղն աս է, աւասիկ սա խուցն է. աս կողմա-
 նէ ներս մտնելով՝ յառաջ գնաց, եւ աչքէս աներե-
 ւոյթ եղաւ: Աս որահը շատ խոնաւ է, անոր համար կը
 վախնամ որ պաղ չառնէք ու անհանդիստ չըլլաք.
 կ'աղաչեմ վերարկունիդ վրանիդ առէք:

ԽՈՍՐՈՎ

Աղէկ է, ըսածդ կ'ընեմ. ջահը սա սեղանին վրայ
 դիր, աթուռ մօտ բեր, եւ զիս մինակ թող, գնա:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Սիրելի Սեպուհս, հրամանոցմէ շնորհք մը կը խընդրէի:

ԽՈՍՐՈՎ

Ի՞նչ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Հրաման տուէք որ գիշերը քովերնիդ կենամ ու հսկեմ:

ԽՈՍՐՈՎ

Չէ, չ'ըլլար, բարեկամ, գնա դուն հանգչէ. անհանդիստ մ'ըլլար, վաղը նորէն կը տեսնուինք:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Քովերնիդ աւելի հանդիստ կ'ըլլամ:

ԽՈՍՐՈՎ

Ար բաղձամ առանձին մնալ. դուն գնա:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Լաւ է, կ'երթամ. բայց աս տեղերուն մօտ կը կենամ, որպէս զի կանչածնուդ պէս՝ շուտ մը կարենամ գալ:

Տ Ե Ս Ի Լ Ե

ԽՈՍՐՈՎ՝ արտնչին, նստած:

Աս բնակութիւնը՝ շատ մութ ու տխուր տեղ մըն է: Թէպէտ վախ չեմ զգար. բայց մինչեւ հիմայ սիրտս երբէք այսպէս զօրաւոր զարկած չունէր: (Քիչ մը ասեմ լատին կենսակէն ետեւ:) Յովհաննէս ստուգիւ խաբուեր է. խեղճ երիտասարդին երեւակայութիւնը զանազան յիշատակներէն գրգռուելով, պապս աչքին առջեւը բերեր է...: Հոս գիշերը ցուրտ է...: Ուրեմն պակերուս բնակութեան տեղը հոս է եղեր. արդեօք դղեկին աս կողմը հիմակ ինչո՞ւ թող են տուեր... անտարակոյս մտքերնուն մէջ աղէտալի խորհուրդներ չյարուցանելու համար: Ո՛հ, Աստուած, Աստուած, մարդը՝

միայն չարչարուելու եւ վիշտ կրելու համար կ'ապրի : ...
 Ես իսկ դեռ տարիներուս դարունը չտեսած եւ կատա-
 րեալ այր չեղած՝ մօրս մահը տեսայ, ու քրոջս եւ քանի
 մը սերտ բարեկամներուս վախճանը զիս վիրաւորեց : ... :
 Դեռ քսանուհինդ տարւան չեմ, բայց աչքիս առջեւ
 խռովութեան ու նենգութեան շատ տեսարաններ ելան :
 Ո՛հ, ս՛հ, սրչափ երանելի են աշխարհքէս հեռու ա-
 պրողները, անոր փոթորիկներէն ու մոլութիւններէն
 ազատ եղողները : Այսպիսիներուն խելքն ու միտքը՝
 միայն Աստուծոյ վրայ կ'ըլլայ, բոլոր կեանքերնուն ըն-
 թացքը սքանչելի կ'երեւայ. մարմիննին աղէտք կը կրէ,
 բայց հոգիննին հիմակուրնէ ընտրելոց երջանկութիւնը կը
 վայլէ : (Ժամացոյցի յայն կը լսուի :) Աէս գիշեր կը զար-
 նէ. չորս կողմը խոր լուութիւն տիրած է, քիչ մը
 հանդիմ : ... : (Թուրք՝ սեղանին վրայ դնելով :) Այն ան
 խաբեբային, որն որ աս խաղաղ բնակարանին բնակիչ-
 ներն անհանդիստ ընելու կը յանդգնի : (Քու՛ն կը ծփնէ...
 կ'երազէ... :) Ո՛հ, մայր, սրչափ ուշացար... ա՛յ այսու-
 հետեւ ինձմէ չես կրնար բաժնուիլ... ի՛նչ գեղեցիկ,
 սրչափ սքանչելի է քու բնակած տեղդ. ճակատդ եր-
 ջանկութիւն կը բուրէ... գլքեզ պատող ճառագայթն
 անչափ պայծառութիւն մը կը ցոլացընէ... հետքիդ
 վրայ ծաղիկներ կը բուսնին... ս՛հ, ի՛նչչափ սիրուն...
 սրչափ շքեղ ես... : Խօսէ, մայր, խօսէ ինձի հետ...
 խօսք մ'ալ զրուցէ... ինչո՛ւ կը լռես... ս՛հ, սրչափ
 կ'ուրախացընէ, կը մխիթարէ զիս ծիծաղդ... հոս աս-
 տուածային բնակութեան տեղ չէ... : Ո՛հ, Աստուած,
 ի՛նչ պիտ'որ ըլլայ աս զարհուրելի տեսիլքն, ի՛նչ է աս
 արիւնը, ինչո՛ւ սուր... մայր... մայր... : (Խորովին
 երազած ասին՝ Սուրեն շինքը կը ճանգնայ եւ խցին ելլե-
 րով երեն կը ծփենայ :)

Տ Ե Ս Ի Լ Ք .

Ս Ո Ւ Ր Է Ն , Խ Ո Ս Ր Ո Վ

ՍՈՒՐԷՆ՝ ցած յայնով :

Հանգչէ , սրդեակ , քնացիր . . . : Քիչ մ'ալ մօտե-
նանք . . . ան է ուրեմն Վասակին ժառանգը . . . սէ , սր-
չափ խուփուած է իր քունը . . . : Սա ջահն աչուրներուս
համար արտաքոյ կարգի կենդանի լոյս մ'ըլլալով՝ թո-
ռանս դէմքն ու կերպարանքը աղէկ մը տեսնելու զիս
կ'արգելէ . . . : Ի՛նչ քաղցր ու հեզ կերպարանք , ի՛նչ
անոյշ դէմք . . . քաջասրտութիւն շատ կայ աս երիտա-
սարդին վրայ . . . : Ակնդանի ըլլալս չիգիտեր . . . : Եր-
թամ , երթամ աս տեղէն , որ նոյն անմեղին՝ հայրն
անիծելու առիթ չըլլամ : Երանի՛ թէ իր պապերուն
յանցանքները յաւիտեանս չիմանայ . . . : Մնաս բարով ,
սրդեակ , երկնից օրհնութիւնը դուխդ իջնայ . օրերդ՝
երջանկութեամբ անցնին , փառասիրութեան արատով
մը երբեք չարատին . հնազանդ որդիք ունենալով՝ ծե-
րութիւնդ անցաւ ու անտրտում անցնի . . . : Մնաս
բարով : (Սուրենին շղթաները կը հնչէն :)

ԽՈՍՐՈՎ՝ արեւնաւով՝ վեր կը ցատէ :

Ո՛վ է ան . . . : Պատասխան տուր . դուն ո՛վ ես , խօսէ :

ՍՈՒՐԷՆ

Գժբախտ մըն եմ , եւ աս տեղէն պէտք է որ փախչիմ :

ԽՈՍՐՈՎ

Չէ , կեցիր , դուրս մ'ելլեր . ո՛վ ըլլալդ պիտ'որ ի-
մանամ :

ՍՈՒՐԷՆ

Չեմ կրնար ըսել , պէտք է որ լռեմ :

ԽՈՍՐՈՎ

Շղթաներն ի՛նչ պիտ'որ ըլլան : Յանցաւոր ես . . . :
Խօսէ . ինչո՞ւ կը լռես :

ՍՈՒՐԷՆ

Մի հարցրներ , երիտասարդ . թող զիս , երթամ :

ԽՈՍՐՈՎ

Չէ, գաղտնիքը պիտի յայտնուի: Քու սպիտակ մազերդ ու տկարութիւնդ զիս ի գուժ կը շարժեն: Արդեօք հայրս վշտացուցեր ես:

ՍՈՒՐԷՆ

Իրեն դէմ ըրած յանցանքս՝ գուցէ զինքը չափէ գուրս սիրելը եղած ըլլայ:

ԽՈՍՐՈՎ՝ Ինչ էր՞:

Ի՛նչ զարհուրելի կասկածներ կը ծնանին մտքիս մէջ, ի՛նչ ահագին երկիւղներ սիրտս կը խռովեն . . . ալ կենդանութեան շունչ չմնաց վրաս . . . սա անօրէնութեան ծածկոյթը մէկդի առնենք: (Չայնիւս:) Ծեր, ըսէ ինձի՝ անունդ ի՛նչ է, ո՞ւր ծնած ես:

ՍՈՒՐԷՆ

Արդէն քեզի ըսի որ լեզուս կապուած է:

ԽՈՍՐՈՎ, Ինչ էր՞:

Տարակուսանքս պէտք է որ լուսաւորեմ: (Չայնիւս:) Յովհաննէս:

ՍՈՒՐԷՆ

Զո՞վ կը կանչես: Ի՛նչ, Յովհաննէս հե՛տդ է:

Տ Ե Ս Ի Լ, Է.

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ

ՅՈՎՀԱՆՆԷՍ

Տէր Աստուած, ճիւղաղն է, Սուրէն սեպուհն է:

ԽՈՍՐՈՎ

Աստուգիւ, Սուրէն սեպուհն է: . . . Զձեզ հոս գնողն ո՞վ է. հայրս: (Սուրբնին որք է՛նչնայ:) Եկէք, սիրելի պապս, եկէք փախչինք . . . զօրութիւնս կը կտրի: Ա՛հ, Աստուած իմ, որչափ դժբախտ ու ողորմելի եմ:

ՍՈՒՐԷՆ

Խաղաղցիր, օրդեակ . . . մի խառնիր . . . : Ո՛հ, ափսոս, ուզեցիր իմանալ . . . :

ԽՈՍՐՈՎ

Սեպուհ, հայրս ձեր բանաարկութեան պատճառ չիկրնար ըլլալ, ձեր վիճակը չիգիտեր. անոր տեղ ես կը խօսիմ: Չեմ գիտեր աս պատահած դէպքերուն գաղտնիքն ի՞նչ է . . . : Խորտակեցէք, կոտորեցէք շողթաներնիդ, ձեր բազուկները չարչրկող կապանքը մէկդի առէք . . . : (Սուրենին շղթաները + ափսոս կը ջանայ:)

ՍՈՒՐԷՆ

Ո՛րդեակ, Աստուած վրաս դուժ ունի եղեր, վասն զի ուզեց որ մեռնելէս յառաջ գլխի տեսնեմ: Բայց զիս ազատել ուզելուդ ջանքը պարապ է. զիս հոս թող, մինակ թող. դուն, սիրելիս, փախիր, հեռացիր աս զարհուրելի տեղէն: . . . Ո՛հ, սով գիտէ եթէ հալածիչներս հոս գտնուէին, կատաղութիւննին սուր կը հասնէր:

ԽՈՍՐՈՎ

Ամենեւին մէկէ մը չեմ վախնար . . . : Ի՛նչ, ես գծեղ թողնում: Չէ, երբեք այսպէս բան չեմ ըներ: Գուք՝ Սուրեն սեպուհը չէք մի: . . . Ի՛նչ, ըսել տամ որ իր թուր զինքը թող տուաւ, իր անձին վտանգէն վախնալով՝ պապը դերութենէն չազատեց: . . . Ո՛հ, սիրելի պապս, այսպիսի վատութեան գործք մը ինձի ինչու կ'առաջարկէք: Չիս այնչափ վախ կարծեցիք: Բայց կ'ազաչեմ՝ ձեր հալածիչն սով է, անունը զրուցեցէք:

ՍՈՒՐԷՆ

Ինչպէս յառաջագոյն ըսի նէ՛ դարձեալ կը կրկնեմ, անունը չես կրնար գիտնալ: Հիմայ, օրդեակ, ես քեզ մէ կը խնդրեմ ու կ'ազաչեմ որ եթէ զիս կը սիրես, թէ որ ծնողքդ ու զԱստուած կը սիրես, ելլես փախչիս աս տեղէն:

ԽՈՍՐՈՎ

Միտքս ու որոշումս անփոփոխ է, Սեպուհ: . . . Ինձի

նայէ, Յովհաննէս, գնա հօրս ըսէ որ հոս գայ, իրեն
կը սպասեմ:

ՍՈՒՐԷՆ

Բայց գիտ...:

ԽՈՍՐՈՎ

Գնա, Յովհաննէս:

ՍՈՒՐԷՆ

Տէր Աստուած, կու գանի կոր...:

ԽՈՍՐՈՎ

Մի վախնաք, սիրելի պապ: Վայ անոր՝ որ ձեզի
դպչելու կը յանդգնի:

Տ Ե Ս Ի Լ Ը

ՍՈՒՐԷՆ, ԽՈՍՐՈՎ, ՏԻՐԻԹ

ՏԻՐԻԹ

Ա՞ ի՞նչ է, Երիտասարդ, հոս ի՞նչ գործք ունիս:

ԽՈՍՐՈՎ

Քեզի ի՞նչ:

ՏԻՐԻԹ

Ա՞ կերպով կը խօսիս, յանդուգն:

ԽՈՍՐՈՎ

Մի մօտենար, չէ՞նէ՛ կը մեռնիս: (Թորով կը սպասանայ:)

ՏԻՐԻԹ

Ա՛ն ուրիշ բան: (Ինչ իրեն:) Զէ՛նք ունի եղեր
մ'այլայլեր, Տիրիթ: (Զայնի:) Գիտցած ըլլաս որ զէնքդ
զիս չի վախցընէր: Խոսրով, քեզի բան մ'ըսեմ. ինձի
հետ քաղցրութեամբ ու հլուութեամբ վարուելու ես:

ԽՈՍՐՈՎ

Գուն ալ, ժպիրհ, ձայնդ քաշէ, եւ աս պատուա-
կան ծերունւոյն շղթաները խորտակելու համար ինձի
օգնէ:

ՏԻՐԻԹ

Կ'երեւայ որ փախչիլ կ'ուզես, այնպէս չէ՛:

ԽՈՍՐՈՎ՝ Խորե Տերեխին Խորժե և Խեբնցնէ :

Շնւտ, քեզի կը հրամայեմ որ շղթաներուն բանալին տաս :

ՏԻՐԻԹ

Պատճառներդ զիս յաղթահարեցին. աւասիկ բանալին, առ :

ԽՈՍՐՈՎ

Շղթաները քակէ :

ՏԻՐԻԹ

Ար հնազանդիմ : (Ինժ երեւի) Սա թշուառականը զիս աղու պէս կը խաղցընէ : (Սորեւին յեռաբնէրէն շղթաները կ'եյնան) :

ՍՈՒՐԷՆ

Որդեակ, սիրելի Խոսրովա, ձեռուքներդ ինձի երկրնցուր՝ որ արցունքներովս թրջեմ :

ԽՈՍՐՈՎ

Ե՛ս, ազնիւ Սեպուհ, ես պէտք եմ ձեր ձեռուքները պաղնել : (Տերեխին) Գուն հոս կեցիր. մինչեւ որ հայրս գայ, որպէս զի քու շարագործութեանցդ պատիժն ընդունիս :

ՏԻՐԻԹ

Ի՛նչ, հայրդ ալ պիտի գայ : Շատ մեծ զգուշութիւն կը բանեցընես : (Սորեւին) Այնպէս չէ՞ մի, ծերունի : (Ինժ երեւի) Սուտը վերջը չեմ գիտեր ինչպէս պիտ' որ ըլլայ :

ՍՈՒՐԷՆ

Խոսրով, սա մարդը թող տուր. մենք ելլենք երթանք, հօրդ հասնելէն յառաջ երթանք :

ՏԻՐԻԹ

Երթա՛լ, փախչի՛լ, ա՛ն ուրիշ բան : (Խոսրով Խորե դարձեալ Տերեխին Խորժե և Խեբնցնէ) Չէ, չէ, կ'ուզէք նէ՛ ելէք գացէք :

ՍՈՒՐԷՆ

Երթա՛նք, փախչի՛նք, Խոսրով . . . :

ԽՈՍՐՈՎ

Արդեւք մը չկայ :

ՍՈՒՐԷՆ՝ այլայլած յայնով ինչ :

Չգուշացիր, օրդեակ, չըլլայ որ տախտակամածին վրայ . . . եղած արիւնը կոխես . . . : (Խոսքովին յերսեմեան բռնեւելով :) Նայէ . . . սա արեան բիծը կը տեսնես աւասիկ պատին վրայ ալ ցատքած է : . . . Աեցիր սրբեմ . . . ո՛հ, սա ինչ զարմանալի բան է, չ'եւրեր :

ԽՈՍՐՈՎ

Սեպուհ, հետս եկէք . . . երեւակայութիւննիդ խռոված ու այլայլած է . . . վշտերնիդ, դժբախտութիւննիդ :

ՍՈՒՐԷՆ՝ երեւակայութիւննիդ ինչ չ'է :

Չէ, սիրելիս, չէ . ես սա արիւնը կը ճանչնամ Ո՛հ, ո՛հ, նայն արեան մէջ ձեռուրներս թաթխուած են . . . անով՝ սա պատերը, զգեստներս, հոստեղի կահքն արիւնըւայ եղած են . . . : Ըսէ, օրդեակ, ճակատիս վրայ արեան մեծ բիծ մը չկայ : (Չերսեմեան ինչ զարմեմ :) Արատը կը տեսնուի, այնպէս չէ մի . . . : Շղթաներս ո՛ւր են . . . բերէք, կապանքս ինծի բերէք . անոնք ազատութենէս աւելի թեթեւ են :

Տ Ե Ս Ի Լ Թ .

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ՎԱՍԱԿ

ՎԱՍԱԿ

Խոսքով, դուն հոս գաս :

ԽՈՍՐՈՎ

Հայր, լուեցէք, մի խօսիր :

ՍՈՒՐԷՆ

Ա՛հ, դուն ես, Վասակ . ես հոս շատ դո՛հ եմ . . . շղթաներս քակեցին առին, բայց ես կ'ուզեմ զանոնք . . . ինծի ախորժեղի են . . . : Չես խօսիր . . . : Ա՛լ քողով վերցրնենք, բանը յայտնենք : Եկուր, Խոսքով, դուն

ալ, Ասասկ, մօտ եկուր. ինչո՞ւ ապշած կը նայիք
 . . . : Տեսէք . . . ո՛հ, սա արիւնը տեսէք. ձեռուքներս
 պատող, մատուքներս շաղախող, ճակատս լուացող եւ
 զձեզ ապշեցրնող արիւնն աս է . . . ալ նոյն արիւնը
 վրայէս չեմ կրնար ջնջել: Աստուած արդար է, անոր
 համար իր անէծքը հօրս արիւնովը ճակատս գրուեցաւ:

ԱՄԷՆՔԸ

Ո՛հ, Աստուած, Աստուած:

ՍՈՒՐԷՆ

Ար տեսնէք. ոտք կ'ելլէ . . . ան է . . . զիս կը կանչէ
 . . . մէկ մատովն իր վերքերն աչքիս կը ներկայացընէ . . .
 մէկալով երկինքը կը ցուցընէ . . . : Ասասկ, մի մօտե-
 նար . . . : Շնորհք, թողութիւն, հայր: (Բազմոցին վրայ
 կ'իյնայ: Լուսինն կը արեւ:) Գնաց. հա՛, գնաց . . . ալ
 զինքը չեմ տեսներ . . . քիչ մը հողի կ'առնեմ . . . բայց
 ես ո՞ւր եմ. Ասասկին քովն եմ եղեր . . . : Մտիկ ըրէ,
 սղորմելի, իմ հարուածներուս տակ մեռնող . . . եւ փա-
 ռասիրութեանս զոհ եղող հօրս վերջին ըսած խօսքե-
 րուն միտ դիր . . . : Ես կը մեռնիմ, պոռաց, բայց Աս-
 տուած զքեզ կը տեսնէ. իմ տեղս՝ որդիդ քեզմէ վրէժ
 պիտ'որ առնէ . . . : Ստուգիւ ալ այնպէս եղաւ. ահա-
 ւասիկ շղթաներս, զգեստներս եւ բանտարկութեան
 տեղս տեսէք . . . : Ասասկ, դուն զարմացեր կեցեր ես.
 իմ յանցանքս մինչեւ հիմա ծածկուած էր . . . քուկինդ
 հիմակ յայտնուեցաւ . . . զիացիր որ իմ մահս մօտ է . . . :
 (Չայնն աւելի կը նոսաղի:) Ո՛հ, Աստուած, Աստուած.
 դուն՝ որ զղջացեալ մեղաւորաց կը դժաս, իմ վրաս
 ալ դժաս, թողութիւն տուր ինձի, բարկութիւնդ,
 ահագին շանթդ մ'արձրկեր, հեռացուր սերնդէս: Ո՛հ,
 սիրելի Խոսրովս բարիքներով լեցուր . . . ջնջէ հանէ
 մտքէն իր պապերուն անօրէնութեան յիշատակը. ինքն
 անմեղ է ու ձեռուքները մաքուր: Իսկ ես . . . ո՛հ, ո՛հ . . .
 բայց շնորհակալ եմ՝ որ քսան տարի մարդիկներուն
 ընկերութեան մէջէն զիս մերժեցիր . . . զիս այնպէս մէ-

կու մը ձեռքով պատժեցիր, որն որ ինձի շատ սիրելի էր...: Մնա՞ք բարով, սիրելիք, մնա՞ք բարով...: (Ալբերտի:)

ՎԱՍԱԿ

Աստուած, քու խորհրդոցդ խորութիւնն ո՛վ կը ճանչնայ, անոնց ո՛վ կրնայ խելք հասցընել...: Ի՛նչ ըսեմ: (Քիչ մը ասին խորունկ մտածմանց մէջ իյնալէն ետեւ:) Խնորով, ունեցածս չունեցածս քեզի կը թողում. ես այսուհետեւ վանք մը մտնելով՝ խաղաղութեանս եւ ապաշխարութեանս հնարքը կ'ուզեմ փրկատել: Մնա՞ս բարով. հայրդ մի մոռնար...: Չէ, չէ... մոռցիր... զինքն ու իր եղեռնադործութիւնը մտքէդ հանէ: (Լալով դուրս կ'ելլէ:)

ԽՈՍՐՈՎ

Ո՛հ, ո՛հ. աս ինչ դէպքեր են, մտքէ վեր փոփոխութիւններ կը տեսնեմ...: Երանի թէ հոս ներկայ ըլլային ան սողաք ու երիտասարդք՝ որոնք ճնողաց ունեցած պարտքերնին կը մոռնան: Երանի թէ հայրանարգու եւ մայրերնին արհամարհող որդիք աչուրներնուն առջեւն ունենային իմ ճնողացս վրայ եկող երկնից վրէժխնդրութիւնը:

1845

U. S. A.

U. S. A.

U. S. A. S. O. F. U. S. A.

Ա Ն Չ Ի Ն Ք

ՊՐ. ՏԻՐԱՆ :

ԳԵՂԱՄ, իր որդին 12 տարւան :

ՍԱՀԱԿ, իր եղբորորդին, Գեղամին տարեկից :

ԱՏՈՄ, Գեղամին մեծ եղբայրը, 14 տարւան :

ՎԱՀԱՆ, }
ՎԱՐԳԻԱՆ, } Ատոմին բարեկամները :

ՍԱՐԳԻՍ, աղքատ տղայ մը :

ԹԱԳԷՈՍ, ծառայ :

Տեսարանը Պր. Տիրանին ապարանից մէկ մեծ սենեկին մէջն է :

Գ Ե Ղ Ա Մ

Կ Ա Մ

ԱՆԿԻՐԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿ

Տ Ե Ս Ի Լ Ա

Գ Ե Ղ Ա Մ, Ս Ա Հ Ա Կ

ԳԵՂԱՄ

Սահակ, ինձի հաճութիւն մը պէտք է ընես :

ՍԱՀԱԿ

Ի՞նչ է : . . . Հաճութեան գործքեր ընելն ալ միշտ ինձի կ'իյնայ :

ԳԵՂԱՄ

Այնպէս է, վասն զի դուն խոհեմ ու իմաստուն ես :
. . . Գիտես արդէն որ վարպետս՝ Եղիշէի Վարդանանց պատերազմէն կտոր մը տուաւ աշխարհաբար թարգմանելու :

ՍԱՀԱԿ

Եւ դուն դեռ թարգմանութիւնդ չես ըրած :

ԳԵՂԱՄ

Ե՞րբ կ'ընայի ընել :

ՍԱՀԱԿ

Կէսօրէն մինչեւ հիմա ժամանակ չունեցա՞ր : — Անկէ մինչուկ հիմա հինգ ժամ եղաւ եւ վայելչագրութեան վարպետնիս դեռ եկած չէ . . . :

ԳԵՂԱՄ

Կերակրէն յառաջ պարտէզը քիչ մը շարժում ուղեցի ընել, ապա թէ ոչ՝ ախորժակ չէի ունենար :

ՍԱՀԱԿ՝ հեփեփեփ :

Շիտակը քեզի ախորժակ պէտք է, որովհետեւ դուն չէ թէ միայն քու մասդ կը սպառես, հապա կուզի պէս առջեւդ ելածը կը յափշտակես :

ԳԵՂԱՄ

Սեղանէն ելանք կէսօրէն մէկուկէս ժամ ետքը : . . .
Անսխալապէս սեղանէն վերջը գործելը՝ առողջութեան
սաստիկ մնաստկար է, ինչպէս որ բժիշկներն ալ կ'ը-
սեն : Ասոր համար դարձեալ քիչ մը զբօսանքի ելայ :
Ետքը նկարչութեան փորձ ըրի :

ՍԱՀԱԿ

Ի՛նչ, դ՞ու՞ն նկարչութեան փորձ ըրիր : Անշուշտ
գեղեցիկ բաներ եղած պիտ'որ ըլլան : Նկարածդ ի՛նչ է :

ԳԵՂԱՄ

Վարը պարտեզին պատին վրայ ածխով իշու գլուխ-
ներ նկարեցի :

ՍԱՀԱԿ

Սառգիւ կ'ըսեմ, Գեղամ, թէ որ դաստիարակնիս
եւ հայրդ ամէն օր առնը չգտնուէին, չեմ գիտեր ի՛նչ
կ'ըլլայիր : Գոնէ հիմա չե՞ս կրնար նստիլ թարգմա-
նութիւնդ ընել :

ԳԵՂԱՄ

Հիմակ : Աս ատենը վայելչագրութեան որոշուած
չէ՞ մի :

ՍԱՀԱԿ

Բայց վայելչագրութեան վարպետն եկած չէ :

ԳԵՂԱՄ

Բան չկայ : Ես ժամանակներն իրարու հետ շփոթել
չեմ ուզեր :

ՍԱՀԱԿ

Մինչեւ իրիկուն դեռ ատեն կայ :

ԳԵՂԱՄ

Եւ ոչ վայրկեան մը : Որովհետեւ եղբօրս երկու բա-
րեկամներն իրեն տեսութեան պիտի գան :

ՍԱՀԱԿ

Քեզի ի՛նչ անկից :

ԳԵՂԱՄ

Ես ալ պէտք է որ քովերնիս դա՛նուիմ :

ՍԱՀԱԿ

Եղբորդ ստուգիւ մեծ ուրախութիւն պիտի պատճառես: Անշուշտ իրենց զուարճութիւնը պիտ'որ աւրես:

ԳԵՂԱՄ

Իմ հաճութիւնս ալ ան է՝ որ իրենց արդելք ըլլամ: — Ասկից զատ՝ ճրագով չեմ ուզեր ուսման զբաղիլ: Աչքս ինձի հարկաւոր է: Բայց մէկալ կողմանէ ալ թարգմանութիւնս վաղը առտու պէտք է որ լմնցած ըլլայ:

ՍԱՀԱԿ

Ան ալ քու դիտնալու բանդ է. կ'ուզես լմնցուր, կ'ուզես մի լմնցընէր:

ԳԵՂԱՄ

Հա՛, հա՛, որպէս զի դաստիարակնիս զիս յանդիմանէ, ինձի բարկանայ, եւ երթայ հօրս ամբաստանէ:

ՍԱՀԱԿ

Արժան եւ իրաւ: — Բայց ըսածներէդ ի՞նչ կը հետեւի:

ԳԵՂԱՄ

Ի՛նչ. վերը զրուցածս կը հետեւի. այս ինքն թէ՛ թարգմանութիւնս դուն ընես եւ ես օրինակեմ:

ՍԱՀԱԿ

Ամենեւին չեմ ընէր: Մինչեւ հիմա շատ անգամ ըրած եմ, եւ ան պատճառաւ ինք զինքս միշտ կը կըշտամբեմ. վասն զի անով քեզի՝ անգթութիւն, իսկ քու սիրելի հօրդ՝ խաբէութիւն ու անշնորհակալութիւն ըրած եմ:

ԳԵՂԱՄ

Ինչո՞ւ համար:

ՍԱՀԱԿ

Գաստիարակնիս քովերնիս ինչո՞ւ կը կենայ. քեզի դաս տալու ատեն՝ միտքն ան չէ՞ որ բան սորվիս: Արդ՝ ես քու տեղդ նստելով թարգմանութիւնդ ընելով՝ դուն բան մը կը սորվիս: Չէ: Ես այսպէս քու գործ-

քերդ գործելով՝ քու ծուլութեանդ ու խաբէութեանդ ճարակ տուած կ'ըլլամ, եւ պատճառ կ'ըլլամ որ բուլոր կենացդ մէջ բանի մը չես դար: Եթէ այսպէս յառաջ երթաս նէ՛ հացդ ինչով կրնաս վաստրկիլ:

ԳԵՂԱՄ՝ ծիծաղելով:

Գահ, գահ. հացս վաստրկիլ. կարծես թէ հայրս բաւական դրամ չունի. անոր մահուրնէն ետքը ստակն իմս է. եւ դրամ ունեցողը՝ վաստրկելու հարկաւորութիւն չունի:

ՍԱՀԱԿ

Գնա՛, աս ինչ խօսքեր են, Գեղամ: Հայրդ՝ իմ հօրեղբայրս միայն է, ի վերայ այսր ամենայնի սիրտս կը թնդայ երբ որ անոր մահուան յիշատակը միայն միտքս դայ: Իսկ դուն անոր վրայ այնպէս կը խօսիս՝ իբրեւ թէ ոչինչ բան մ'ըլլար կամ թէ նոյնին բաղձայիր:

ԳԵՂԱՄ

Քու սիրտդ պէտք է որ դողայ, որովհետեւ հայրս մեռնելու ըլլայ նէ՛ դուն ժառանգութիւն առնելիք չունիս, եւ հիմա քովերնիս ձրի հաց կ'ուտես: Թէ որ քու հայրդ ալ քեզի ժառանգութիւն մը թողուցած ըլլար, ուսման ետեւէն այնչափ չէիր իյնար, հապա անտարակոյս ինծի պէս կը զբօսնուիր:

ՍԱՀԱԿ

Շնորհակալ եմ Աստուծոյ որ հայրս ինծի բան մը թողուցած չէ: Քու հօրդ ալ շատ շնորհակալ կ'ըլլամ որ զիս ուսման մէջ այնչափ կը յառաջացրնէ՛ որչափ որ հարկաւորութիւն կրնամ ունենալ: Աստուծոյ կ'աղաչեմ որ անոր երկայն կեանք տայ, որպէս զի ես ալ իր օգնութեամբն աղէկ ու կրթեալ մարդ մ'ըլլամ. եւ քու օգնութեանդ չկարօտիմ, երբ որ դուն յուսացածիդ պէս հարուստ ու պարապորդ մարդու մը վիճակին հասնիս:

ԳԵՂԱՄ

Աս շատխօսութենէդ բան մը չիհետեւիր. եւ ոչ

ալ կրցար զիս համոզցընել որ թարգմանութիւնս ես
անձամբ ընեմ: . . . Ուստի ի՞նչ կ'ըսես. թարգմանու-
թիւնս կ'ընե՞ս, թէ չէ:

ՍԱՀԱԿ

Չեմ ըներ՝ ըսեմ նէ, ի՞նչ պատասխան կու տաս:

ԳԵՂԱՄ՝ ԸՂԸԻՐԻՒՄ Է ԿԵՆԻ:

Ուրեմն չե՞ս ուզեր: . . . Սի՛րելի Սահակ, աս ան-
գամ ալ կամքս կատարէ: Ա՛լ այսուհետեւ գործքերս
անձամբ կ'ընեմ եւ քեզի ծանրութիւն չեմ ըլլար,
մանաւանդ թէ ամէն բանի մէջ կամքդ կը կատարեմ:

ՍԱՀԱԿ

Չէ նէ ինձի տրամութեան պատճառ ըլլալը կը շա-
րունակես. դաստիարակին եւ հօրդ առջեւ զիս վատա-
նուն ընելու եւ աչքերնէն հանելու կը ջանաս:

ԳԵՂԱՄ

Չէ, չէ. կ'ուզես նէ՝ քեզի երդում ալ ընեմ. . . :

ՍԱՀԱԿ

Հո՛ւ, ան միայն կը պակսեր: . . . Ի՞նչ եւ իցէ, նայէ.
աս հեղ ալ կ'ընեմ. բայց քեզի յայտնի կը զրուցեմ որ
ուրիշ անգամ ընելէք չունիմ: Աս ալ դիտցած ըլլաս
որ հայրդ օր մը խաբէութիւններդ պիտ'որ իմանայ:

ԳԵՂԱՄ

Ի՞նչ խաբէութիւն է ասիկայ. կ'ուզէի դիմնալ:

ՍԱՀԱԿ

Քեզի նոր բան մ'ըսեմ, Գեղամ. գլուխս կրնայի
դնել որ ան գործքին պատճառը դուն ես:

ԳԵՂԱՄ

Ո՞ր գործքին. կրնամ իմանալ:

ՍԱՀԱԿ

Ան երէկ՝ հօրդ ոսկի տփին համար եղած աղմուկն
ու խռովութիւնն ի՞նչ էր:

ԳԵՂԱՄ

Ի՞նչ. տուփն ո՛ւր տեսած ըլլալս հօրս պէտք չէի
զրուցել:

ՍԱՀԱԿ՝ հեգեթեւի :

Կամ թէ հօրմէդ դաղտուկ առնելէն ետեւ՝ ուր
դրած ըլլալդ . . . :

ԳԵՂԱՄ

Հո՛, հո՛, դուն մարդարէութիւն ունիս եղեր :

ՍԱՀԱԿ

Ասոր մարդարէ ըլլալ պէտք չէ. ամենայն ինչ ի-
մացայ եւ քեզի ալ կը պատմեմ : . . . Հայրդ տուփը
կորսընցընելէն եւ անոր վրայ աղմուկ ելլելէն ետեւ,
դուն եկեր ըսեր ես որ ծառայից խցին մէջ՝ տեղ մը տե-
սած ես, եւ միանգամայն հօրդ աղաչեր ես որ քեզմէ
լսելը մէկու մը չըսէ : Իսկ հայրդ զԹաղէոս կանչեր ու
հարցուցեր է որ զգեստը մաքրելու ատեն ծոցէն
տուփն առած չըլլայ : Թաղէոս ժխտեր է. հայրդ՝
Պէտք է որ գտնուի ըսելով, դացեր փնտուեր եւ ան
տեղը գտեր է, ուր որ դուն զըուցած էիր որ տեսած
ես : Այսպէսով ողորմելի ծառան՝ որն որ ստուգիւ եւ
ոչ տեսած էր, դրեթէ գողութեան յանցաւոր սե-
պուեր է : Նոյն ատեն դուն հօրդ խուցը մտեր եւ ծա-
ռային համար միջնորդ եղեր ես, որպէս զի բարեսիրտ
երեւաս : Բայց ծառան անգամ մ'ուրիշին առջեւ կաս-
կածելի ըլլալէն ետեւ, թէ որ անիկա՝ պակասութեան
մը համար զքեզ դաստիարակին ամբաստանէ, ինչպէս
որ երէկ եղած էր, խեղճ մարդուն բանը կը բուսնի :

ԳԵՂԱՄ

Կարծես թէ ամէն բան տեսեր ու լսեր ես, անանկ
ճիշդ գիտես :

ՍԱՀԱԿ

Ստուգիւ գիտեմ. եւ աս ալ կը զըուցեմ որ տան
բոլոր շփոթութեանց պատճառը՝ քու խաբէութիւն-
ներդ են : Բայց դիտցած ըլլաս, Գեղամ, անոնց երեւան
ելլելու ժամանակը կու գայ :

ԳԵՂԱՄ

Մտիկ ըրէ, Սահակ. թէ որ ես քու զրպարտու-

Թիւններդ հօրս իմացընէի, անտարակոյս գլուխդ մեծ
չարիք կու գար. դնա աղօթք ըրէ որ ինձի համար
Թարգմանութիւն մը պիտ'որ ընես:

ՍԱՀԱԿ

Ամենեւին հոգս չէր ըլլար. քեզմէ շատ բան կրե-
ցի, անոնց վրայ աս ալ կրնայի կրել: . . . Ես քեզի հետ
միշտ մտերմութեամբ երթալով՝ կը յուսայի որ մեր
բարի հօրը քու վրայ ունեցած ակնկալութիւնը բո-
լորովին պարապի չերթայ. եւ միայն աս յուսով է որ
հիմակ ալ ուզածդ կը կատարեմ: Բայց . . . :

ԳԵՂԱՄ

Աերջապէս իմաստութեամբ խօսեցար: Մենք իրա-
րու հետ սերտ բարեկամ ըլլանք . . . դուն բարի եղիր,
ես ալ կը խոստանամ . . . :

ՍԱՀԱԿ

Թարգմանելու գիրքդ ո՛ւր է:

ԳԵՂԱՄ

Աերը խուցս է. կեցիր երթամ բերեմ. կամ կ'ու-
զես նէ մէկտեղ երթանք:

ՍԱՀԱԿ

Հիմա դուն դնա, ես ալ ետեւէդ կու գամ. եղ-
բայրդ ինձի զրուցելու խօսք մ'ունէր:

ԳԵՂԱՄ

Բայց իմ վրաս իրեն բան մ'ըսեր. հասկըցա՞ր:
(Կ'երեւայ:)

Տ Ե Ս Ի Լ Բ

ՍԱՀԱԿ, ԱՏՈՄ

ԱՏՈՄ

Աս ինչ վէճ էր դարձեալ եղբօրս հետ: Անշուշտ
իր անքաղաքավարութեամբը սիրտդ նեղացուցած պի-
տի ըլլայ:

ՍԱՀԱԿ

Չէ, սիրելի Ատոմ, բան մը չըրաւ. միայն իր սովորու-

Թեան համաձայն՝ ինձմէ բան մը պահանջեց : Ա՛ռ զէ
որ իր թարգմանութիւնն ես ընեմ, ես ալ աս առթով
ճշմարտութիւնը խիստ կերպով մը աչքին առջեւ դրի :

ԱՏՈՄ

Աղէկ ըրիր . անպիտան տղան միշտ յանդիմանելու
է, որպէս զի չըլլայ որ բոլորովին անուղղայ ըլլայ :

ՍԱՀԱԿ

Բայց, սիրելի, ըսէ ինձի, զինքն ո՞վ այսպէս ապա-
կումեց :

ԱՏՈՄ

Թէ որ հարցընէիր որ անոր անկիրթ մնալուն ո՞վ
պատճառ եղաւ, քեզի աւելի աղէկ պատասխան կըր-
նայի տալ : Ողորմած հոգի մայրս զինքը շատ կը սիրէր
եւ չափէ դուրս երես կու տար :

ՍԱՀԱԿ՝ զարմանալով :

Անհաւատալի բան կ'երեւայ, որ արտաքոյ կարդի
սէրն այնպէս կարենայ վնասել :

ԱՏՈՄ

Տան մէջ ամենեւին մէկը Գեղամին խօսք մը չէր
կրնար ըսել : Ինչ որ կը տեսնէր նէ՝ կ'ուզէր : Ծառա-
ները մօրս աչքը մանելու համար իր սիրական որդին կը
շողոքորթէին : Գասախարակները չկրնալով դիմանալ
ետեւէ ետեւ կը ձգէին կ'երթային : Եղբօրս բոլոր յան-
ցանքները հօրմէս ծածուկ կը մնային . մանաւանդ թէ
ոմանք շատ անդամ վրան մեծամեծ դովութիւններ
կ'ըսէին : Իրեն վրայ ամբաստանութիւն մ'ըլլալուն պէս՝
իրաւունքը միշտ իր կողմը կ'ըլլար, վասն զի մայրս ամէն
անդամ իրեն թեր կ'ելէր, եւ հայրս ալ անոր կողմը
կը վաստրկէր : Հայրս յաճախ ճամբորդութիւն ընելով՝
տղուն կրթութիւնը բոլորովին մօրս թող կու տար .
եւ մայրս մեռնելէն ետեւ . . . :

ՍԱՀԱԿ

Ո՛հ, ո՛հ . մօրդ մեռնելէն ետքը, եւ հայրդ՝ իմ հօրս
մահուրնէն ետեւ զիս աներնիդ առնելէն վերջը, ես

ալ կը տեսնեմ որ բանն ինչպէս կ'երթայ: . . . Հայրդ
 շատ տկար ըլլալով՝ փոքր այլայլութիւն մը զինքը կը
 հիւանդացրնէ. ասոր համար ալ մէկը չ'ուզեր իրեն նե-
 ղութիւն հասցրնել. բայց վերջապէս . . . :

ԱՏՈՄ

Վերջապէս պէտք է որ ամէն բան իրեն յայտնենք :

ՍԱՀԱԿ

Ես չեմ կրնար: Ես հօրդ բարութեամբն ապրելով՝
 կրնայ կարծուիլ որ իր սրդին աչքէն հանել կ'ուզեմ :

ԱՏՈՄ

Արդէն հիմակուրնէ հայրս կը դուշակէ որ Գեղամին
 վրայ քիչ մը խաբուած է, թէպէտ եւ զինքն եղածին
 չափ անպիտան ալ չկարծէ: Բայց թէ որ եղբայրս այս-
 պէս շարունակելու ըլլայ, պարտքս է որ ամէն բան հօրս
 տեղն ի տեղը պատմեմ: Արչափ ալ շուտ ըլլայ՝ աւելի
 աղէկ է, վասն զի դեռ կրնայ ուղղուիլ: Աւստի յարմար
 դէպքի կը սպասեմ: . . . Բայց, Սահակ, ես քեզի բան
 մը պիտ'որ ըսէի. այսօր հիւր ունիմ, դուն ալ քովեր-
 նիս գտնուէ:

ՍԱՀԱԿ

Եղբայրդ հիւրերուդ քով գտնուիլ ուզելով՝ իր
 թարգմանութիւնն ինձի յանձնեց :

ԱՏՈՄ

Ես ալ անոր համար կը բաղձամ որ դուն քովեր-
 նիս գտնուիս, ապա թէ ոչ՝ ամէն բան տակնուվրայ
 կ'ընէ:

ՍԱՀԱԿ

Աւրեմն ժամանակ չկորսընցրնեմ. կարծեմ Գեղա-
 մին թարգմանութիւնը քանի մը ըստէի գործք է:

ԱՏՈՄ

Աղէկ է. դնա շուտով լմրնցուր :

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐԸ, ՎԱՀԱՆ, ՎԱՐԴԱՆ
ԱՏՈՄ

Բարով եկաք, բարեկամք, հրամայեք:

ՎԱՀԱՆ

Բարով տեսանք: Ինձի այնպէս կու գայ որ երկայն
ատեն տեսնուած չըլլանք:

ՎԱՐԴԱՆ

Ստոյգ է որ քիչ ժամանակ ալ չէ, դրեթէ երեք
շաբաթ կայ: (Սահակ ասեալ էր որայ եւ ինչ նստիմն:)

ՎԱՀԱՆ

Պարոնիկ, մ'աշխատիք:

ՍԱՀԱԿ

Պարտքս կը կատարեմ:

ԱՏՈՄ

Ո՛հ. իր բնութիւնն է...: Երանի թէ եղբայրս ալ
անոր քաղաքավարութենէն քիչ մը փոխ առնէր:

ՍԱՀԱԿ

Լուէ, սիրելի, քու անչափ զովեաստովդ զիս կը
հպարտացնես:

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ԳԵՂԱՄ

ԳԵՂԱՄ՝ արանց հեւերուն բարեւ դու:

Ըս ինչ անմտական գործք է, Սահակ, զիս ինչո՞ւ
այնչափ ոպասել կու տաս:

ՍԱՀԱԿ՝ ցած յայնի:

Աարծեմ քիչ մ'աւելի քաղաքավարութեամբ կըր-
նայիր խօսիլ:

ԳԵՂԱՄ

Ի՛նչ, քեզմէ՞ պիտի ամբշնայի: (Սահակը մեկընի քա-
շկով՝ հետը ցած յայնով ինչ խօսի: Մեկանունս իրարու-

հետք կը խօսան: Գեղամ զերէ մը եւ Ռոզն հանելով՝ Սահակին կոչուց: Նաակըցար, այնպէս չէ:

ՍԱՀԱԿ

Ի՛նչ, բոլոր բոլոր տասը տող է եղեր. վրան խօսք ընելու չ'արժեր: Չե՞ս ամբնար, Գեղամ:

ԳԵՂԱՄ

Ցած խօսէ, լուէ:

ՍԱՀԱԿ

Խօսք տալուս վրայ կը զղջամ:

ԳԵՂԱՄ՝ շինու է եւ Կոստան:

Ա՛ղաչեմ, սիրելի Սահակ, թարգմանէ, թարգմանէ. ստուգիւ ես ալ քեզի հասուցում մը կ'ընեմ:...

ՍԱՀԱԿ

Տուր նայիմ: (Հիւրերուն:) Թողու թիւն կ'ընէք, հիմա կու գամ:

ՎԱՀԱՆ

Մեզի մեծ հաճութիւն կ'ընէք:

ԱՏՈՄ

Ա՛ղաչեմ, Սահակ, որովհետեւ դուրս կ'երթաս, թողէսինքն ըսէ որ խահուէն բերէ:

ՍԱՀԱԿ

Անմիջապէս: (Ա՛ղաչուց:)

Տ Ե Ս Ի Լ Ե

ԳԵՂԱՄ, ԱՏՈՄ, ՎԱՀԱՆ, ՎԱՐԴԱՆ

ԳԵՂԱՄ՝ Կոստան ի՞նչ է Կոստան եւ Կոստ:

Ա՛՛՛՛՛:

ԱՏՈՄ

Կարծեմ թէ քաղաքավարութիւնը կը պահանջէ որ հրամանաւ մը նստուի:

ԳԵՂԱՄ

Քեզմէ հրաման առնել հարկ չկայ:

ԱՏՈՄ

Հոս մինակ ես չեմ:

ՎԱՀԱՆ

Կ'երեւայ որ զմեզ ալ այնչափ բանի տեղ չիղներ:

ՎԱՐԴԱՆ՝ հեգնելով ի:

Անտարակոյս, որովհետեւ գիտէ որ իր ներկայու-
թեամբը մեզի մեծ պատիւ կ'ընէ:

ԳԵՂԱՄ

Չէ, չէ. գիտեմ որ ինձի կարօտութիւն չունիք,
բայց ես ուզեցի պատիւս չկորսնցրնել:

ԱՏՈՄ

Փնփք Աստուծոյ, Գեղամ, որ անգամ մը բերնէդ
քաղաքավարական խօսք մ'ելաւ: Բայց պէտք էիր վրան
աւելցրնել որ սուրճ խմելու առիթն ալ կորսնցրնել
չուզեցիր:

ԳԵՂԱՄ

Հապա՛: Ուստի մի կարծեր որ քեզի համար հոս
եկած ըլլամ:

ԱՏՈՄ

Վրաս ան աստիճանի մեծ համարում չունիմ. թէ
որ պարծելու բան մ'ունիմ նէ՛քու եղբայրդ ըլլալս է:

ՎԱՐԴԱՆ՝ հեգնելով:

Շիտակը մե՛ծ պարծանք: (Թաղէոս խանութն իւր
բերէ, «եղանին վրայ իւր դնէ»):

ԳԵՂԱՄ

Ա՛տամ, ինձի թող, խահուէն ես լեցրնեմ:

ԱՏՈՄ

Չէ, չ'ըլլար, ես կը լեցրնեմ: Գուն քիչ մ'անյա-
ջողակ ես: Ծառայել կ'ուզես նէ՛քաւաթները ձեռ-
քէս առ տուր:

ՎԱՀԱՆ

Ինձի քիչ շաքար դրէք:

ԱՏՈՄ՝ շաքարին ամանը վահանին աւել- իւր դնէ:

Հրամայեցէք որչափ որ կ'ուզէք նէ: (Ա.Բ.ն.ան իւր

հրամայեմք. եւ ետքը տմանը Գեղասին հաւ օրայ, որն որ էր
 ահաի գաւառինն Տեղ ետեւեւ ետեւ շատարի հորորնէր նեւել:)
 Ի՛նչ է ան, ալ բաւական է:

ԳԵՂԱՄ

Քիչ առի. ես անոյշ կը սիրեմ: (Գարձեալ հ'աւանէ:)

ԱՏՈՄ՝ շատարի տմանը յերփէն հ'աւանէ:

Չնա խպնիր, Գեղամ: . . . Տեսար, Պարոն վահան,
 դուն իմաստուն երիտասարդ մըն ես. անտարակոյս յա-
 ռաջուրնէ իմացած պիտ'որ ըլլաս որ քեզմէ վերջը մէկը
 բոլոր շաքարը պիտի լմընցընէ:

ՎԱՐԴԱՆ

Բայց իր բոլոր կանխատեսութեամբը շաքարն ամե-
 նուս բաւական պիտի չըլլայ:

ԳԵՂԱՄ

Եղբորս բոլոր վախն ան է որ չստիպուի երթալ
 քիչ մ'ալ բերել:

ԱՏՈՄ

Իմ պզտիկ եղբայրս ալ՝ կարծեմ իրեն մեղք կը սե-
 պէ իր մեծ եղբոր աշխատանքը նուազընելը:

ԳԵՂԱՄ

Շիտակը շատ մեծ գործք ունիս:

ԱՏՈՄ՝ դարձեալ խահուէ կը լեցընէ. Գեղասին:

Ա՛ռ հրամցուր: (Գեղամ օտաւաւ ասելն՝ վարդաւանին
 վրայ կը լեցնէ: Աճեմքն ալ օրտ հ'ելլեն): Ո՛հ, աւասիկ
 նորէն գեղեցիկ գործք մը: (Յաճ յայնիւ Գեղասին:)
 Այարծեմ մասնաւոր ըրիր:

ՎԱՐԴԱՆ

Բան չկայ, բան մը չէ, դիւրաւ կը մաքրուի:

ՎԱՀԱՆ՝ Գեղասին:

Պարոնիկ, գաւաթ մը ջուր բերէիք:

ԱՏՈՄ

Ա՛ղաչեմ, Գեղամը թող տուէք: Գուցէ կ'ելլէ
 ջրի տեղ՝ քացախ կամ եղ կը բերէ:

ԳԵՂԱՄ՝ սպասանալով :

Ի՛նչ ըսիր . հիմա . . . :

ԱՏՈՄ

Լսած եմ որ մաքուր լաթով մը սրբելն ամենէն ազնիկ միջոցն է : Աւասիկ թաշկինակս : (Իրենէ՛ս մտքեւան զբաղած աստէն՝ Գեղամ Բուրբ Խանուհին կը խօսէ :)

ՎԱՀԱՆ

Ազնիկ նիւթ է եղեր . արատն ելաւ :

ՎԱՐԴԱՆ

Գրեթէ եւ ոչ կ'երեւայ : Պարո՛ն Գեղամ , կ'աղաչեմ այսուհետեւ մ'աշխատիք . ես անձամբ ինք զինքս կը հոգամ :

ԳԵՂԱՄ

Թողութիւն տուէք , Պարոն . մէյ մ'ալ այնպէս բան չիպատահիր : Ո՛հ , որչափ դժբախտ եմ եղեր :

ԱՏՈՄ

Կամ թէ որչափ . . . քիչ մնաց բերնէս բան մը կ'ելլեր : (Խանուհի կ'ողջ լեցընել , Բայց ամանը պարպտած կը փոխէ : Ծանաւ ալ ո՛վ մը Գեղամին կը նայէ :) Աս ալ նոր . աշխարհքիս մէջ այնպէս անքաղաքավարական դործք չիկրնար ըլլալ : (Մէկալնեբոնն :) Բարեկամք , կրնայիք մտածել որ մեր զբաղած աստէն՝ Գեղամ բոլոր սուրճը սպառէ : . . . Քիչ մը սպասէիք , հիմա նորէն եփել կու տամ : Գնա , Գեղամ . . . չէ , կեցիր . . . իր ձեռք եւ ոչ զթագէտս կանչել տալ կ'ուզեմ :

ԳԵՂԱՄ

Լաւ է : Նայինք հրամայէիր նէ՛ հրամանդ կատարող կա՛ր մի :

ՎԱՀԱՆ

Թող , Պարո՛ն Ասում : Այսուհետեւ կաթիլ մ'ալ չեմ ուզեր :

ՎԱՐԴԱՆ

Ես ալ շնորհակալ եմ : (Թողնուիս կու Բայ Խանուհի ամանները օրանելու համար :)

ԱՏՈՄ

Աւասիկ Թաղէոս հոս է : Կ'ուզէք նէ՛ եփել տամ :

ՎԱՀԱՆ

Չէ, բացարձակապէս չեմ ուզեր . շնորհակալ եմ :

ՎԱՐԴԱՆ

Արդէն ըսինք որ ալ չենք խմեր :

ԱՏՈՄ

Շատ կը ցաւիմ . բայց տներնիդ ծարաւի երթաք
նէ՛ յանցանքն իմս չէ :

ԳԵՂԱՄ

Իմս ալ չէ, վասն զի աւելի կրնար եփուիլ :

ՎԱՐԴԱՆ

Պարոն Ատոմ, ի՞նչ կ'ըսես . եթէ մտածած ըլլայիր
որ եղբայրդ ալ հրաւիրուած է, ան ատեն . . . :

ԱՏՈՄ

Անկոչ բազմականն իր կարգին սպասելու էր :

ԳԵՂԱՄ

Արնայ ըլլալ . բայց ան ատեն ալ ոչինչ կ'առնէի :

ԱՏՈՄ

Հիմակ ի՞նչ ընենք . կ'ուզէք քիչ մը խաղալ :

ՎԱՀԱՆ

Շատ սիրով . բայց ի՞նչ խաղանք . խաղի թուղթ
ունիս . տապալի կը խաղանս :

ՎԱՐԴԱՆ

Ա՛ . աս խաղերը շատ ձանձրացուցիչ ու դանդաղ
բաներ են . շարժման խաղ մը խաղանք :

ԳԵՂԱՄ

Պր . Վարդանն իրաւունք ունի : Աչկապուկ կամ ա-
սոր նման բան մը խաղալու է . . . :

ՎԱՀԱՆ

Աս տեսակ խաղերու մէջ գլուխնիս կրնայ պատուիլ :

ԱՏՈՄ

Քանի որ եղբայրս հետերնիս է, ասոր վրայ ապա-
հով եղէք . . . : (Հեռու-եմ Սահակ կը փեանուի :)

ԱՏՈՄ

Աղնիւ, աղնիւ, աւասիկ Սահակ եկաւ. թող խաղերնիս անիկայ որոշէ :

ԳԵՂԱՄ՝ Զաւր ընելով :

Մեծ բան. Սահակ կու գայ կոր եղեր :

Տ Ե Ս Ի Լ, Օ.

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ՍԱՀԱԿ

ՎԱՀԱՆ

Աղէկ ըրիք, Պարոն Սահակ, որ եկաք. մեզի խաղ մ'առաջարկեցէք :

ԳԵՂԱՄ

Այնպէս է. խաղ որոշելու համար՝ խոհեմ մարդ մը պէտք է : (ԶՍահակի հիշիկի հ'առնէ. հիշաւիտի ալ երարուհեար հը խօսին :) Ուրեմն լմընցուցիր :

ՍԱՀԱԿ

Երկու տող բան է. մէկ գրչով կրնար լմըննալ :

ԳԵՂԱՄ

Գրուածքն ո՛ւր է :

ՍԱՀԱԿ

Վերը գրքիդ մէջն է :

ԳԵՂԱՄ

Ա՛յ թշուառական, անխոհեմ. եթէ դաստիարակնիս գալու եւ գրէն իմանալու ըլլայ . . . :

ՍԱՀԱԿ

Կ'իմանայ որ ծոյլ մէկն ես եղեր :

ԳԵՂԱՄ

Ստուգիւ, Սահակ, ինձի որոգայթ լարեցիր : Շուտ վեր գնա . . . :

ՍԱՀԱԿ

Ա՛լ ան չեմ ըներ : Կ'ուզես նէ՛ դուն գնա. քու բանդ է :

ԳԵՂԱՄ

Թող մնայ : Գառախարակը կարծեմ դեռ չիդար :

ՍԱՀԱԿ՝ Գեղաձոր :

Վարը դրան քով քնարահար տղայ մը կեցած է :
Թէ որ կ'ուզէք նէ՛ վեր կանչեմ, քիչ մը կը զուար-
ճանանք :

ԱՏՈՄ

Քնարահար տղայ մը : Ի՞նչ տղայ է :

ՎԱՀԱՆ

Ամենայն սիրով, թող գայ, թող գայ :

ՎԱՐԴԱՆ

Երած շտու թիւնը շատ կ'ախորժեմ :

ՍԱՀԱԿ

Քնարով աղքատ գեղջուկ տղայ մըն է : Քիչ մը
ստակ տարու ըլլանք նէ՛ տղորմութեան գործք կ'ըլլայ :

ԳԵՂԱՄ

Սո՛հակ, դրամն ո՞վ պիտի տայ : Պարոնը միշտ այն-
պէս կը ձեւացընէ՛ որ կարծես թէ հազարներով ստակ
ունենայ, ուր որ դանդ մը չունի :

ԱՏՈՄ

Ամօթ է, Գեղամ :

ՍԱՀԱԿ

Թող տուր, թող աղքատ ըլլալն ամօթ չէ : Աս
վայրկենիս մէջ գեղջուկ տղուն հետ հաւասար մի՛ճակի
մէջ ըլլալն ինձի նախատինք չեմ սեպեր : . . . Ես ու-
նեցածս իրեն կու տամ. եւ արդէն խոստացաւ որ քիչ
բանով ամբողջ ժամ մը քնար կը զարնէ :

ՎԱՀԱՆ

Ամէնքս ալ կու տանք :

ՎԱՐԴԱՆ

Այնպէս է :

ԱՏՈՄ՝ Գեղաձոր :

Գուն ի՞նչ կ'ըսես, Գեղամ. բան մը պիտի չտան :

ԳԵՂԱՄ

Քեզի հարցընելու հարկաւորութիւն չունիմ. կ'ուզեմ՝ կու տամ, կ'ուզեմ՝ չեմ տար :

ՍԱՀԱԿ

Ուրեմն ներս կանչեմ :

ԱՏՈՄ

Հապա՛ . ինչո՞ւ կը դանդաղես :

ՍԱՀԱԿ

Հիմա : (Գորսա կ'ելլէ : Թաղեոս այնպէս ճշ կարկանդակ կը բերէ :)

Տ Ե Ս Ի Լ Է .

ԱՏՈՄ, ԳԵՂԱՄ, ՎԱՐԴԱՆ, ՎԱՀԱՆ, ԹԱԴԵՈՍ

ԳԵՂԱՄ՝ Թաղեոսին յերտէն այնպէս արեւել կ'աւել . Այստե՛ս կը կանխէ :

Ի՛նչ քան է աս : Ես պիտի կարէի :

ԱՏՈՄ

Կարելն ես կը հոգամ : Արնայ ըլլալ որ դուն անանկ ընես, որ խահուէին պէս՝ մեզի մաս չմնայ : (Կը բաժնէ եւ իւրատանը իւրոց կը հրաժեցընէ :)

ՎԱՐԴԱՆ

Ո՛վ կրնայ աղէկ ախորժակին դէմ դնել : (Կորս ճշ կ'արեւել :)

ՎԱՀԱՆ՝ մաս ճշ թէրէ դնելու :

Շնորհակալ եմ :

ԱՏՈՄ՝ ԳԵՂԱՄԻՆ

Գուն ալ քու մատդ առ :

ԳԵՂԱՄ

Պնակին մէջ եղածն որուն համար է :

ԱՏՈՄ

Սահակ պիտի չուտէ :

ՎԱՐԴԱՆ

Աւելի կ'ուզեմ որ իմ մասս տամ, քան թէ Պր . Սահակ չառնէ :

ՎԱՀԱՆ

Ես ալ նոյնպէս :

ԳԵՂԱՄ

Ո՛հ, սրչափ երջանիկ ես, Սահակ :

Տ Ե Ս Ի Լ Ը .

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐԸ, ՍԱՀԱԿ, ՍԱՐԳԻՍ՝ ԳԵՂԱՄ Ե :

ՍԱՀԱԿ

Աւասիկ քնարահարը բերի :

ԱՏՈՄ

Անունդ ի՛նչ է, սիրուն գեղջուկ :

ՍԱՐԳԻՍ

Սարգիս, հրամանոցը ծառայելու համար :

ՎԱՀԱՆ

Ծնողք ունի՞ս :

ՍԱՐԳԻՍ

Մայրս մեռած է, հայրս դեռ կ'ապրի :

ՎԱՐԴԱՆ

Ինչո՞ւ համար այնպէս պզտիկ հասակիդ մէջ առանձին կը պտրտիս :

ՍԱՐԳԻՍ

Հայրս բոլորովին կոյր ըլլալով՝ ստակ վատրկելու կարողութիւն չունի. ուստի պէտք է որ ես իմ քնարովս քիչ մը հաց ձեռք բերեմ :

ԱՏՈՄ

Վ'ուզե՞ս երաժշտութիւնդ մեզի լսեցնել :

ՍԱՐԳԻՍ

Ինչո՞ւ չէ. այսպիսի Պարոնիկներու համար շատ սիրով յանձն կ'առնեմ. բայց լսելէքնիդ մեծ բան մը չէ :

ՍԱՀԱԿ

Որչափ աղէկ կրնաս նէ՛ զարկ ու երգէ. ինձի համար միշտ գեղեցիկ երգած կ'ըլլաս. իսկ աս Պարոններն ալ ներողամիտ կ'ըլլան : (Սարգիս կը սկսի Գեղարք զարնել ու երգել : Նոյն պահն Վարդանն պնակով կարկանդակը Սահակին

չը բերէ . Սահակ շնորհակալ ըլլալով՝ անոր յետեւն հ'առնէ
 եւ ճարիկ հ'ընէ : . . . Երբք ընթանալէն ետեւ :) կեցիր , կեցիր ,
 բաւական է . անշուշտ անօթի պիտ'որ ըլլաս . առ սա
 կարկանդակի կտորը :

ՍԱՐԳԻՍ

Ձէ , չէ , բարեսիրտ Պարոնիկս . դուք կերէք . ինձի
 քիչ մը հացի կտոր ալ բաւական է :

ՍԱՀԱԿ

Պէտք է որ առնես :

ՍԱՐԳԻՍ

Ուրեմն շատ շնորհակալ եմ : Բայց հիմա չեմ ու
 տեր . սիրելի դժբախտ հօրս կ'ուզեմ տանիլ :

ԱՏՈՄ

Ի՛նչ . դժբախտ հօրդ . ուրեմն իմ մասս ալ առ :

ՎԱՀԱՆ

Իմինս ալ :

ՎԱՐԴԱՆ

Աս ալ առ :

ՍԱՐԳԻՍ

Ա՛ , չէ , չ'ըլլար . . . : Հրամանքնիդ կերէք , Պարոնե
 ներ . ես բաւական ունիմ . . . աւելի չեմ կրնար ուտել .
 հայրս ալ ասով գոհ կ'ըլլայ :

ԳԵՂԱՄ՝ Ժողովուրդ :

Իրաւունք ունի . աղրաներուն ցաւ կը պատճառէ .
 եւ իր գեղեցիկ ձայնը կրնայ աւրուիլ :

ՎԱՐԴԱՆ

Պէտք է որ առնես :

ԱՏՈՄ՝ Գեղասին :

Քեզմէ ուզող չեղաւ , մի վախնար :

ԳԵՂԱՄ

Արդէն կերած ընթացուցած եմ :

ՍԱՀԱԿ՝ Սարգիս :

Ուրեմն , հիմա կտոր մ'ալ չե՞ս ուտեր :

ՍԱՐԳԻՍ

Չէ, չէ. թէ որ շնորհք ըրիք տուիք նէ՛ թող տուէք
 թաշկինակի մը մէջ պլլեմ ու հօրս տանիմ: (Թաշկինակ
 էր էր փնտրուէ:) Ափսոս, ամենեւին լաթի կտոր մը չու-
 նիմ: Սիրուն Պարոններ, թղթի կտոր մը շնորհք ընէիք:

ԱՏՈՄ

Հիմա, քեզի մաքուր լաթ մը կը բերեմ: Առ այժմ
 կարկանդակը տուր, պատուհանին քով դնենք:

ՍԱՐԳԻՍ

Շատ աղէկ. ես հոս քնար զարնելու համար եկած
 եմ, եւ ոչ թէ ուտելու համար:

ՍԱՀԱԿ

Հիմակ ինչով պիտի զուարճացրնես զմեզ:

ՍԱՐԳԻՍ

Ինչով որ կ'ուզէք նէ. երգ մ'ալ կ'ուզէք, կրնամ
 երգել: Թէպէտ եւ մեր գեղի երգերն այնպէս աղուոր
 չեն, բայց յուսամ որ կը հաճիք: (Երգելով իր ողորձել
 աղփասք լիճակը կը սորոսագրէ: Բայց ի Գեղասէն՝ ամենուն
 սիրար կը շարժի. համայն համայն սրտուն կը ճօպենան եւ աղ-
 թերնին կը սրբեն: Նոյն ժղոցին Գեղամ պատուհանին կը ճօ-
 պենայ ու թուր կարկանդակն ուտելին ետեւ՝ դուրս կ'ելլէ:)

ՍԱՀԱԿ՝ Երգը լճնակն ետեւ՝ Սարգսին յետը բռնելով:

Ա՛յ, դժբախտ աղայ. ուրեմն այնչափ ողորմելի ես
 եղեր:

ԱՏՈՄ

Ատելի դրամ, ամենայն դժբախտութեանց պատ-
 ճառ դուն ես:

ՍԱՐԳԻՍ

Չէ, չէ, ամենայն ինչ դրամով կ'ըլլայ: Բայց ան ալ
 ստոյգ է որ ամենէն քիչ ստակ ունեցողն ալ՝ անթու-
 թենէ չիմեռնիր: Մարդ հիւանդ եղած ատեն՝ Աս-
 տուած զինքը կը հողայ, կը մեռնի նէ ալ՝ ուրիշ բանի
 հարկաւորութիւն չ'ունենար, բայց եթէ քիչ մը հողի՝
 որն որ ամէն տեղ կրնայ գտնել:

ՍԱՀԱԿ

Ստուգիւ կ'ըսեմ, ամէնքնիս ալ քու դպրոցդ պէտք էինք դալ եւ իմաստութիւն սորվիլ:

ՎԱՀԱՆ

Այնպէս է. մենք մեր խոհեմութեամբ դժուարին էր որ այս կերպով մտածէինք կամ գործէինք:

ՍԱՐԳԻՍ

Քնարս մտիկ ընելու դեռ ակտորժակ ունիք, Պարոններ:

ՍԱՀԱԿ՝ հիւրերուն:

Կարծեմ թէ ալ հարկաւոր չէ: Ողորմելի տղան ուրիշ տեղ ալ քիչ մը բան կրնայ վաստակիլ. արդէն ձեզի ըսած եմ որ այնչափ կու տամ՝ որչափ ունիմ նէ: Գեղամն ալ իր մասէն գեղջուկը զրկեց: (Քսակը էլ փորուէ:)

ՎԱՀԱՆ

Մենք ալ կու տանք:

ՎԱՐԴԱՆ

Ա՛նտարակոյս: (Քսակնին դուրս էլ հանեն:) Պարոն Սահակ, առ իմ կողմանէս:

ՎԱՀԱՆ

Աւասիկ ինձմէ ալ:

ԱՏՈՄ՝ համայ:

Սահակ, ես քեզի համար ալ կու տամ. դուն քու ստակդ քովդ պահէ:

ՍԱՀԱԿ

Ոչ երբեք. չեմ ուզեր բարիք ընելու վարձքէն զըրկուիլ: (Բոլոր սրտակը կու սրայ:)

ՍԱՐԳԻՍ՝ զարմանալով:

Չէ, չ'ըլար. չափէն աւելի է, արտաքոյ կարգի շատ է. հրամանքդ ինձի միայն երեք դահեկան խոստացաք:

ՍԱՀԱԿ

Առ, առ. քեզի բարիք ընելնիս՝ մեզի մեծ ուրախութիւն է:

ՍԱՐԳԻՍ

Աստուած զձեզ օրհնէ, ձեզի բիւրապատիկ տայ . . . :
Բայց շնորհք ընէիք, Պարոններ, թղթի կամ լաթի
կտոր մը տայիք, որպէս զի կարկանդակը մէջը պլլեմ:

ԱՏՈՄ

Հիմա, բոլորովին մոռցած էի: (Խոց մը կը հարնէ,
Բաշկինակ մը կը բերէ:) Առ. քիչ մը մաշած ըլլալով՝ ալ
ես չեմ կրնար գործածել:

ՍԱՐԳԻՍ

Չ'ըլլար. գեղեցիկ բան է, չեմ կրնար առնել:

ԱՏՈՄ

Պէտք է որ առնես. արդէն Թաղէոսին պիտի տայի:

ՍԱՐԳԻՍ

Շնորհակալ եմ. Աստուած հաղարապատիկը տայ:
(Պատուհանն է' երբեք կարկանդակն առնելու համար:)

ԱՏՈՄ

Աեցիր, ինձի տուր, պլլեմ: (Կարկանդակը չէն հարնէր:)

ՍԱՐԳԻՍ

Հոս չէ:

ԱՏՈՄ

Այն անշնորհք ու այլանդակ տղայ: Ողորմելի գեղջ-
կին կարկանդակը կերեր կամ առեր տարեր է:

ՍԱՐԳԻՍ

Մի զայրանաք, սիրուն Պարոն, բան չկայ: Իմ ու-
նեցած ուրախութիւնս հօրս համար էր:

ՍԱՀԱԿ՝ զայրանալով:

Գեղամ՝ եղբայրդ չըլլար նէ, ստոյգ կ'ըսեմ՝ գող-
ցած կարկանդակն իրեն ծանր պիտի նստէր: Բայց . . .
գեղջկինն ողորմելի հայրը պէտք չէ որ զրկուի . . . : Ա'-
տոմ, քանի մը դահեկան փոխ տուր ինձի:

ԱՏՈՄ

Չէ. աս պատիւն ինձի կ'ուզեմ սեպհականել:
(Սարգսին:) Առ աս երկու դահեկանն ալ. զնա քու
հօրդ քիչ մը կարկանդակ դնէ:

ՎԱՀԱՆ ԳԽԻԸ ԵՆ ԳԽԻԷ :

Քիչ մը բան ալ ինծմէ առ :

ՎԱՐԳԻԱՆ

Աս ալ առ :

ՍԱՐԳԻՍ

Ո՛վ Աստուած, չեմ կրնար, արտաքոյ կարգի շատ է :

ՍԱՀԱԿ՝ ցառով Սարգսին յետեւ եւ Բուհի :

Ա՛հ Սարգիս, շատ կը ցաւիմ որ ես աւելի բան մը չեմ կրնար տալ : Բայց ես ալ որք աղայ մըն եմ, եւ օտարին բարութեամբը կ'ապրիմ : Արդէն ունեցածս տուի :

ՍԱՐԳԻՍ

Ո՛հ, սիրելի Պարոնիկ . Աստուած բիւրապատիկ փոխարէն տայ ձեզի : Ձիս հոս բերողը դուք չէք մի : . . .
Ձեր դրամը կ'ուզէի . . . :

ՍԱՀԱԿ

Ձիս մի վշտացըններ, Սարգիս . . . :

ՍԱՐԳԻՍ՝ Երեւոյն արեւն Արսին :

Թաշկինակնիդ առէք, Պարոն :

ԱՏՈՄ

Թէ որ կրնաս գործածել նէ՛ քովդ պահէ :

ՍԱՐԳԻՍ

Աստուած պահպանէ զձեզ, բիւր տարիներու հասցընէ : (Կ'երեւայ) :

Տ Ե Ս Ի Լ Թ .

ԱՏՈՄ, ՎԱՀԱՆ, ՎԱՐԳԻԱՆ, ՍԱՀԱԿ

ԱՏՈՄ

Ըսէք ինծի, բարեկամք, կրնա՞ք արդեօք Գեղամէն անպիտան ու հրէշ աղայ մը երեւակայել :

ՎԱՀԱՆ

Հօրդ ինչո՞ւ չես զրուցեր :

ՎԱՐԳԻԱՆ

Ես այսպիսի խաբէութիւններ չէի կրնար տանիլ :

ԱՏՈՄ

Մօրս մահուընէն վեր՝ հայրս հիւանդոտ ըլլալով, բժիշկները կ'ըսեն որ ամենափոքր այլայլութիւն մ'ալ իրեն մնասակար կրնայ ըլլալ: Մենք ալ զինքը շատ սիրելով՝ կարելի եղածին չափ իրեն կը խնայենք եւ արտմեցընել չենք ուզեր:

ՍԱՀԱԿ

Բայց պէտք չէ որ Գեղամին ընթացքն իրեն անձանօթ մնայ: Աղքատ գեղջուկ տղու մը ձեռքէն հացի կտոր մը առնել կրցողը՝ ետքը մեծամեծ ապիրատութիւններ կրնայ ընել. եւ ասով ի վախճանի հօրն ալ շատ վշտաց պատճառ ըլլալով՝ գերեզման իջեցընել:

ԱՏՈՄ

Իրաւունք ունիս, Սահակ: Հայրս տուն գալուն պէս՝ բանն իրեն կ'իմացընեմ:

ՍԱՀԱԿ

Աղէկ ըսիր, դուն պատմելու ես. վասն զի իմ ամբաստանութիւնս կրնայ կասկածաւոր ըլլալ, թէ որ ես բարերարիս որդւոյն վրայ յանցանք մը ձգելու ըլլամ:

ՎԱՀԱՆ

Շատ կը ցաւիմ որ Գեղամ ողորմելի գեղջկին ուրախութիւնն աւրեց:

ՎԱՐԴԱՆ

Կարկանդակ գնելու բաւականէն աւելի ստակ առաւ:

ՍԱՀԱԿ

Ստոյգ է, ձեր բարութեամբն ամէն բան կարգի մտաւ. բայց ասով Գեղամին վարմունքը չ'արդարանար. եւ կրնար ըլլալ որ աղքատ տղան թէ մէկը թէ մէկալը ձեռք ձգէր:

ԱՏՈՄ՝ Վահանին ու Վարդանին:

Ասոր մէջ ամենէն մնասակարը դուք ելաք: Կարկանդակը՝ կարծես թէ բերնեւնէդ անոր համար կտրեցիք, որպէս զի անկիրթ անպիտան տղան սպառէ: (Գոհարը կը լարեմտի:)

Տ Ե Ս Ի Լ Ժ .

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ՍԱՐԳԻՍ

ՍԱՀԱԿ՝ ԻՆ՝ ԻՐԻՆ՝ :

Մեր գեղջուկը նորէն եկաւ : (Չայնիւն :) Ի՞նչ կ'ուզեա :

ՍԱՐԳԻՍ՝ ԼՈՒԼ :

Ո՛հ . Աստուած սիրէք , օգնեցէք ինձի . կորսուեցայ , վայ ինձի : (Ա.Քնոփն ալ Սարգսին Կով կը ժողովուին :)

ԱՏՈՄ

Ի՞նչ ունիս . ի՞նչ եղաւ :

ՍԱՐԳԻՍ՝ ՊԼԲԼՈՒԼ :

Ո՛հ , բոլոր հարստութիւնս . . . զիս եւ եղուկ հայրս
անուցանելու գործիքս . . . քնարս տեսէք . . . կտոր կտոր
եղած է . . . եւ . . . (Հեծելով) եւ ձեր թաշկինակը , . . .
ձեր տուած դրամները . . . ամէն բան զնայ կորսուեցաւ : . . . Ա՛յ անամօթ , անդութ տղայ :

ՍԱՀԱԿ

Քնարդ ո՞վ կտորտեց . ստակդ առնողն ո՞վ է :

ՍԱՐԳԻՍ

Կարկանդակս կերողը :

ԱՏՈՄ

Կարելի բան է . եղբայրս . . . :

ՍԱՀԱԿ

Գեղամ :

ՎԱՀԱՆ

Անհաւատալի բան :

ՎԱՐԴԱՆ

Անդու՛թ տղայ :

ՍԱՐԳԻՍ

Ստուգիւ անդու՛թ . . . : Աս անէն քիչ մը հեռա-
նալուս պէս՝ ան տղան վրաս յարձակեցաւ եւ հար-
ցուց որ քնար զարնելու համար բան մը տուին , թէ
չէ , որպէս զի չեն տուած նէ՛ ինք տայ : Ես իր երեսը
նայեցայ . Ո՛հ , ըսի , Աստուած՝ ան բարի Պարոննե-
րուն հազարապատիկ հատուցանէ , ինձի առաա եւ

չափէն աւելի ստակ տուին: Որչափ տուին, ըսաւ:
 Ես . . . ես անմիտս. միայն կարկանդակը միտքս բերե-
 լու էի . . . : Եւ որովհետեւ ես ալ չէի գիտեր թէ որ-
 չափ բան է, վասն զի ուրախութենէս չէի համրած,
 գիտնալ ուզեցի . . . : Քնարս գետինը դրի եւ թաշկի-
 նակը հանելով՝ Ասիկա սիրուն Պարոններէն մէկը տը-
 աւ, ըսի. եւ կ'ուզէի քակել՝ որ մէջի ստակը համրեմ:
 Մէյ մ'ալ թաշկինակը մէկէն ձեռքէս քաշեց առաւ,
 ու քնարիս վրայ կոխկռտելով՝ կտոր կտոր ըրաւ: Եւ
 թաշկինակը ստրկով մէկտեղ առաւ փախաւ, աներե-
 ւոյթ եղաւ . . . : Ա՛հ, դժբախտ հայրս, վայ ինձի ողոր-
 մելուցս, վայ, վայ . . . : (Հեծկլաւով կոչայ:)

ԱՏՈՄ

Իրօք չեմ գիտեր ինչ ընեմ . . . վրաս դանկ մը չու-
 նիմ: Գզըոցիկս քնիս ըլլար . . . ինչ չարասիրտ տղայ:

ՎԱՀԱՆ

Վրաս քանի մը դահեկան ալ ունիմ. առ:

ՍԱՐԳԻՍ

Ա՛խ, Պարոն, շատ կը ցաւիմ. բայց ասով քնար
 չեմ կրնար դնել . . . : Ա՛հ դժբախտ հայր:

ՎԱՐԴԱՆ

Աւասիկ ես ալ քովս ունեցածս կու տամ:

ԱՏՈՄ՝ +իչ չե հարձեւէն ետեւ:

Առ սա ժամացուցիս շղթան, դժբախտ տղայ. դնա
 քնար մը դնէ:

ՍԱՀԱԿ

Սիրելի Ատոմ, կեցիր: Բարեկամ, մէկէն քեզի ա-
 ռատ օգնութիւն կրնամ ընել: (Ժամացոյցը կը հանէ:)
 Ես ուրիշ մ'ալ ունիմ. ասիկայ իմ ողորմած հոգի
 կնքահայրս տուած էր: Ծախելով՝ կրնաս քնար մը
 դնել եւ քիչ մը ստակ ալ աւելցրնել: (Մեարոյ՝
 շղթան, Սահակ ալ ժամացոյցն իրեն կ'երկընցընեն. Բայց
 անիկա կ'ուզէր ասնել:)

ՍԱՐԳԻՍ

Չ'ըլլար, չեմ կրնար առնել. հայրս կրնայ կարծել որ գողցեր եմ. Աստուած պահէ զիս գողութենէ:

ԱՏՈՄ

Շղթաս պէտք է որ առնես:

ՍԱՀԱԿ

Չէ, իմ ժամացոյցս պիտի առնես. ապա թէ ոչ՝ զիս կը բարկացրնես:

ՍԱՐԳԻՍ՝ Ժամացոյցն արեւելալ:

Ի՛նչ ընեմ, պէտք է որ առնեմ. ձեզի նրչափ վնաս ընել տուի:

ՍԱՀԱԿ

Գուն մի հողար: Աստուած աս փոքր բանին տեղ՝ շատ աւելի կու տայ: Գուն ու հայրդ հացի կարօտ էք: Ինծի առատ տուած է, եւ հայր սնուցանել ալ չունիմ:

ԱՏՈՄ

Աս ալ առ, որպէս զի ելլես հօրդ երթաս:

ՍԱՐԳԻՍ

Չէ, ալ անիկա չեմ առներ:

ԱՏՈՄ

Բացարձակապէս պէտք է որ առնես:

ՍԱՐԳԻՍ

Ահ, բարեսիրտ Պարոններ. հիմա շատ աւելի անհանգիստ եմ, քան թէ եկած ատենս . . . քնարս նորէն ստանայի. մէյ մ'ալ հոս . . . չեմ ուզեր . . . :

ՍԱՀԱԿ

Ա՛լ գնա. հայրերնիս չեկած՝ ելիր հոսկից:

ՍԱՐԳԻՍ

Ի՛նչ, հայրերնիդ . . . իրե՞ն կը սպասէք:

ԱՏՈՄ

Գնա գնա. գուցէ թաշկինակն առնող յափշտակիչ թռչունը՝ մէյ մ'ալ կը համնի վրայ:

ՍԱՐԳԻՍ՝ ԼՈՒԼ:

Ուրեմն տուածնիդ պէտք է որ առնեմ: (Ա՛նքիայ:)

Տ Ե Ս Ի Լ Ժ Ա .

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐԸ ԲԿՅ Ի ՍԱՐԳՍԻՆՆ ։

ՎԱՀԱՆ

Եւամացուցնիդ կորորնցընեընուդ շատ կը ցաւիմ ։

ՎԱՐԴԱՆ

Պարոն Սահակ, մեզի աղէկ օրինակ մը տուիք ։

ՍԱՀԱԿ

Ինծի ալ օրինակ տուողը Ատոմն է . եւ հաւատաւ
ցէք որ եթէ Գեղամին դէշ վարմունքն ինծի ցաւոյ
պատճառ չըլլար, ասանկ բարեգործութեան առիթ մը
գտնելու շատ կ'ուրախանայի ։

ԱՏՈՄ

Ստուգիւ այնպէս է, բարեկամ . . . ։ Թէ որ ես զքեզ
եղբայրաբար չսիրէի, քեզի հօրեղբօրորդի ըլլալու ար-
ժանի չէի ըլլար ։ Մեր տունը բնակած ատենդ տուած
դեղեցիկ օրինակովդ՝ զիս ալ բարւոյ յորդորեցիր ։

ՍԱՀԱԿ՝ Արո՞՞ն Բերանը Գոյելւ՞ ։

Ա՛տոմ, զիս ստուգիւ կ'ամբըցընես . . . Բայց ի՞նչ
ընենք, Գեղամին ընթացքն ու այսօրուան ըրածները
հօրդ իմացընենք ։

ԱՏՈՄ

Ես ալ չեմ դիտեր . . . կը վախնամ որ հայրս շատ
չայլայլի ։

ՎԱՀԱՆ

Լուեըն անկարելի է, խելք չէ ։

ՎԱՐԴԱՆ

Աւասիկ Պր . Տիրան կու գայ ։

Տ Ե Ս Ի Լ Ժ Ի .

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐԸ, ՊՐ . ՏԻՐԱՆ, ՍԱՐԳԻՍ

ՊՐ . ՏԻՐԱՆ՝ Վահանին ու Վարդանին :

Ո՛ր, բարով եկեր էք, սիրելի զաւկըներս . ի՞նչպէս էք :

ՎԱՀԱՆ

Շատ աղէկ, հրամանոցը ծառայելու համար :

ՎԱՐԴԱՆ

Ծնողքնիս հրամանոցը շատ շատ բարեւներ կ'ընեն :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Սիրելիք, ձեր առջեւ կ'ուզեմ սա տղուն (Սարգիսը էր ցոյցընէ) խօսքը լսել : Փողոցին անկիւնը զիս բռնեց, եւ չ'ուզեր թողուլ՝ մինչեւ որ հետս չխօսի : (Սարգսին) Ուրեմն ի՞նչ կայ . խօսէ նայիմ :

ՍԱՐԳԻՍ՝ Արսին ու Սահակին :

Ո՛հ, բարեսիրտ Պարոններս, թողութիւն տուէք . չեմ կրնար լսել եւ մեղք ալ կ'ըլլայ՝ թէ որ ձեր հօրը չգիտնալովն ու իր կամացը հակառակ տուած բաներնիդ պահելու ըլլամ . գիտեմ որ տղաք հօրերնուն կամաց դեմ բան մը չեն կրնար պարզեւել :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Աս աղքատ տղուն հետ ի՞նչ առնելիք տալիք ունիք :

ՍԱՐԳԻՍ

Ո՛հ, մի զայրանաք, Պարոն . . . : (ԶՍահակ ցոյցընէլ) Աս աղնիւ Պարոնը փողոցէն զիս կանչեց որ քնարովս իրենց ընկերութիւնը քիչ մը զուարճացրնեմ : Նոյն ատեն հոս ուրիշ Պարոնիկ մ'ալ կար, բայց կ'երեւայ որ սրիկաներուն գլուխն է :

ԱՏՈՄ

Խօսքը Գեղամին վրայ է :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Որդւոյս :

ՍԱՐԳԻՍ

Ներեցէք, Պարոն, այնպէս յանդգնութեամբ խօսելուս համար . բայց այլազգ ալ չեմ կրնար ընել . . . :

Ես կրցածիս չափ Պարոնները զուարճացրնելէն ետեւ՝
ինձի կտոր մը կարկանդակ տուին, [Ժաշկինակ մը՝ կար-
կանդակը պլլելու, եւ շատ մ'ալ դրամ, այնպէս որ
այնչափ բան երբէք ունեցած չէի:

ՊՐ. ՏԻՐԱՆ

Ե՞տքը:

ՍԱՐԳԻՍ

Ան տղան իմ կարկանդակս կերաւ, որն որ դժբախտ
կոյր հօրս պիտի տանէի. բայց աս բան մը չէ: Անկէ
ետքը հոսկից կ'ելլէ կ'երթայ եւ ես առածներուս հա-
մար ուրախութեամբ գացած ատենս, վրաս յարձակե-
լով՝ քնարս կտոր կտոր կ'ընէ, [Ժաշկինակը բոլոր դրա-
մովս կ'առնէ կը փախչի...: Աւասիկ տեսէք: (Աւուսի
ակտի:) Բոլոր իմ հարստութիւնս, դժբախտ հայրս կե-
րակրելու գործիքս, քնարս...:

ՊՐ. ՏԻՐԱՆ

Ըսածներդ ճշմարիտ են:

ԱՏՈՄ

Հայր, Գեղամին բարքն ու վարմունքը դեղձուկ տղուն
հաւտալ կու տան: Ա'ուզէք նէ՛ աս Պարոններուն հար-
ցուցէք:

ՊՐ. ՏԻՐԱՆ՝ Սարգիսին:

Ո՛րդեակ, դուն մի վախնար, հատուցումդ կ'ընդու-
նիս: Ըսելու բանդ լմնցա՛ւ:

ՍԱՐԳԻՍ

Չէ, դեռ չլմնցաւ. մտիկ ըրէք: Ես բոլորովին ցա-
ւով ու տրտմութեամբ՝ նորէն աս ազնիւ Պարոններուն
դարձայ, եւ... ս՛հ, ինչ բարեսիրտ երիտասարդներ...
իմ վնասս վճարելու չափ դրամ չունենալով, Պարոն-
ներէն մէկն՝ իր ժամացուցին շղթան, ուրիշ մ'ալ՝ իր
ժամացոյցը հանեց տուաւ: (Դուրս կը հանէ:) Բայց ես
չեմ կրնար յանձն առնել, վասն զի անտարակոյս հայրս
կը կարծէ որ գողցեր եմ:... Լսեցի որ քիչ մը ետքը
հրամանքնիդ տուն պիտի դառնայք, եւ աղէկ սեպեցի որ

աս ամէն բան հրամանոցը պատմեմ: . . . Ահաւասիկ առեք: . . . Ո՛հ, քնարս, ա՛հ ողորմելի դժբախտ հայրս . . . :

ՊՐ. ՏԻՐԱՆ

Հիմա կը հաւատամ: — Չեմ գիտեր . . . քո՞ւ վրայ . . . չէ՛ նէ՛ սիրելի ազնուասիրտ զաւկընէրուս վրայ աւելի զարմանամ: Բայց քու ըրածդ աւելի մեծ է: . . . Արտաքոյ կարգի աղքատութեան մէջ, ամենայն ինչ կորսընցուցած ատենն ալ՝ այսպէս անհրաւուր թիւն դործելէն վախնալ. եւ աւելի ուզել հօրը հետ մէկտեղ անօթութենէ մեռնիլ, քան թէ իր պարտուցը դէմ ընել, ստուգիւ մեծ առաքինութիւն:

ՍԱՐԳԻՍ

Ի՛նչ, այնչափ զարմանալու բա՞ն է եղեր անհրաւուր թիւն չընելը. Աստուած կ'ուզէ որ ամէնքը չարիքէ փախչին: Անհրաւուր թիւնը, կ'ըսէին ինձի ծնողքս, երբէք չեյաջողիր: . . . Թէ որ հիմա հրամանքնիդ ինձի բարիք մ'ընել կ'ուզէք նէ, քնար մը դնելով՝ մնասիս տեղը լեցուցէք: Իսկ շղթան եւ ժամացոյցն առեք: (Շղթան ու ժամացոյցը ետ հաւ քայ:)

ՊՐ. ՏԻՐԱՆ

Գուն ու հայրդ պատուական անձինք կ'երեւաք: Արյուսամ որ Աստուած իմ ձեռօքս զձեզ կ'օրհնէ: Չքեզ տունս կը պահեմ. հիմակու հիմա Ատուիս ու Սահակիս ծառայէ. վերջէն կը հոգանք:

ՍԱՐԳԻՍ

Ի՛նչպէս, ան հրեշտակներուն . . . հիմակ ուրախութենէս կը մեռնիմ: (Արո՞թն ու Սահակին յետք էր պահէ . . . : Տրտմութեամբ:) Բայց չէ, չէ, չ'ըլլար. հայրս մինակ թողում, չ'ըլլար . . . ինչո՞վ պիտ'որ ապրի: Ես առատութեամբ վայելեմ եւ հայրս անօթութենէն մեռնի. չէ, չ'ըլլար:

ՊՐ. ՏԻՐԱՆ

Բարեսիրտ տղայ: Հայրդ ո՞վ է:

ՍԱՐԳԻՍ

Ծերունի, կոյր գեղացի մը, որն որ ես իմ քնարովս
կը կերակրեմ: Ստոյգ է որ հացէն ու պանրէն ուրիշ
բան չենք ուտեր, բայց Աստուած օրրատօրական կերա-
կուրնիս կու տայ, եւ երկրորդ օրուանը չենք հոգար,
վասն զի հոգացողն Աստուած է:

ՊՐ . ՏԻՐԱՆ

Լաւ է. հօրդ ալ կ'օգնեմ, եւ թէ որ կ'ուզէ նէ՝
հաստեղի հիւանդանոցը կը դնեմ, ուր որ իր ծերու-
թիւնն՝ աշխարհքիս ամէն տեղերէն աւելի աղէկ կը
հոգան:

ՍԱՐԳԻՍ՝ ուրախութեամբ ու շնորհակալութեամբ ինչ զոհե-
լիքս, Պարոն, Աստուած ձեզի հաղարայատիկ հա-
տուցանէ. . . : Հայրս, դժբախտ հայրս. . . այսպիսի ու-
րախութեան մը չիկրնար դիմանալ: Ես ալ չեմ կրնար
սպասել. . . երթամ, երթամ զինքը հոս բերեմ, սի-
րելի հօրս հոս առաջնորդեմ: (Կը վազէ կ'երթայ: Ատոմ
եւ Սահակ հօրերնուն յետոյ կը համբարեն եւ աչաւնին
կը արբեն:)

ՊՐ . ՏԻՐԱՆ

Ա՛հ, բարի, սքանչելի զաւկըներս. ի՛նչ երջանիկ օր
պիտի ըլլար ինձի այսօր՝ ձեր ազնիւ ու գեղեցիկ զգած-
մանց համար, թէ որ մէկալ որդւոյս ըրածները՝ ուրա-
խութիւնս չպղտորէր: Որդիս. . . չէ, չէ. . . թող դառն
չըլլայ օրս. . . անկիրթ ու չար որդւոյս՝ Գեղամին տեղ՝
զքեզ, Սահակ, պարդեւեց ինձի Աստուած: Եթէ բուն
որդիս չես նէ, գոնէ սրտովդ որդիս ես, եւ բոլորովին
ալ պիտ'որ ըլլաս: . . . Բայց Գեղամ սըր է. գնա, սիրե-
լի Սահակ, մէյ մը նայէ: Եթէ հոս է նէ՝ թող ինձի
դայ: (Սահակ դուրս կ'ելլէ:)

ԱՏՈՄ

Գեղջուկ տղան իր քնարովն ու երգովը զմեզ զուար-
ճացրնելու ատեն՝ Գեղամ կարկանդակն առաւ գնաց,
եւ մեզմէ բաժնուելէն ետքը մէյ մ'ալ չտեսանք:

ՍԱՀԱԿ՝ եր իւր Կարանայ :

Գիմացը շաքարաւաճառին խանութն է : Չթաղէսս
խրկեցի որ կանչէ :

ՊԲ . ՏԻՐԱՆ՝ ասեանն :

Սիրելիք , քիչ մը ներս սենեակս գացէք : Ա՛ռ զեմ
լսել որ Գեղամ ինք զինքն արդարացրնելու համար ինչ
կ'ըսէ : Ահայ պէտք կ'ըլլայ նէ՛ զձեզ կը կանչեմ :

ՎԱՀԱՆ՝ Վարդանին հեր Գիւրգի երե՛ն իւր Կարանայ :

Պարոն , տներնիս երթալու մեզի հրաման :

ՊԲ . ՏԻՐԱՆ

Չէ , սիրելիք , մ'երթաք . այսօր քովերնիս մնացէք .
ես ծնողքներնուդ կ'իմացրնեմ : Ար յուսամ որ աս իրի-
կուն դժբախտ գեղացին իր որդւոյն հետ մէկտեղ մեզի
հիւր կ'ունենանք : Անկիրթ որդւոյս ինծի ըրած վէր-
քերը բժշկելու եւ սիրաս հանդարտեցրնելու համար՝
ինծի քիչ մը սփոփանք պէտք է , եւ կարծեմ թէ նոյնը
ձեր մէջը կրնամ գտնել :

ԱՏՈՄ

Աւասիկ Գեղամ կու գայ : (ՊԲ . Տերան Կարանայ իւր Կարանայ եւ ասեանն ալ ներս կ'երթանն :)

Տ Ե Ս Ի Լ Ժ Գ .

ՊԲ . ՏԻՐԱՆ՝ ասեանն :

Շատնոց այսպիսի գաղտնիքի մը յայտնութենէն կը
վախնայի : Տղու շողոքորթութեանոց մէջ՝ գրեթէ միշտ
փոքր շարութիւններ կը դիտէի . . . : Ափսոս , ափսոս . . .
բայց կրնայ ըլլալ որ դեռ դարման մը գտնուի : Յուսա-
հատուած հիւանդութիւններն՝ արտաքոյ կարգի միջոց-
ներ կը պահանջեն :

Տ Ե Ս Ի Լ Ժ Գ Ի .

ՊՐ . ՏԻՐԱՆ , ԳԵՂԱՄ

ԳԵՂԱՄ

Հայր , ի՞նչ կը հրամայէք :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Ո՞ւր ես , ո՞ւր պահուրտած ես . ինչո՞ւ համար խուցիչ
չես կենար :

ԳԵՂԱՄ

Գաստիարակո տուն չըլլալով եւ Սահակն ալ վար
իջած ըլլալով՝ բոլոր օրն առանձին կենալէն ձանձրացայ
եւ քիչ մը դուրս ելայ :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Բայց Սահակին պէս՝ եղբորդ քով ժողվուած գե-
ղեցիկ ընկերութեան մէջ չէի՞ր կրնար երթալ :

ԳԵՂԱՄ

Հոն էի , հայր . բայց անոնք ինձի հետ այնպէս վա-
րուեցան որ . . . :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Ի՞նչպէս :

ԳԵՂԱՄ

Նախ խահուէ խմեցին , բայց ինձի եւ ոչ կաթիլ
մը տուին . ասկէ զատ՝ ամենայն ինչ ինձի դէմ էր :
Սահակ ճաճբուն վրայ գեղջուկ մը գանելով՝ տուն բե-
րաւ , որն որ զիրենք քնարով ուրախացուց . անոր կար-
կանդակի կտոր մը տուին եւ իրենք ալ կերան , բայց
ինձի չտուին : Ետքը ուրիշ զբօսանքներ ալ ըրին եւ
զիս մէջերնին չառին : Ասոր համար հոս ինչ պիտ'որ ը-
նէի . ելայ վար գրան քով գացի :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Գրան քով : Բայց սա մէկալ փողոցին մէջ գեղջուկ
աղուն հետ ի՞նչ գործք ունէիր : Ինձի պատմեցին որ
գեղջուկը ծեծեր , քնարը կտոր կտոր ըրեր եւ ողորմելի
տղան ողբոց մէջ թողուցեր փախեր ես :

ԳԵՂԱՄ

Այնպէս է. բայց աս ալ գիտնալու է որ եթէ ես բարեսիրտ չըլլայի, ոստիկանութեան մարդ մը պէտք էի կանչել եւ շար տղան քանի մ'որ բանտ դնել տալ: Մտիկ ըրէք: Երբ որ տեսայ որ գեղջուկ տղան տներնէս կ'ելլէ, մտքէս ըսի որ դո՞նէ ես իրեն բան մը տամ, վասն զի գիտէի որ Սահակ ստակ չունի, եւ կարկանդակի կտոր մը՝ այնպիսի աղքատ ողորմելի տղուն օգնութիւն չիկրնար ընել: Ուստի ես քսակէս քանի մը դահեկան հանելու ատեն՝ ան ալ ծոցեն թաշկինակ մը հանեց: Տեսայ որ եղբօրս թաշկինակն է . . . : Միտ դրէք, սիրելի հայր . . . ուզեցի, բայց չտուաւ. քիչ մը կռուելէն ետեւ՝ ըստ պատահման քնարին վրայ կոխեցի . . . :

ՊՐ. ՏԻՐԱՆ

Լռէ, սուտզրոյց. (Բարին-Նեաճի:) ալ չեմ կրնար ինք զինքս բռնել:

ԳԵՂԱՄ

Ինչո՞ւ համար:

ՊՐ. ՏԻՐԱՆ

Լռէ, ըսի, չարագործ: (Մեկաները ներս կը կանչէ:) Եկէք, զակրներս: Իսկ դուն, Գեղամ, դնա առջեւէս . . . կամ կեցիր, եւ վճիռդ մտիկ ըրէ:

Տ Ե Ս Ի Լ Ժ Ե .

ՊՐ. ՏԻՐԱՆ, ԳԵՂԱՄ, ԱՏՈՄ, ՍԱՀԱԿ, ՎԱՀԱՆ
ՎԱՐԴԱՆ

ՊՐ. ՏԻՐԱՆ՝ Սահակին ու Արմին:

Չեղի դէմ ըրած ամբաստանութիւնները լսեցիք:

ԱՏՈՄ

Հրամար էք. ստուգիւ կ'ըսեմ, սիրելի հայր, եւ ոչ խօսք մը կ'ուզէի իրեն դէմ ըսել, որպէս զի ձեր արդամութիւնը չաւելցրնեմ, թէ որ մեր անմեղութիւնը ցուցրնելու համար հարկաւոր չըլլար:

ԳԵՂԱՄ

Խօսքին մի հաւատաք, հայր :

ՊՐ. ՏԻՐԱՆ

Չայնդ քաշէ . . . : Ես յայանի նշաններ ունիմ որ
դուն սուտըրոյց ու խաբեբայ ես : Խօսէ, Ա՛տամ :

ԱՏՈՄ

Ինք կէսօրէն մինչեւ իրիկուն դատարկ կեցաւ եւ
Սահակ անոր թարգմանութիւնն ըրաւ :

ՊՐ. ՏԻՐԱՆ՝ Սահակին :

Ստոյգ է :

ՍԱՀԱԿ

Չեմ կրնար ուրանալ : Եւ ասոր ստուգութիւնը՝
վերը իր դասագրքին մէջ եղած թարգմանութիւնը կը
ցուցնէ :

ԱՏՈՄ

Պարոն Աարդանին զգեստին վրայ խահուէ թափեց,
եւ մենք մաքրելու զբաղած ատեննիս՝ ինք սեղանին
վրայ եղած բոլոր խահուէն խմելով՝ մեզի ամենեւին
չթողուց : Ակաները հոս են : (Մէկ-շէրք էլ ցուցնէ :)
Աարկանդակը . . . :

ՊՐ. ՏԻՐԱՆ

Բաւական է. ալ ցոյց չեմ ուզեր : Գնա, Գեղամ,
դուրս ել. հիմա խուցդ գնա, եւ վաղը անէն ալ կը մեր-
ժուիս : Ուղղուելու համար խիտտ տեղ մը դնել պիտի
տամ զքեզ, եւ թէ որ ուղղութիւն մը չցուցնես, ու-
րիշ տեղեր ալ շատ կան, ուր որ չար եւ անպիտան
տղաք կը դրուին, որպէս զի մարդկային ընկերութիւնն
անոնց շարութենէն ազատի . . . : Սահակ, գնա Թա-
դէոսին ըսէ որ զԳեղամ խցին մէջ աղէկ պահէ. եւ
դատարարակը դալուն պէս՝ ինձի խաւրէ :

ԱՏՈՄ՝ Սահակին հետ յետեղ կ'աղաւտէ :

Սիրելի հայր . . . :

ՍԱՀԱԿ

Ա՛հ, մեծանձն հօրեղբայր . . . :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Եւ ոչ խօսք մը կ'ուզեմ լսել: Աղքատ տղու մը ստակը բռնութեամբ յափշտակել, անոր մի միայն ապրելու միջոցը ձեռքէն հանել եւ նոյն ողորմելի գեղջուկն անամօթ ստերով հալածել ուղողը՝ մարդ բուռելու եւ մարդկային ընկերութեան մասնակից ըլլալու արժանի չէ: . . . Փառք Աստուծոյ որ ուրիշ բարի զաւկրներ ունիմ: (Սահակին ու Աբրահիմն:) Գուք, սիրելիք, դուք պիտ'որ ըլլաք իմ մխիթարութիւնս. աս իրիկուն կ'ուզեմ ձեզի հետ ուրախանալ, այնչափ՝ որչափ որ անպիտան որդւոյս ինծի պատճառած ցաւը կը ներէ:

Տ Ե Ս Ի Լ Ժ . Օ .

ՆԱԽԸՆԹԱՑՆԵՐՆ ՈՒ ՍԱՐԳԻՍ

ՍԱՐԳԻՍ՝ «...»-ի այլայլած ներս ին հոնէ:

Ո՛հ, Պարոն, չէք գիտեր . . . :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Ի՛նչ, դժբախտութիւն մը պատահեցաւ: Մէկը քեզի վնաս մը հասցուց:

ՎԱՐԳԱՆ

Ողորմելի տղան շատ այայլեր է, երեսը գոյն չկայ: Կ'երեւայ ալ որ շատ լացեր է. հիմակ ալ հազիւ ինք զինքը կը բռնէ:

ՍԱՀԱԿ՝ Սարգիսն:

Լուութիւնդ թող, զմեզ ալ անհանգիստ մ'ըներ: Մի վախնար, հօրեղբայրս գթած է, ինչ եւ իցէ բանի մէջ զքեզ անօգնական չիթողուր: Վշտաց մէջ եղողին օգնելն օրէնք է:

ՍԱՐԳԻՍ՝ Լուի:

Ո՛հ, ո՛հ, սիրելի եւ գորովալից Պարոններ, կորսուեցայ . . . կեանքիս կէտը պակսեցաւ . . . բերանս յառաջ չ'երթար . . . :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Աս տղուն դէմքը միայն տեսնելով՝ ես ալ սկսայ
դողալ :

ԱՏՈՄ՝ ՊՐ . ՏԻՐԱՆԻՆ :

Հայր , ինչո՞ւ այնչափ կը շփոթիք , հրամանքնիդ՝
աղքատ տղուն դեռ անյայտ վշտաց համար այնչափ
կ'այլայլեք նէ , մենք՝ գեղջկին եւ հօրերնուս տրամու
թիւնը նշմարելով՝ ի՞նչ ընենք :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Մի վախնաք , զակերներս , ես բան մը չեմ ըլլար .
քաջալերուեցէք , որչափ որ ընելու օգնութիւննիս մեծ
է , այնչափ ալ Աստուծոյ առջեւ կը բարձրանանք , եւ
անկէ առնելու վարձքերնիս շատ կ'ըլլայ : Բայց գլուխդ
ի՞նչ եկաւ , Սարգիս :

ՍԱՐԳԻՍ

Ո՛հ , Պարոն , ալ դեղն ու դարմանն անօգուտ է ,
հայրս . . . սիրելի հայրս . . . :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Ի՞նչ , մէկէն գլուխը կաթուած իջաւ :

ՍԱՐԳԻՍ՝ Լուէն յայնչ իրելով :

Հրամար էք . . . մեռաւ . . . :

ՍԱՀԱԿ

Ի՞նչ կ'ըսես , ի՞նչպէս :

ԱՏՈՄ

Ե՞րբ :

ՍԱՐԳԻՍ

Տուն գացի նէ , կաթուածն արդէն իջած ըլլալով՝
հաղիւ կրցաւ զիս ճանչնալ , եւ անմիջապէս . . . ո՛հ
. . . յաւիտենական հրաժեշտը տուաւ :

ՎԱՀԱՆ

Ա՛յ խեղճ տղայ :

ՎԱՐԴԱՆ

Ստուգիւ ցաւալի բան :

ՍԱՀԱԿ

Բայց ի՞նչ պիտ'որ ընես . աս է ամենուս վախճանը :

ԱՏՈՄ՝ Սարգսին :

Ցաւերդ փարատէ , Սարգիս , շատ մի տրամիր , սիրելի : Հայրս ասկէ ետեւ քեզի ալ հօր տեղ կը բռնէ :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Աղէկ ըսիր , Ա՛տոմ , ամէն բանին չափազանցութիւնը գէշ է : Աշտերդ , Սարգիս , մեղմացընելու ես , որովհետեւ չափէ դուրս ցաւէն ու երկիւղէն՝ հաւատքը կը կորսուի . արտաքոյ կարգի ուրախութենէն ու վատահաւթենէն՝ յանդգնութիւն կը ծնանի : Չափաւորութիւնն ամենէն աղէկն է : . . . Սիրտդ հանգիստ բռնէ . ես գժեղ , ինչպէս ըսի , քովս կ'առնեմ :

ՍԱՐԳԻՍ

Ա՛հ , Պարոն , ստուգիւ ես հրամանոց քով դալով եւ որդիքներնուդ ծառայելով՝ հայր մը կը գտնեմ , սիրելի . . . գորովագութ . . . ինչպէս բացատրեմ . . . բարի հայր մը . . . : (Լալով յետեւ կը պահէ :

ՊՐ . ՏԻՐԱՆ

Չէ , չէ . այսուհետեւ դուն որդւոցս ծառայ չես , որդիներէս մէկն ես : Գեղամին տեղը դուն բռնէ . եւ թէ որ Գեղամ ուղղուելով՝ դարձեալ քովս գայ , դուն ան ատեն աւելի սիրուելու արժանի կ'ըլլաս , վասն զի նախ անոր անկրթութեան ու չարագործութեան յայտնուելուն պատճառ եղար եւ ետքն ալ անոր ուղղութեան օրինակ եղած կը սեպուիս :

Յ Ո Ւ Յ Ա Կ

Ա. ԳՐԻԳՈՐ, կամ Բարեպառուցիչն	. . .	105
Բ. ՎԱՍԱԿ, կամ Անիծեալ Ընտանիք	. . .	129
Գ. ԳԵՂԱՄ, կամ Անկիրթ արու Օրինակ		195

ՀՀ Ազգային գրադարան



NL0693379

ՀՀ Ազգային գրադարան



NL0693380

ՀՀ Ազգային գրադարան



NL0693381

3

ՀՀ Ազգային գրադարան



NL0693382

2

ՀՀ Ազգային գրադարան



NL0693383

